



Ոգի-Նաիրի
Vogi-Nairi

Nikola Đuretić
Almanah smrti i nestanja

Prevela s engleskog na armenski -
Lilit Ghazaryan

Nikola Đuretic
The Almanac of Death and Disappearance

Translation from the English version
into Armenian - Lilit Ghazaryan

Vogi-Nairi, Stepanakert

Նիկոլա ԳՈՒՐԵՏԻՉ

**ՄԱՀՎԱՆ ԵՎ ԱՆՀԵՏԱՑՄԱՆ
ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Թարգմանությունն անգլերեն տարբերակից՝
Լիլիթ ՂԱԶԱՐՅԱՆԻ

Ստեփանակերտ 2022

ՀՏԳ 821.163.42-32 Գուրետիչ
ԳՄԳ 84(4Խոր)-44
Դ 982

«Գեդարմ» հանդեսի մատենաշար

Նիկոլա ԴՈՒՐԵՏԻՉ

Դ-982 **Մահվան և անհետացման ժամանակագրությունը/Նիկոլա Դուրետիչ**
Թարգմ. անգլերենից՝ Լիլիթ ՂԱԶԱՐՅԱՆ:
Ստեփանակերտ, «Ոգի-Նաիրի» հրատ., 2022, 136 էջ:

Խորվաթական ժամանակակից գրականության ճանաչված դեմքերից մեկի՝ Նիկոլա Դուրետիչի գիրքը բաղկացած է տասը պատմվածքից, որոնցում հեղինակը բացահայտում է այն ուղիները, որոնց միջոցով որոշ լավ պահպանված գաղտնիքներ (քաղաքական, սոցիալական, բարոյական և այլն) ի հայտ են գալիս ամենապատահական ձևերով: Հեղինակը քննում է, թե ինչպես են հիշողությունն ու մոռացությունը ազդում մարդու վրա, ինչպես են առաջին հայացքից անկարևոր թվացող իրադարձությունները ստիպում անհատին գնալ որոշակի ճանապարհով: Գրողի համար առանցքային հարցն այն է, թե ինչին է ում կարելի է վստահել ի վերջո:

Republika
Hrvatska
Ministarstvo
kulture
i medija
Republic
of Croatia
Ministry
of Culture
and Media



The publication of this book is supported by a grant from the Ministry of Culture and Media of the Republic of Croatia.

Գրքի հրատարակմանը դրամաշնորհով աջակցել է Խորվաթիայի Հանրապետության մշակույթի և ԶԼՄ-ների նախարարությունը:

ISBN 978-9939-1-1464-4

ՀՏԳ 821.163.42-32 Գուրետիչ
ԳՄԳ 84(4Խոր)-44

© Nikola Đuretic

© «Ոգի-Նաիրի» (թարգմանության համար), 2022

*Խավարի մեջ քայլող ժողովուրդը
մեծ լույս տեսավ.
մահվան ստվերի երկրում
բնակվողների վրա լույս ծագեց:*

Եսայիա 9:2

*Ամեն մի մարդու մահը
թուլացնում է ինձ,
քանի որ ես մի մասնիկն եմ
Մարդկության:*

Ջոն Դոնն

ՀԻՊԱՏԻԱ ԿԱՄ ԺԱՍՆԱԿԻ ՎՐԵԺԸ

Բարի համբավ վայելող *Բրիտանիկա հանրագիտարանի* ութերորդ հրատարակության մեջ նշված է հետեւյալը. «Հիպատիան մեկն է նրանցից, ում անուններն ավելի շատ փառավորվում են ոչ թե արժանիքներով, այլ՝ սխալներով. եւ եթե նա չմահանար, այսօր քչերը կիմանային, եւ գուցե միայն քչերին հետաքրքրեր, թե արդյո՞ք նա երբեւէ ապրել է»:

Հաջորդիվ, սակայն, մի պատմություն է, ավելի ճիշտ՝ հնուց եկած մի վարկած, որի նշանակությունը եւ հետեւանքները լիովին պարզ չեն: Բայց ակնհայտ է, որ պատմությունը, որը ես պատրաստվում եմ պատմել, ստույգ պատմական աղբյուրների վրա հիմնված չէ, սակայն, հույս ունեմ, այն ոչ չոր, եւ ոչ էլ բացառիկ է:

Ինչպես հիշատակվում էր պատմության մեջ, նա նեոպլատոնական փիլիսոփայության դպրոց հիմնեց քրիստոնեական Ալեքսանդրիայում, եւ մ.թ. 415 թվականին, խռովությունների ժամանակ անհնազանդ ամբոխի կողմից դաժանաբար սպանվեց:

Հետեւյալ պատմության մեջ ես կփորձեմ փոխանցել այն, ինչի մասին միայն ակնարկվում է պատմական գրավոր արձանագրություններում, կամ այն, ինչը պարզապես հանվել է: Ճշմարտությունը չի վնասվի, սակայն որոշ տեղեր այն կընդունի տարբեր, ինչ որ տեղ փոփոխված ձեւ, անսպասելի, մի քիչ հակիրճ, թեւ, ըստ էության, ոչ անթերի պատմական փաստերի վրա հիմնված: Անշուշտ, պատմվածքի հավաստիությունը, որ ներկայացնելու եմ, այս թերահավատ ժամանակներում, երբ դժվար է տարբերակել ընդհանուր կամ հավերժական ճշմարտությունները, վստահելի է միայն այնքանով, որքան որ դրա համար գործածված բառերը, գրի առնվածներն ու արձանագրությունները, եւ դա, կհամաձայնեք, այս օրերին քիչ է գնահատվում: Հետեւաբար, այն, ինչը հաջորդելու է, վեր է ցանկացած խենթությունից, մի խաղ, որ ոմանք լուրջ են ընդունելու, իսկ մյուսները՝ ոչ այնքան: Ինչ վերաբերում է այլոց, որոնք միշտ ներկա են, եւ մշտապես ցանկանում են խաղի կանոններ սահմանել, ինչն ինքնին պարադոքս է, ես չեմ ցանկանում նրանց ներառել, քանի որ այս պատմությունը նրանց ի նկատի չունի, թեւ, անշուշտ, սրանից ինչ-որ դաս կքաղեն, եթե պատրաստ լինեն ըստ թողնել սեփական

կանոնների կուրացնող սահմանափակումներն ու սահմանված կարգերը, բայց միայն մի պահ:

Ինչ էլ որ լինի, եկեք տրվենք այս պատմությանը, ընկղմվենք դրա մեջ՝ ինչպես գետի մեջ, եւ թող որ այդ ջրերը տանեն մեզ:

Ծաղիկ գեղեցկության եւ պտուղ իմաստության

Եթե չեմ սխալվում, այն ամենը, ինչ մենք գիտենք Հիպատիայի մասին, մի քանի նույնքան անվստահելի, բանավոր փոխանցված պատմությունների հետ միասին, մեզ է հասել Գիբոնի եւ Թեոդորետի հեղինակած աշխատություններից: Բայց, ի վերջո, սա է մեր ողջ պատմության ճակատագիրը, ոչ միայն այն, ինչը գրի է առնվել, այլ նաեւ մի քանի այլ գրվածքներ, որոնք արտացոլված են մերօրյա եւ հետագա իրադարձությունների մեջ՝ որպես հիշողություն երազի կամ մղձավանջի:

Դեռեւս իր վաղ պատանեկության տարիներին Հիպատիան դասեր էր առնում իր հորից, ով մաթեմատիկոս էր ու փիլիսոփա, եւ լինելով չափազանց լուսավոր ու տաղանդավոր երեխա, նա բավականաչափ արագ ու առանց ջանքերի ամեն ինչ յուրացրեց: Իսկ երբ նա դասի չէր, այդ ժամանակ նրա պատանեկան հետաքրքրությունը նրան տանում էր Ալիսկանդարիայի ավագուտ լողափները, որտեղ անբռնազբոսիկ կերպով տրվում էր միջերկրական արեւին, որ ամեն ինչ պատել էր ոսկու բարակ հեղուկ շղարշով՝ ավազը, ծովի մակերեսույթն ու երիտասարդ աղջկա երեսի գույնը: Եւ այսպես, Հիպատիան դեռեւս վաղ պատանեկությունից օժտված էր ոչ միայն բարձր գիտելիքներով, այլեւ չափազանց գեղեցիկ էր, եւ անկախ նրանից, թե ինչ է ասվում պատմության մեջ, պիտի լիներ նրա նզովքը, բայց ոչ երջանկության աղբյուրը: Նրա հայրը՝ Թեոնը, ով նույնպես կարկառուն անհատականություն էր, հպարտանում էր իր դստեր գեղեցկությամբ ու տաղանդով, թեւ նա չէր էլ կարող պատկերացնել, թե ինչ սարսափելի ճակատագիր էր պատուհասելու նրան՝ այդ երկու հատկանիշների պատճառով:

Մոտավորապես 395 թվականին Հիպատիան արդեն մաթեմատիկայի ու փիլիսոփայության ասպարեզում ճանաչված փորձագետ էր եւ դասախոսություններ էր կարդում Աթենքում ու Ալեքսանդրիայում: Նրա ճարտասանությունը, հազվագյուտ համեստությունն ու գեղեցկությունը՝

զուգորդված նրա բացառիկ մտավոր կարողություններով, գրավում էր մեծաթիվ հետետորդների ու աշակերտների, սակայն ավելի ուշ մենք կհանդիպենք նաեւ մի շարք գայրացած թշնամիների:

Եթե Սուդա հանրագիտարանի տվյալները ստույգ են, ապա մոտավորապես այդ ժամանակ Հիպատիան դարձավ Ալ-Իսկանդարիայում նեոպլատոնական փիլիսոփայության դպրոցի ղեկավար եւ հրատարակեց իր աշխատությունները, որոնց թվում նշանակալի են Դիոֆանտոսի թվաբանության եւ Պտղոմեոսի աստղագիտական կանոնների վերաբերյալ նրա մեկնաբանությունները: Թեեւ այդ աշխատությունները կորսվեցին ժամանակի հորձանուտում, այնուհանդերձ, դրանց վերնագրերը մեզ հայտնի դարձան նրա ամենանշանավոր աշակերտներից եւ հետետորդներից մեկի՝ Սինեսիոս Կյուրենացու հետ նամակագրության շնորհիվ, ով նամակագրական կապի մեջ էր Հիպատիայի հետ *աստրոլաբիու հիդրոմետրի* ստեղծման խնդիրների կապակցությամբ: Նրա *Էպիստոլե* աշխատությունում Հիպատիային ուղղված մի նամակ կա, որի մասին պատմության մեջ ոչ մի հիշատակում չի արվում:

«Ծաղիկ գեղեցկության եւ պտուղ իմաստության, շատերը հրապուրվեցին Ձեր գեղեցկությամբ, իսկ Ձեր գիտելիքները շատերին էին ամաչեցնում, շատերի համար Ձեր խոսքերը օրենք էին, մյուսների համար՝ ոգեշնչման աղբյուր, շատերը խոնարհվում էին Ձեր առաջ՝ որպես գիտելիքի, արժանավորության ու ճշմարտության իդեալի, եւ ես շնորհակալ եմ ճակատագրին, որ ինձ բախտ վիճակվեց նրանցից մեկը լինել»: Բայց մինչ գեղեցկությունը ոմանց մոտ սեր ու հարգանք է արթնացնում, մյուսների մոտ այն նաեւ նախանձի աղբյուր է, ճիշտ այնպես, ինչպես գիտելիքը՝ մինչ ոմանց մոտ հարգանք ու պարկեշտություն է արթնացնում, մյուսների մոտ այն դառնում է ստելության ու նախանձի աղբյուր: Իժերի բույն կարելի է գտնել ևույնիսկ ամենակարծր ժայռերի տակ: «Մոլախոտերն ամենաքաղցրն են բուրում, եւ ևույնիսկ կապիկների համար ամենահյութեղ միրգը կարող է մարդու համար թունավոր լինել: Զգուշացեք կեղծ ժպիտներից, հնազանդ ու խոնարհ ծառաներից, ովքեր իրենց թիկնոցի տակ դաշույն են թաքցնում, նրանցից, ովքեր գիտեն մի ճշմարտություն, եւ արհամարհում են մյուսներին, զգուշացեք մարդկանցից, որոնք թաքնվում են ասկետիզմի, էրեմիտիզմի եւ անսասան հավատքի սավերում»:

Թեեւ այս տեքստի հեղինակը չի նշում այն մարդու անունը, ում վե-

րագրված են մեջբերված եւ ուղղակի ակնարկները, ինչը զգուշավոր մարդու եւ թրծված քաղաքական գործչի հատկանիշներից է, այնուհանդերձ, այդ ամենը մատնացույց է անում մի մարդու, ում մահից հետո Թեոդորեոնը հետեւյալ գրառումը պիտի աներ. *«Մնաց միայն այն վախը, որ նա ահավոր չար ու անցանկալի հյուր կլինի սույնիսկ Դժոխքում, եւ որ նա կարող է վերադառնա այս աշխարհ»*: Հիշատակված անձը Կիրիլ Ալեքսանդրացին է՝ իժերի իժը, ով, սակայն, պատմության մեջ մտավ որպես սուրբ, ինչը միայն հաստատում է, որ վերջին հաշվով նրա հետեւորդներն ու սկզբունքները հաղթեցին՝ առաջին հերթին հարկադրանքի եւ բռնության մեթոդների շնորհիվ, որոնք գործադրվեցին իրենց վստահող զոհերի նկատմամբ:

Բայց, ինչ վերաբերում է կիրառված մեթոդներին, այդ մասին ավելի ուշ կհիշատակվի:

Նախ մի երկու խոսք այն մարդու մասին, ումից, ինչպես թվում էր, անգամ Սատանան էր վախենում:

Դառը թշնամի

Ժամանակակից հանրագիտարանները Կիրիլ Ալեքսանդրիացուն այսպես են բնութագրում՝ քրիստոնյա աստվածաբան եւ եպիսկոպես, որը 5-րդ դարում հանդիսանում էր քրիստոնեաբանական բարդ հակասությունների գլխավոր դերակատարը: Նա Կոստանդնուպոլսի եպիսկոպոս Նեստորիոսի դեմ վեճում առանցքային դեմք էր համարվում: 1882 թվականին Հռոմի Կաթոլիկ Եկեղեցին Կիրիլին եկեղեցու դոկտորի կոչում շնորհեց, մի կոչում, որը վերապահված էր միայն այն սրբերին, որոնց դոկտորիները հատուկ նշանակություն եւ ազդեցություն ունեին: Կիրիլը Ալեքսանդրիայի եպիսկոպոս դարձավ իր հորեղբոր՝ Թեոֆիլոսի մահից հետո՝ 412 թվականին, երբ նա, համաձայն իր ծայրահեղ ուղղափառ ուսմունքի, մրցակցում էր քաղաքի քաղաքացիական իշխանությունների հետ: Նա նաեւ ներգրավված էր Ալեքսանդրիայից իրեաների արտաքսման գործում, որը հանգեցրեց անկարգությունների, ինչի արդյունքում Կիրիլը (առնվազն ժամանակավոր կամ՝ իբրեւ թե) հարկադրված էր ընդունել քաղաքացիական իշխանություններին: Այնուամենայնիվ, իր աշխատություններում Գիբոնը հակասական շեղումներով էր լու-

Նիկոլա ԴՈՒՐԵՏԻՉ

սաբանում պատմությունը, ասես նա միեւնույն անձնավորությունը չէր, եւ կարծես պատկանում էր երկու տարբեր աշխարհների: Եվ այսպես, ըստ Գիբոնի, Կիրիլը միանգամայն տարբեր անձնավորություն է ներկայանում՝ այսպիսով որոշ չափով փոխելով պատմության իմաստն ու նշանակությունը:

Մեծանալով իր հորեղբոր՝ Ալեքսանդրիայի արքեպիսկոպոս Թեոֆիլիուսի տանը, պատանի Կիրիլն իր առաջին ուղղափառ դասերն առավ, ոմանք նույնիսկ կարող էին ասել՝ կարգապահութուն սահմանելու համար անմարդկային դաժան դասեր, առաջադրանքի իրականացման ու նաեւ ուժի գործադրման բուռն ցանկություն ղեռնու վաղ պատանեկության շրջանում, մարմնական պատժի կողքին, որը նույնպես արտասովոր մեթոդ չէր, այնպես որ, երբ նրան ուղարկեցին Նիտրիայի վանք, որտեղ նա պետք է անցկացներ իր մանկության հիևզ ճգնաժամային տարիները, ապշեցրեց ուսուցիչ Սերապիոն պատրիարքին՝ անխուճ ու անվերապահորեն նվիրվելով ուսմանը: Ասում են, որ ընդամենը մեկ անքուն գիշերվա ընթացքում նրան հաջողվել էր ուսումնասիրել չորս ավետարանները եւ կորնթացիներին ու հռոմեացիներին ուղղված նամակները:

Նիտրիանի վանքում գտնող Սերապիոնի մյուս աշակերտներին, ում նա տաղանդավոր ու աշխատասեր էր համարում, այդ արդյունքին հասնելու համար յոթ օր ու գիշեր էր հարկավոր՝ չհաշված նրանց ավելի նվազ աշխատասիրությունն ու եռանդը: Երիտասարդ Կիրիլը ծայրահեղությունների էր դիմել ոչ միայն Աստվածաշունչ ուսումնասիրելու եւ հոգեւոր տանջանքների թելադրանքով, այլեւ անգերագանցելի էր, երբ հաճախ մոլեռանդ կրքով իրեն նվիրում էր սեփական մարմնի ինքնախարագանմանը, մի անոթ, որը նա դիտում էր որպես մոլի ցանկասիրությունների ու մեղքերի աղբյուր: Եվ այսպես, ըստ տեղեկությունների, մի օր նրան գտան իր խցում՝ կատարյալ խելագարված եւ ուժասպառ՝ աղոտ լուսավորված սենյակի ողորկ պատերի տակ մի անկյունում, հասարակ սանդալե խաչի ներքո ձկնի իջած: Մի անգամ, երբ նրան բարձրացրին ճոճոացող, կոպիտ փորված մահճակալի վրա, նկատեցին թարմ արյան բարակ շիթը, որ հոսում էր նրա ձկններից մինչեւ կոճերը: Այն տեղը, ուր Կիրիլը ձկնել էր մինչեւ այդ պահը, պատված էր կոտրված խեցեկույտերով՝ դանակների պես սուր՝ միախուլված Կիրիլի կաշվից ու մսից եւ ամրացված նրա արյամբ:

Դա առաջին դեպքն էր, երբ Սերապիոն պատրիարքը, ինչպես ինքն

Եր կարծում, Կիրիլի վարքագծի մեջ բացահայտեց մոլեռանդության պարզորոշ նախանշաններ եւ որոշակի անսովոր ատելություն: Նա նշում էր, կամ այդպես էր կարծում, որ բռնակալի ստեղծման առաջին սերմերը հենց այդտեղից էին սկիզբ առնում: Այնուամենայնիվ, Կիրիլի մանկության այս սարսափելի դրվագներից մի շարք տարրեր էական նշանակություն ունեն մեր պատմության համար, քանի որ դրանք հետագայում նորից են ի հայտ գալու, եւ որոնց վրա այս պահին ես կցանկանայի ուշադրություն հրավիրել: Նախեւառաջ, պետք է հաշվի առնել Կիրիլի ատելությունը մարմնական, վավաշոտ երեւոյթների հանդեպ, եւ նրա՝ իր մարմինը տանջալի, գրեթե անտանելի դաժան խոշտանգումների ենթարկելու պատրաստակամությունը:

Երկրորդ հանգամանքը, որ պետք է հաշվի առնել եւ ինչն, անտարակույս, դրոշմվել էր Կիրիլի հիշողության մեջ, կոտրատված խեցիկների սրությունն էր, որը հետագայում բախտորոշ դեր էր ունենալու կամ մահվան պատճառ էր հանդիսանալու մեր գլխավոր եւ դժբախտ հերոսուհուն՝ Հիպատիայի կյանքում: Բայց այդ մասին՝ ավելի ուշ:

Հայտնի էր, որ Կիրիլը արհամարհում էր Օրիգենեսի ստեղծագործությունները, հատկապես նրա հակադրական տեսությունը Հին Կտակարանի մի շարք տարբերակների վերաբերյալ՝ Հեքսապլա վերնագրի ներքո ժողովված, մինչդեռ նա միշտ ձեռքի տակ էր պահում Կլիմենտի, Դիոնիսիոսի, Աթանասիոսի եւ Բասիլիոսի գործերը: Հուսով եմ՝ նույնիսկ այս մանրամասները կարող են օգնել ուշադիր ընթերցողին Կիրիլի վերաբերյալ օգտակար եզրահանգումներ անել: Այնուամենայնիվ, ավելի հստակ եւ ուղիղ եզրակացություն կարելի է անել նրա ընկերներից մեկի խոսքերի հիման վրա, ով ասում էր, որ թեեւ Կիրիլը ջերմեռանդորեն աղոթում ու ծով էր պահում Նիտրիայի վանքի մենաստանում, նրա մտքերն ավելի շատ կենտրոնացած էին աշխարհիկ բաների եւ վանքի պատերից դուրս գտնվող աշխարհի վրա, ուստի այս փառասեր ճգնավորը չափազանց գոհ էր իր հորեղբոր՝ Թեոֆիլոսի հրավերից եւ վճռականորեն ու աներկբայորեն միացավ քաղաքներում ու սինոդներում /ժողովներում/ տեղի ունեցող իրադարձությունների գլխապետույտ խառնաշփոթին:

Իր հորեղբոր օգնությամբ ու աջակցությամբ Կիրիլը շուտով ձեռք բերեց հմուտ հոետորիի համբավ եւ ժողովրդականություն, ով ամբիոնի մոտ իրեն ավելի շատ զգում էր ինչպես՝ ձուկը ջրում: Նա հաճախ էր

Նիկոլա ԴՈՒՐԵՏԻՉ

պանծանում տաճարի կամարների տակ հնչող իր ձայնի ռեզոնանսային հնչյուններից՝ ակներեսաբար ուշադրություն չդարձնելով ունկնդիրների արձագանքներին, քանի որ ևս այդ ամենին հետեւելու իր մարդիկ ունէր. ռազմավարորէն տեղակայվելով համախմբվածների շարքերում նրանց խնդիրն էր ամէն հարմար պահի ծափահարել, կամ բարձրածայնել իրէնց համածայնությունը կամ, այլ կերպ ասած, կառավարել ամբոխների արձագանքները: Դատելով մինչ օրս պահպանված ճեպագիր արձանագրություններից՝ Կիրիլի ելոյթները չափվում են արթնացի կայացած հռետորների ճառերով, առկազն՝ ինչ վերաբերում է ելոյթների արձագանքներին, բայց ոչ այնքան, եթէ դիտարկելու լինէնք նրանց ոճը կամ դրանց բովանդակությունը: Այնուամենայնիվ, հստակ է, որ զանգվածների սրտաբուխ ծափահարությունները ջանադրաբար *օրկեստրացված բեմելներ էին*: Երիտասարդ Կիրիլի քաղաքական ու աստվածաբանական կարիերան նույնպէս շատ բծախնդրորէն էր բեմադրված: Հետեւաբար, միանգամայն տրամաբանական է թվում, որ փառասեր եղբորորդու բոլոր հույսերն իրականացան Թեոֆիլոսի մահից հետո: Ուշագրավ է նաեւ այն փաստը, որ Թեոֆիլոսը կյանքից շուտ հեռացավ եւ հանկարծակի: Կասկածներ էին տարածվում, որ ևս թունավորվել է, թէեւ նրա մահվան իրական պատճառն այդպէս էլ չպարզվեց:

Սակայն եկեք այս պահին մի կողմ դնէնք վարկածներն ու կենտրոնանանք տարեգրություններում փաստագրված իրադարձությունների եւ հետագա սերունդներին հասած արձանագրությունների վրա:

Ալեքսանդրիայի հոգեւորականությունը պառակտված էր: Բանակը եւ զորավարները հարում էին Պատրիարքին, բայց հավատացյալների մի ստվար զանգված, նախապէս իրէնց առաջնորդի կողմից ջանասիրաբար պատրաստված, հարում էին իրէնց ախոյանին: Եվ այսպէս, երեսունինը տարեկան հասակում Կիրիլը նստեց Աթանասիոսի գահին: Ինչպէս նշում են մատենագիրները՝ «դա նրա փառասիրությանը համարժէք մրցանակ էր»:

Հրեաների հալածանքը

Դատարանի ազդեցությունից դուրս Կիրիլին ոչինչ չէր կարող կանգնեցնել՝ հսկայական ու հարուստ քաղաքի հովվապետին, Ալեքսանդրիայի պատրիարքին, ինչպես ինքն իրեն անմիջապես կոչեց, իշխանությունը զավթելուց եւ տեղական վարչակազմի ու ամբողջ պետության վրա լիազորություններ գործարկելուց հետո: Պետական եւ մասնավոր բոլոր հաստատությունները գտնվում էին նրա տիրապետության ու վերահսկողության ներքո: Նա շարունակում էր իր ելույթներով մանիպուլացնել ժողովրդին՝ երբեմն հույզեր բորբոքելու համար, իսկ երբեմն էլ՝ դրանք հանդարտեցնելու: Սակայն ուժը չեն ճանաչում, եթե այն չես ցուցադրում ամենօրյա ռեժիմով: Այն նման է կարմիր գինու՝ ինչքան շատ ես խմում, այնքան ավելի ես պապակում անհագ ծարավով:

Կիրիլի բոլոր հրամանները կուրորեն իրականացվում էին նրա բազմաթիվ եւ մոլեռանդորեն հավատարիմ պարաբոլանիների միջոցով, որոնք ամեն օր սովոր էին բռնության ու մահվան տեսարանների: Չնայած եգիպտական պրեֆեկտները դատապարտում էին քրիստոնյա քահանայապետերին, որոնք, ինչպես կարծում էին տեղական իշխանությունների ներկայացուցիչները, միայն ժամանակավորապես էին զավթել հրամայելու իշխանությունը, այնուհանդերձ, նրանք բացարձակապես ոչինչ չէին կարող անել՝ կանխելու իշխանության չարաշահումն ու հասարակ ժողովրդի հանդեպ վատ վերաբերմունքը: Նպատակ ունենալով հնարավոր բոլոր միջոցներով վերացնել այն ամենը, ինչ նա համարում էր հերետիկոսություն, Կիրիլ Ալեքսանդրիացին իր կառավարումը սկսեց նովատացիներին վտարելուց, որոնց անդամները, ինչպես հիշատակվում է Գիբնի աշխատություններում՝ «աղանդներից ամենաբարեգութն ու ամենանվտանգն էին»: Ինչպես Կիրիլը կասե՛ր՝ «եթե ատամների խրեւ ամենաթույլերի մեջ, դրանից հետո նրանց վախը մնացածը կանի»:

Անհավատների մեջ Աստծո վախը մտցնելու հատուկ հանձնարարությունը, թեեւ պաշտոնապես դրան այլ անվանում էր տրվում՝ լուսավորում, կույրերին ճիշտ ուղու վրա դնելու գործ կամ քրիստոնեության տարածում, շնորհվեց Կիրիլի պարաբոլանի առաջնորդ Ամմոնին՝ իր կուռքի մոլեռանդ հետեւորդին, ով երբեք կասկածի տակ չէր դնում կարգադ-

Նիկոլա ԴՈՒՐԵՏԻՉ

րությունները, եւ նրա կարգախոսն էր՝ «արա այն, ինչ պատվիրում են եւ երբեք ոչինչ մի հարցրու»: Ասում էին, որ ինքը՝ Ամմոնը, կիսով չափ հրեա էր, ճիշտ է՝ հայրական կողմից, ով լքել էր ընտանիքը, երբ Ամմոնը դեռ երեխա էր եւ հաստատվել էր արեւելքում: Հենց դա էր հրեաների նկատմամբ նրա խորը ատելության եւ Կիրիլ Ալեքսանդրիացու կերպարանքով իդեալական հոր կերպարի՝ նրա մոլուցքի հիմնական պատճառը: Ըստ որոշ տեսությունների՝ Ամմոնն իր անունը ստացել է ի պատիվ ամմոնիտների (հին սեմիտիկ ժողովուրդ, որ սերել է Աստվածաշնչյան Ամմոնից): Հին կտակարանում այս ժողովրդին անվանել են «Ամմոնի որդիներ»: Ամմոնացիների կենտրոնը Ռաբբա կամ Ռաբաթ-Ամմոն քաղաքն էր: Հին ժամանակներում ամմոնացիները պատերազմել են իսրայելացիների դեմ, եւ մ.թ.ա. 6-րդ դարում նրանք իրենց ուժերը միավորեցին Սիրիայի եւ այլ երկրների ժողովուրդների հետ, որպեսզի հալածեն իսրայելացիներին, որոնք փորձում էին վերականգնել Երուսաղեմի տաճարը Բաբելոնից գաղթելուց հետո:

Այնուամենայնիվ, հարկ է նշել, որ այս տեսության համար ստույգ ապացույցներ չկան: Սակայն դրա վավերականությունն այդ փաստից չի նվազում: Ըստ որոշ այլ մատենագիրների եւ թարգմանիչների՝ մոխրի տակ թաղված եւ անցյալ ժամանակների բորբոսի շղարշով ներկված որոշ հաստատված արձանագրություններով Ամմոնի ծագումն անհայտ է. նրան ընդունել էին Նիտրիանի ճեմարան՝ որպես որբ՝ Սերապիոն պատրիարքի բարության եւ բարեգթության շնորհիվ, որի մեծահոգությունը, ինչպես հետագայում մենք կտեսնենք, կպարզեատրվի միայն դառը պտուղներով:

Թեեւ հրեաները, ընդհանուր առմամբ մոտ քառասուն հազարը, սկզբունքորեն պաշտպանված էին Կեսարի եւ Պտղոմեոսի օրենքներով ու կանոնակարգով, որոնք յոթ հարյուր տարեկան էին, այնքան հին, որքան Ալեքսանդրիա քաղաքն էր, իրականում նրանք գտնվում էին «Ալեքսանդրիայի եպիսկոպոսի» ողորմածության ներքո, ով սինագոգի /շենք, որտեղ հրեա ժողովուրդը հավաքվում է կրոնական երկրպագության եւ ուսուցման համար/ վրա հարձակման ժամանակ առաջնորդում էր պարաբոլանիների կատաղի զանգվածը՝ առանց պրեֆեկտի հրամանի:

Ճակատագրական այդ օրը՝ լուսաբացին, Կիրիլը կանչեց Ամմոնին ու նրա կատաղած գայլերին եւ նրանց գլխին քարոզ կարդաց, որից հետո, ինչպես ասվում է, նրանք արյունոռուտ աչքերով ու սրեր ճոճելով

նետվեցին դեպի Ալեքսանդրիայի փողոցները: Կիրիլի պահպանված գրառումների մեջ այդ ճառի մասին որեւէ ծանուցում չկա, եւ մնում է միայն ենթադրել, թե այդ առիթով ինչ էր նա ասել իր հավատարիմ հետեւորդներին: Սակայն դրանք այդ գործի վերաբերյալ միայն անհարկի շահարկումներ կդիտվեն: Ուստի մենք կկենտրոնանաք այն ուժերի վրա, որոնց իսկությունը միշտ ավելի հեշտ է ստուգել՝ մի շարք փոքրիշատե հայտնի աղբյուրների հիման վրա: Պատմականորեն փաստագրված այդպիսի մի աղբյուր է հանդիսանում կրկին Սինեսիոս Կյուրանացու ձեռագիր արձանագրություններից մեկը՝ որպես ականատեսի վկայություն, դժգոհության կամ մեղադրական եզրակացության պես, որը Ալեքսանդրիայի պրեֆեկտ Օրեստեսն ուղարկեց Թեոդոսիոս Կրտսեր կայսրին: Ես ամբողջությամբ մեջբերում եմ Սինեսիոս Կյուրենացու կողմից արված այս հայտարարությունը.

«Ես շարադրում եմ պաշտոնական այս հաղորդագրությունը անկողնուց, բայց հույսով, որ դուք այն կստանաք առողջ վիճակում: Իմ դեպքում, ավաղ, մարմնի թուլությունը միայն հոգեւոր տեսական տառապանքի շարունակությունն է: Ես տառապում եմ իմ քաղաքի տվայտանքներից, քանի որ ամեն օր ես տեսնում եմ թշնամու զորքերն ու սպանված քաղաքացիների, որոնց զոհաբերում են զոհասեղանին: Ամեն օր ես շնչում եմ նեխած մարմինների ժանտահոտով արատավորված օդն ու սպասում, որ այդ ճակատագիրը կհարվածի ինձ, քանի որ այն ունի բազում այլ հոգիներ: Ինչպե՞ն կարելի է հույսեր փայփայել, եթե երկինքն ամպած է գիշատիչ թռչունների ստվերներով: Այնուամենայնիվ, անգամ նման իրավիճակներում, ես սիրում եմ իմ երկիրը: Որովհետեւ ես լիբիացի եմ, այնտեղ ծնված ու մեծացած, եւ իմ պատվավոր հայրերի գերեզմաններն այստեղ են:

Ինչ վերաբերում է Կիրիլ Ալեքսանդրիացուն, կարող եմ միայն ասել, որ նա այս քաղաքի ժանտախտն է, մի արարած, ով խախտում է օրենքը, երբ ցանկանում է: Նա նույնիսկ դրանից ավելի լլկտի է: Իր պարաբոլանիով նա զավթում է այն, ինչ սիրտը կամենա, իսկ հոտո մեջբերում է օրենքը: Եթե, այնուամենայնիվ, վճիռը նրա դեմ լինի, նա ուժ կկիրառի եւ հափշտակածը կպահի:

Ես ապրում եմ մի քաղաքում, որտեղ որոշ մարդիկ օրենքից ավելի զորեղ են, եւ սա անտանելի է: Ուստի ես կոչ եմ արել ամենապատվավոր մարդկանցից մի քանիսին ականջ դնել իմ կոչին եւ միավորել ուժերը՝

օրենքը բարձր պահելու համար: Եթե այս մարդն իր ստոր մտադրություններով պիտի հաջողի, ապա շատ շուտով այստեղ բազմաթիվ Կիրիլ Ալեքսանդրիացիներ կլինեն: Մեծարգո Օրեստեսը լիովին կհսում է իմ մտահոգությունները:

Եվ որպեսզի Կիրիլի նմանների վերջը գա, ես սա Օրեստեսի միջոցով ուղարկում եմ ձեզ, ազնիվ ու իմաստուն Թեոդոսիոս, այս թախանձանքը, եւ աղաչում եմ՝ ձեր ուժերի սահմաններում անել հնարավոր ամեն ինչ՝ Կիրիլի պես մեղսավոր ու ապականված արարածի առաջն առնելու, ով օրենքի դեմ օրենք է կիրառում, իսկ երբ իր նպատակին չի հասնում, իր կամքով ու բռնի ուժով օրինազանցում է՝ թաքնվելով եկեղեցու ու հավատքի քողի տակ: Ինչ վերաբերում է այն հարցին, թե ինչպես պետք է վերջ տալ այս արարածին, ես չեմ, որ պետք է պատասխան փնտրեմ, այլ՝ դուք, որ բոլոր մարդկանց մեջ ամենապատվավորն ու ամենաիմաստունն եք»:

Հայտնի փաստ է նաեւ, որ Կիրիլը նույպես գրել էր Թեոդոսիոս Կրտսեր կայսրին: Սակայն այս պատմության համար շատ ավելի կարելու է այն, ինչը նշված չէր այդ նամակում: Լսելով, որ Օրեստեսը պատրաստվում է ստորագրել մի հրամանագիր, որը սատարելու է դերասանների ներկայացումներն ու մնջախաղերը, որոնք լայնորեն տարածում էին գտել հասարակ ժողովրդի շրջանում եւ գրավում էին հսկայական թվով մարդկանց, Կիրիլը որոշեց իր լրատու Հիերաքսին ուղարկել՝ նշված հրամանագրի բովանդակությունը գաղտնի բացահայտելու: Սակայն, երբ ամբոխը պարզեց, որ Հիերաքսը նրանց մեջ է, ապստամբություն բռնկվեց: Քանի որ շատերն էին պնդում, թե Կիրիլը Հիերաքսին ուղարկել է իրենց հրահրելու նպատակով, Օրեստեսին այլ բան չէր մնում, քան բռնել լրատուին եւ հրապարակային խոշտանգման ենթարկել՝ ճշմարտությունը բացահայտելու նպատակով, ինչպես նաեւ հանդարտեցնելու ապստամբության հրահրված ամբոխին եւ ցույց տալու Կիրիլին, թե ով իրավունք ունի կառավարելու:

Իրադարձությունների զարգացումից դժգոհ Կիրիլը նամակ գրեց կայսերը, որում նա պնդում էր, թե հրեաները մշտապես հալածել ու սպանել են բազմաթիվ քրիստոնյաների: Նա որոշել էր վտարել երկրից մեծ թվով հրեաների, թեւ գիտեր, որ դրանով նա գերազանցելու է իր լիազորությունները եւ նսեմացնելու է պրեֆեկտ Օրեստեսի ազդեցությունը:

Օրեստեսի քարկծումն ու Ամմոնի մահապատիժը

Միաժամանակ, Կիրիլը սուրհանդակ է ուղարկում Նիտրիանի վանք՝ խնդրելով վանականների օգնությունը: Երբ նրանք ժամանում են, նա վանականներին համոզում է, որ Ալեքսանդրիայի ժողովրդին ապստամբության դրդեն ընդդեմ Օրեստեսի: Ռա նրանց համար նոր բան չէր, քանի որ տասնհինգ տարի առաջ նրանք այդ նույն արել էին Կիրիլի հորեղբոր՝ Թեոֆիլոսի դեմ, եւ դա դժվարություն չէր, քանի որ Կիրիլը նախկինում սովորել էր հենց իրենց հոգեւոր սեմինարիայում: Նիտրիայի վանականները Օրեստեսին մեղադրեցին հեթանոս՝ անհավատ լինելու մեջ եւ, հաջորդաձ ցնցումներից մեկի ժամանակ, Ամմոնը՝ Կիրիլի պարաբոլանիների առաջնորդը, օգտվելով առիթից, քար նետեց Օրեստեսի վրա: Քարը դիպավ նրա գլխին, եւ Ալեքսանդրիայի պրեֆեկտի մոտ միանգամից առատ արյունահոսություն սկսվեց: Վախենալով, որ իրենք նույնպես կարող են հարձակման ենթարկվել, Օրեստեսի պահակախումբն իր կյանքը փրկելու համար փախուստի դիմեց եւ կարելի էր միայն կռահել, թե հետագայում, Կիրիլի ծարգրերի համաձայն, ինչ կլիներ, եթե Ալեքսանդրիայի քաղաքացիներն օգնության չհասնեին Օրեստեսին եւ չպաշտպանեին նրան՝ ձերբակալելով Ամմոնին եւ վտարելով Նիտրացի վանականներին:

Ապաքինվելուց հետո Օրեստեսը հրամայեց, որ Ամմոնին իր հանցագործությունների համար հրապարակայնորեն տանջեն: Եվ այդպես էլ արեցին: Միայնակ ու անգոր, լքված անգամ իր կուռքի եւ ուսուցչի կողմից, Ամմոնը ենթարկվեց կտտանքների եւ իր մահկանացուն կնքեց Ալեքսանդրիայի կենտրոնի ամֆիթատրոնում, որտեղ հավաքվել էին բազմաթիվ ականատեսներ:

Չկարողանալով հաշտվել այն փաստի հետ, որ իրեն չէր հաջողվել տիրել իր ամենամեծ ախոյանին, այլ, ընդհակառակը, մնացել էր առանց իր լավագույն ընկերոջ եւ պարաբոլանիների առաջնորդի, Ամմոնի խոշտանգումների եւ մահվան լուրը ստանալուց հետո Կիրիլը որոշեց նրա մարմինը տեղափոխել եկեղեցի եւ անունը գրել նահատակների ցուցակում, թեեւ, ինչպես Ալեքսանդրիայի քաղաքացիների մեծ մասը, նա շատ լավ գիտեր, որ Ամմոնին մահապատի էին ենթարկել իր գործած հանցանքների եւ ոչ թե հավատքի համար:

Նիկոլա ԴՈՒՐԵՏԻՉ

Սակայն Կիրիլը չկարողացավ մարտել պարտությունը: Նա ի զորու չէր ընդունելու նաեւ այն փաստը, որ Օրեստեսն ու Հիպատիան ընկերներ ու համախոհներ են, եւ ժողովրդի մեջ տարածված ասեկոսների համաձայն՝ անգամ ավելին: Այդ բոլոր ասեկոսները նրան այդքան չէին վրդովեցնի, ոչ էլ մեծ ուշադրություն կդարձներ, եթե Հիպատիան այդքան մեծ քաղաքական ու մշակութային ազդեցություն չունենար հասարակության վրա, քանի որ շատ հարգված ընտանիքների երեխաներն այս նշանավոր գիտնականի եւ փիլիսոփայի աշակերտներն էին, եւ հետագայում նրանք բարձր պաշտոններ զբաղեցրին հասարակության մեջ եւ եկեղեցական շրջանակներում: Հետեւաբար, նոր մարտավարություն էր անհրաժեշտ՝ Օրեստեսին հակահարված հասցնելու եւ կռապաշտուհուց ազատվելու համար, ով իր բոլոր մեղքերից բացի, նույնիսկ գերծ չմնաց աշխարհիկ իշխանության ներկայացուցչի հետ հրապարակավ սիրախաղ անելուց:

Պատեր քաղելով անցյալից եւ մարդկանց Օրեստեսի դեմ հանելու ձախողումից Կիրիլը հասկանում էր, որ հետագայում կարող է ապավինել միայն իր հավատարիմ նիտրացի վանականներին ու անձնվեր պարաբոլանիներին, ովքեր չէին ներել Օրեստեսին Ամմոնի մահապատժի համար:

Սպանություն մեծ պահջին

415 թվականին Պահքը համընկավ մարտ ամսին: Պասի օրերն արդեն սկսվել էին: Պատրիարք Կիրիլ Ալեքսանդրիացին տեսական ժամանակ փորձում էր իր հետետորդ ու ողբացյալ ընկերոջը՝ Ամմոնին, փոխարինող գտնել: Թեեւ Նիտրիայի վանականների մեջ դժվար էր գտնել մի մարդու, ով նույնքան կուրորեն հավատարիմ էւ մոլեռանդ կլիներ, որքան Ամմոնն էր, այնուհանդերձ, նա կարծում էր, որ նման բան նկատելի է երիտասարդ աշակերտ Պետրոսի մոտ, հատկապես երբ նա տեսավ, թե ինչպես էր նա պատժում իր մարմինը՝ ծնկի իջնելով ջարդված խեցիների վրա ճիշտ այնպես, ինչպես նա անում էր իր երիտասարդ տարիներին Նիտրիանի ճեմարանում: Ալեքսանդրիայի պատրիարքը գիտեր, որ շուտով իր կանխագուշակումները փորձարկելու հնարավորություն է ընձեռնվելու:

Կիրիլն արդեն որոշ ժամանակ էր ծախսել՝ փորձելով համոզել տարբեր հավատացյալների, որ պատրիարքի եւ Հռոմեական կայսրության պրեֆեկտ Օրեստեսի միջեւ հաշտության հասնելու գլխավոր խոչընդոտը մի կին է, ով հրապուրել էր երիտասարդ պրեֆեկտին իր կանացի հմայքով ու առինքնող մարմնով, եւ ով իր սատանայական հնարքներով գայթակղել էր բազում այլ հավատացյալների: Նա ստիպված չէր դրանում Պետրոսին բացահայտ համոզել, եւ այդ գիտակցումը նրա մոտ նոր հույսեր ծնեց: Եւ երբ նրան լուրեր հասան, որ զայրացած սիրտացի վանականները տունդարձի ճանապարհին կանգնեցրել էին Հիպատիայի կառքը, նա գիտեր, որ իր պարաբոլանիին եւ սիրտացի վանականներին առաջնորդում էր իր նոր ընկերն ու հետետորդը, իր աշակերտ Պետրոսը: Նրա սպանության մանրամասները, որ պատմում էր սուրհանդակը, միայն ջերմացնում էին նրա սիրտը եւ էլ ավելի բարձրացնում նրա տրամադրությունը: Քազազած ամբոխը դուրս էր քաշել Հիպատիային կառքից, պատռել նրա զգեստները եւ, որպեսզի ստորացնեն նրան, մերկացնելով քարշ էին տվել քաղաքի փողոցներով մինչեւ Կեսարիայի եկեղեցի, որտեղ նրա մարմինն ածելու պես սուր ոստրե խեցիներով ծվատել, որից հետո ողջ-ողջ այրել էին:

Փորձելով անհագորեն պատկերացնել Օրեստեսի արձագանքն այս նորությանը, Ալեքսանդրիայի պատրիարքն այսպես դիմեց ներկաներին. «Այս պահից աշխարհիկ եւ եկեղեցական իշխանությունների միջեւ հաջող համագործակցության բոլոր խոչընդոտները վերջապես վերացան»:

Վերջաբան կամ՝ ժամանակի վրեժխնդրություն

Որեւէ պատմվածքի սխալականությանը, այդ թվում եւ՝ պատմական տվյալների, ինչպես նշել էի պատմվածքի սկզբում, նպաստում են երկու աղբյուրներից վերցրած տեղեկությունները, որոնք նկարագրում են միեւնույն իրադարձությունը՝ Հիպատիայի վախճանը, սակայն երկու բոլորովին տարբեր ձևով եւ երկու հակասական եզրահանգմամբ: Այստեղ են մեջբերում եմ երկուսն էլ:

Հիպատիայի սպանության հետեւյալ նկարագրությունն է հայտնվում հինգերորդ դարում, Սուկրատես Միսոլաստիկոսի կողմից գրչված եկեղեցական պատմության վեցերորդ գլխում.

«...Այնուամենայնիվ, ևույնիսկ ևս դարձավ այն ժամանակ տիրող քաղաքական ևսխանձախնդրության զոհը: Քանի որ ևս հաճախ հանդիպումներ էր ունենում Օրեստեսի հետ, քրիստոնյաների շրջանում չարախոսում էին, որ հենց ևս էր խանգարում Օրեստեսին հաշտվել եպիսկոպոսի հետ: Դա էր պատճառը, որ ևրանցից ոմանք՝ դաժան ու մոլեռանդ, Պետրոս անունով մի պարագլխի առաջնորդությամբ, կտրեցին ևրա տունդարձի ճամփան և, իր կառքից դուրս քաշելով, տարան Կեսարեում կոչվող եկեղեցին, որտեղ ևրան ամբողջովին մերկացրին, այնուհետև սայիկներով ու ոստրեններով սպանեցին: Որից հետո ևրա մարմինը կտոր-կտոր անելով՝ խեղված վերջույթները տարան Ցինարոն կոչվող վայրն ու այրեցին... Եվ, անշուշտ, ոչինչ չի կարող քրիստոնեական ոգուց այնքան հեռու լինել, ինչքան ևմանօրինակ ջարդերի, կոիվների և գործարքների թույլտվությունը: Սա տեղի ունեցավ մարտ ամսին, Մեծ Պահքի ժամանակ, Կիրիլի եպիսկոպոսության չորրորդ տարում...»

Սյուն կողմից, իր ժամանակագրություններում՝ 84.87-107-ում, Նիկիոի եպիսկոպոս Հովհաննեսը յոթերորդ դարում հիշատակում է հետևյալը.

«Եվ այդ օրերին Ալեքսանդրիայում հայտնվեց մի կին փրիխտփա, մի հեթանոս՝ Հիպատիա անունով, և ևս ամբողջ ժամանակ տարված էր մոգությամբ, աստղագուշակությամբ ու երաժշտությամբ, և ևս շատերին մոլորեցրեց իր սատանայական հևարքներով: Իսկ քաղաքի տիրակալը ևրան շատ էր պատվում, քանի որ ևրան ոյութել էր իր մոգությամբ: Եւ ևս դադարեց եկեղեցի հաճախել, ինչպես սովորաբար անում էր... Եւ ևս ոչ միայն դա արեց, այլև շատ հավատացյալների իր կողմը քաշեց և անհավատներին իր տանն ընդունեց: Եւ օրերից մի օր, երբ ևրանք թատերական ներկայացումներից մեկի ժամանակ զվարճանում էին պարողների վրա, քաղաքի կառավարիչը մի հրովարտակ հրապարակեց՝ Ալեքսանդրիայի հանրային ցուցադրությունների վերաբերյալ, երբ քաղաքի բոլոր բնակիչներն այնտեղ էին հավաքված: Այժմ Կիրիլը, ով Թեոֆիլոսից հետո պատրիարք էր ևշանակվել, ձգտում էր ստույգ տեղեկություններ ձեռք բերել՝ այդ հրամանագրի հետ կապված: Եվ այնտեղ Հիերարքս անունով խելացի ու բանիմաց մի քրիստոնյա կար, ով ձաղրում էր հեթանոսներին, սակայն եղել էր վեհափառ հայրապետի հավատարիմ հետետորդը և հևազանդորեն կատարում էր ևրա հրահանգները: Եւ ևս ևս քաջատեղյակ էր քրիստոնեական հավատքին: (Այժմ այդ մարդը

մտնում է թատրոն՝ իմանալու հրովարտակի բովանդակությունը): Սակայն երբ հրեաները նրան տեսան թատրոնում, աղաղակեցին ու ասացին. «Այս մարդն այստեղ լավ նպատակով չի եկել, այլ զուտ եկել է խժոժություններ հրահրելու համար»: Նաեւ Օրեստես պրեֆեկտն էր դժգոհ սուրբ եկեղեցու հետետորդներից, եւ Հիերաքսին բռնեցին ու հրապարակային պատժի ենթարկեցին թատրոնում, չնայած նա կատարյալ անմեղ էր: Եվ Կիրիլը զայրացավ քաղաքի կառավարչի վրա՝ այդպես վարվելու համար, ինչպես նաեւ այն բանի համար, որ նա մահապատժի ենթարկեց Նիտրիայի վանքի՝ Ամնոն անունով հայտնի վանականին եւ այլ վանականների: Ու երբ քաղաքի պատրիարքը լսեց սա, նա հրեաներին դիմեց՝ ասելով. «Վերջ տվեք քրիստոնյաների հանդեպ ձեր թշնամանքին»: Բայց նրանք հրաժարվեցին անսալ նրան, քանի որ նրանք հպարտանում էին պրեֆեկտով, ով մշտապես աջակցում էր նրանց, եւ այսպես վիրավորանքը վիրավորանքի վրա ավելացնելով՝ դավաճանական միջոցներով ջարդ ծրագրեցին: Եվ նրանք գիշերը քաղաքի փողոցներում հրենց մարդկանց համախմբեցին, իսկ այդ ընթացքում նրանցից ոմանք աղաղակում ու գոչում էին. «Աթանասի առաքելական եկեղեցին կրակի ճիրաններում է, օգնության ձեռք մեկնեք, քրիստոնյանե՛ր»: Եվ քրիստոնյաները, լսելով նրանց աղաղակները, դուրս եկան՝ բոլորովին անտեղյակ հրեաների դավադրությունը: Իսկ երբ քրիստոնյաները դուրս եկան, հրեաները հայտնվեցին ու կոտորեցին նրանց եւ շատերի արյունը թափեցին, թեւ նրանք անմեղ էին: Իսկ առավոտյան, երբ ողջ մնացած քրիստոնյաներն իմացան հրեաների կատարած չարագործությունների մասին, նրանք զնացին պատրիարքի մոտ: Եվ բոլոր քրիստոնյաները համախմբվեցին ու ցատումով լի երթով զնացին դեպի հրեաների ժողովարաններն ու տիրեցին դրանց, մաքրեցին ու վերածեցին եկեղեցիների: Եվ նրանցից մեկին անվանակոչեցին Սուրբ Գեորգի անունով: Իսկ հրեա մարդասպաններին նրանք վտարեցին քաղաքից եւ կողոպտեցին նրանց ողջ ունեցվածքը... եւ Օրեստես պրեֆեկտն ի գորու չէր նրանց որեւէ օգնություն ցույց տալ: Դրանից հետո Աստծո հավատացյալների մի բազմություն հայտնվեց՝ Պետրոս աշակերտի առաջնորդությամբ,- այժմ այս Պետրոսը բոլոր առումներով անվերապահորեն հավատում է Հիսուս Քրիստոսին,- եւ նրանք շարունակեցին փնտրել հեթանոս կնոջը, ով խաբել էր քաղաքի ժողովրդին ու պրեֆեկտին՝ իր կատարյալների միջոցով: Ու երբ նրանք իմացան նրա գտնվելու վայրը,

Նիկոլա ԴՈՒՐԵՏԻՉ

գնացին նրա մոտ ու գտան նրան՝ պերճաշուք աթոռին բազմած, եւ նրա վրա հարձակվելով՝ քարշ տվին դեպի Կեսարիոն կոչվող եկեղեցի: Ղա Պահքի օրերին էր: Եվ նրանք պատռեցին նրա հագուստն ու քարշ տվին... քաղաքի փողոցներով, մինչեւ որ սա մահացավ: Եվ նրան տարան Յինարոն կոչվող մի վայր եւ նրա մարմինը կրակի մեջ նետեցին: Եվ շրջապատեց ողջ ժողովուրդը պատրիարք Կիրիլին ու նրան անվանեց «նոր Թեոֆիլոս, քանի որ սա մաքրեց քաղաքը կռապաշտության վերջին մնացորդներից»:

Այդպես էր վկայում Նիկիոսի եպիսկոպոս Հովհաննեսը*:

* Ես կարող է սխալվեմ, բայց կարծում եմ, որ տվյալ տեղեկատվությունը կարեւոր նշանակություն ունի այս պատմության համար, քանի որ այն հավելյալ լույս է սփռում վերջին մատենագիր Հովհաննեսի աշխատության ու նկարագրի վրա: Սա արձանագրվել է, եւ մենք որեւէ պատճառ չունենք կասկածելու նրանց, ովքեր դա այդպես են մատենագրել: Եգիպտոսի ընդհանուր միաբանության կառավարչի եւ Նիկիոսի եպիսկոպոսի կենսագրության մեջ նշվում է հետեւյալը. «Պատժելով մի վանականի, ով բարոյական անթաքույց մեղք էր գործել, այնքան ծանր, որ սա մահացավ տասն օր անց, Սիմեոն պատրիարքը նրան երկու պաշտոններից էլ գահընկեց արեց, եւ կրկին ուղարկեց սովորական քահանաների կարգին միակալու»:

ԼՈՒԻՉԱ ՏՐՅՈՒՔՍՈՒՆ ԵՎ ԳՐՈՒԿՈՒՄ

Հիմք ընդունելով աշխարհի ստեղծումից ի վեր մարդկանց կյանքի տարբեր ժամանակաշրջանները, ջրհեղեղից հետո, որ փրկիչն ինքն ուղարկեց աշխարհ եւ դրան հաջորդած հրաշք ժամանակները, պարոն Դերիամը փաստարկներ է փնտրում՝ աստվածային նախախնամության մասին իր տեսության համար:

Աշխարհի ստեղծումից անմիջապես հետո, այն ժամանակ, երբ երկրագունդը պետք է բնակեցվեր մարդկային արարածներով՝ մի կին եւ մի տղամարդ, կանխանշված տարիքային շեմը՝ ինը հարյուր եւ ավել էր: Ջրհեղեղից հետո, այն ժամանակ, երբ աշխարհը բնակեցված էր մարդկային երեք էակներով, նրանց կյանքի տեսողությունը կրճատվեց, եւ նախահայրերից ոչ մեկը, բացի Սեմից, հիևզ հարյուր տարի չապրեց: Երկրորդ դարում ոչ ոք երկու հարյուր քառասուն տարուց ավել չապրեց, երրորդ դարում, Թարայից բացի, ոչ ոք երկու հարյուր տարին չբոլորեց: Այն ժամանակ աշխարհն այնքան բնակեցված էր մարդկանցով, առնվազն դրա մի մասը, որ նրանք քաղաքներ կառուցեցին եւ բաժանվեցին ազգերի՝ տարածականորեն ուրվազծված, ինչպես եւ հեռավոր ու օտար:

Աստիճանաբար, մարդկանց թվաքանակի աճին զուգընթաց, կրճատվում էր նրանց կյանքի տեսողությունը, այնքան, որ հասավ յոթանասունից մինչեւ ութսուն տարի: Եվ այդպես էլ մնաց մինչեւ Մովսեսի ժամանակները: Դա, ինչպես կարծում են, հարմար միջին է, եւ այդ ժամանակից ի վեր աշխարհը ոչ գերբնակեցված է, ոչ էլ՝ ամայի. կյանքն ու մահը գտնվում են հավասարակշռության ու համաչափության մեջ:

* * *

Այն պահին, երբ ծովահեն եւ ստրուկների վաճառական Հենրի Դեսայինսը թրով սպանեց Լուիզա Տրյուքսոյին, որպեսզի, ոմանց ասելով, նրան ազատի տառապանքներից, կամ, մյուսների պնդմամբ՝ որպեսզի մեկ բերան պակաս ունենա կերակրելու, աստվածային նախախնամությունը, ինչպես պարզաբանել էր հարգարժան պարոն Դերիամը, հար-

Նիկոլա ԴՈՒՐԵՏԻՉ

յուր տարի ավելի ուշ եկավ: Այդ ժամանակ Լուիզան հարյուր յոթանասունհինգ տարեկան էր:

Նա ամփոփված է Տուկոմեայում, եւ գուայական ճյուղերից պատրաստված պարզ խաչի վրա գրված է հետեւյալը՝ Լուիզա Տրյուքսո՝ նեգրուհի:

Դա տեղի է ունեցել 1780 թվականի սոյեմբերի 20-ին: Այդպես էին հիշատակում ազնիվ ու պատվարժան մարդիկ, եւ մենք նրանց չհավատալու պատճառ չունենք:

ԷՅԼԵԱՆ ՍՈՐ ՓԱՐՈՍԻ ԱՌԵԴՇՎԱԾԸ

Մռայլ, անծրեւոտ մի երեկո Ուլապուլ քաղաքում լսեցի Էյլեան Սոր փարոսի մասին առեղծվածային պատմությունը՝ հյուժված մի նավաստուց: Ես անլուծելի այս առեղծվածը, որն աշխարհի ստեղծումից ի վեր անբացատրելի իրադարձությունների եւ տարօրինակ անհետացումների միայն մի փոքր մասն է կազմում, պատմում եմ այնպես, ինչպես որ այն պատմել են ինձ:

Ֆլանան կղզիները գտնվում են Բրիտանական կղզիների վերջնամասում՝ 58.18 աստիճան դեպի հյուսիս եւ 7.36 աստիճան դեպի արեւմուտք, եւ ամենամոտը Լյուիս կղզին է Արեւմտյան կղզեախմբից՝ մոտ քսան մղոն դեպի արեւելք: Դեպի արեւմուտք ձգվում է Ատլանտյան օվկիանոսի ընդարձակ տարածությունը՝ մինչեւ Հյուսիսային Ամերիկայի ափերը: Ֆլանան կղզիները փոքր են, իսկ ամենամեծը՝ Էյլեան Սորը, ավելի քան 160մ երկարություն ունի: Այս կղզիները համարվում են նզովված, Հեբրիդների բնակիչներից շատ քչերն են ժամանակ առ ժամանակ թողնում իրենց ոչխարների հոտը արածելու կանաչապատ Ֆլանան կղզիներում, եւ ոչ ոք չի խիզախի գիշերն անցկացնել այս արգելված վայրում:

Նրանց վախերը, սակայն, չէին կիսում նախկին չորս նավաստները՝ Թոմաս Սարշալը, Տեյմս Դուկատը, Դոնալդ Սաք Արթուրն ու Տոգեֆ Սուրը, որոնք աշխատում էին Էյլեան Սոր լուսաշտարակում՝ յուրաքանչյուր հերթափոխի համար երեք հոգուց բաղկացած անձնակազմով, որը տեւում էր վեց շաբաթ, եւ երկու շաբաթ՝ ծովափին: Երկու շաբաթը մեկ «Հեսպերուս» կոչվող օժանդակող նավը բերում էր նամակների, սննդի եւ խմիչքների նոր պաշարներ ու մի արտոնություն անձնակազմի անդամներից մեկի համար, ով նույն նավով մեկնում էր իր վաստակած երկշաբաթյա հանգիստն անցկացնելու ծովափին:

1900 թվականի դեկտեմբերի 6-ին Տոգեֆ Սուրը պետք է մեկներ իր հանգստին: Երբ «Հեսպերուսի» նավապետը նրան հարցրեց, թե արդյո՞ք նա անհամբեր սպասում է ափ վերադառնալուն, Տոգեֆը միայն գլխով արեց, հայացքը հառելով կղզու կողմն ու մրմնջաց. «Այնտեղ երբեմն գրողի տարած մենակությունն է»: Հետո բանիմաց նախկին ծո-

Նիկոլա ԴՈՒՐԵՏԻՉ

վազնացր, ով սովոր էր մենությանը, ասաց, որ դա էլ կշիռ ունի:

Տոգեֆը կիսար կազմվածքով մարդ էր, չնայած իր տարիքին՝ մկա-
նուտ ու բարեկազմ, փայլփլուն աչքերով, կարմրավուն, զգզված մազե-
րով եւ անհնազանդ մորուքով: Նա հանգիստ խոսող մարդ էր, բայց դա
սովորական գիծ է շատերի համար, ովքեր իրենց կյանքն անց են կաց-
նում բաց ծովում՝ շփվելով մոխրագույն, անհյուրընկալ օվկիանոսի հետ,
որ ժամանակ առ ժամանակ դողդում է լոկ, որպեսզի մեկուսանա իր
սկզբնական ծագման հավերժական անդորրի, տիեզերքի համընդիա-
նուր լուռության մեջ, որը կարծես ասելիք չունի: Նա ամուրի էր եւ փարո-
սից ու իր ընկերներից բացի, որոնք կիսում էին այդ դաժան կյանքը
ամայի կղզում, նա ոչ ոք չուներ, ում հետ կարող էր կիսել իր միայնու-
թյունն ու հանգիստը գառամության ժամանակ: Փարոսը նրանց պաշտ-
պանում էր տարերքներից, եւ նրանք իրենց ժամանակն անց էին կաց-
նում ընթերցելով ու վերընթերցելով հին լրագրերն ու գրքերը, խաղալով
շախմատ կամ դոմինո՝ հայացք սեւեռելով դեպի ակուրասնցիկ տարա-
ծությունը, որը շրջապատում էր նրանց բոլոր կողմերից եւ որտեղ ան-
գամ միտքը չի կարող թափանցել: Այս անջրանցիկ խոնավ օդը նրանց
մեջ արթնացնում էր հիշողություններ, ինչպես բանաստեղծներն են
ասում՝ «երազել անեզր ու անվերադարձ», ինչի մասին նրանք անտեղ-
յակ էին, քանի որ, ի վերջո, այս զգացմունքայնությունը, լիրիզմի այս
տեսակը, միանգամայն խորթ են այտուցված ափերով ծովազնացների
համար, նրանց պարզ ու հասարակ կենսակերպի արձակին, որը, չնա-
յած իր ողջ չբացահայտված գաղտնիությանը, ոչ պակաս իրական եւ ոչ
պակաս ողբերգական է:

Բայց վերադառնանք պատմությանը:

Չարմանալիորեն խաղաղ, թեեւ ամպամած դեկտեմբերի 21-ին Տո-
գեֆ Մուրը երկշաբաթյա արձակուրդից հետո եւս մեկ անգամ բարձրա-
ցավ «Հեսպերուս» նավի վրա: Իրականում, նրա տասնչորսօրյա արձա-
կուրդի ընթացքում, տարվա այդ ժամանակահատվածում եղանակն
անսպասելիորեն մեղմ ու դուրեկան էր, սակայն այն պահին, երբ նավը
դուրս եկավ բաց ծով, մեծ փոթորիկ բարձրացավ, եւ ծովը պղպջաց ու
ռռնաց վիրավոր գազանի նման: Երեք օր «Հեսպերուս»-ը մարտնչում էր
փոթորկի դեմ եւ միայն դեկտեմբերի 24-ին նրան հաջողվեց մոտենալ
Ֆլանան կղզիներին: Մուրն իսկույն նկատեց, որ 140,000 լուսատուներով
փարոսի լամպը չէր վառվում, եւ սկսեց անհանգստանալ, սակայն

եւս երկու օր անցավ, մինչ «Հեսպերուսը» վերջապես հասավ կղզու արեւելյան նավամատույցը: Մուրն անմիջապես վազեց դեպի ափ՝ պարզելու այդ աններելի սխալի պատճառը: Սկզբում նա պարզեց, որ իր ժամանակն համար ոչ մի նախապատրաստություն չէր արվել, ինչը տարօրինակ էր արտաքին աշխարհի հետ շփվելու կարոտ ճգնավորի համար՝ վերջին նորություններն էլ ռուսի թարմ պաշարներ: Կայանատեղիում մթերքների դատարկ տուփեր չկային, նավամատույցի ճոպաններն էլ էին բացակայում: Նավից հնչեցված մի քանի սուր ազդանշանից հետո ոչ ոք դուրս չեկավ: Չարմանալի չէր, որ Մուրն առաջինը ցատկեց ափ: Մուտքի դարպասը եւ գլխավոր դուռը փակ էին, բայց կողպված չէին: Մուրն իր ընկերներին ձայն տալով՝ մտավ փարոսի մեջ: Միակ պատասխանը, որ նա ստացավ, քար լռությունն էր: Նա անմիջապես զգաց սենյակի սառնությունն ու դատարկությունը: Նկատեց, որ բուխարու վրայի ժամացույցը կանգ էր առել: Այնուհետեւ նա կրունկների վրա շրջվեց եւ դուրս եկավ՝ կրկին օգնություն փնտրելով, թե՛ւ չիմանալով, թե՛ ինչու դա արեց: Նա միայն գիտեր, որ միայնակ չէր կարող պայքարել այդ լռության դեմ:

«Հեսպերուսի» նավապետն ու մի նավաստի միացան նրան, եւ այդ երեքն զգուշությամբ վերադարձան դեպի լուսաշտարակ: Կյանքի որբւէ նշան չկար: Ակնհայտ էր, որ փարոսն ամբողջությամբ դատարկ էր, բայց ամեն ինչ կոկիկ շարված էր իր տեղում: Լամպի պատրույզները մաքուր ու կտրած էին, իսկ զազամանները լիցքավորված՝ պատրաստ կրկին վառվելու: Նրանց կողմից կատարված վերջին գրառումը փարոսի տախտակին թվագրված էր դեկտեմբերի 15-ին: Միակ անսովոր բանն այն էր, որ մովաթե հագուստների երեք հավաքածուներից երկուսը եւ երկու զույգ ռետինե անջրանցիկ կոշիկները բացակայում էին: Այդ պահին, թե՛ւ որբւէ լուրջ պատճառ չկար, Տոգեֆ Մուրի համար պարզ դարձավ, որ ինչ-որ անհասկանալի եւ, հետեւաբար, ինչ-որ սարսափելի բան էր տեղի ունեցել: Այնուամենայնիվ, դա ավելի շատ կանխազգացում էր, նախազգուշացում, քան հուշում՝ մնացյալ իրերի կամ իրեղեն ապացույցների վերաբերյալ: Սա այն էր, ինչ նա պնդում էր ավելի ուշ իրականացված նախաքննության ընթացքում, ինչն, ըստ քննիչների, կապ չուներ նախաքննության ընթացքի հետ: Նշվեց նաեւ, որ «Հեսպերուսի» նավաստիները մաքրել էին ամբողջ տարածքը, սակայն ոչ մի եւկան հետք՝ երեք նավաստիների անհետացման հետ կապված,

չէին հայտնաբերել: Այնուամենայնիվ, որոշ տարրեր, որ առնվազն այն ժամանակ թվում էր, թե մատնացույց էին անում նրանց առեղծվածային անհետացման հնարավեր պատճառները, հաստատվեցին: Արեւմտյան նավամատույցը զգալիորեն տուժել էր փոթորկից: Ծովի մակարդակից մոտ քսան մետր բարձրության վրա, բետոնե արահետի վրա մի կոունկ էր կանգնած՝ կախված պարաններով: Այդ պարանները սովորաբար ամրացվում էին ծովի մակարդակից մոտ երեսուն մետր բարձրության վրա գտնվող, պահեստում պահվող գործիքների արկղին: Այդ դեպքում հնարավոր էր, որ մինչեւ երեսուն մետր բարձրացող ալիքներով մոլեգնած փոթորիկը հարվածեր կոզուն, իր հետ տաներ տուփն ու խճճեր պարանները կոունկի շուրջ: Եվ նշանակում էր սա, որ կատաղի ալիքներն այդ երեք մարդկանց դեպի մահ էին տարել: Հետաքննության ընթացքում եկան այն եզրահանգման, որ դրա հավանականությունը քիչ է, քանի որ նման բարձր ալիքները հազվադեպ են պատահում, եւ բացի այդ, փորձառու նավաստիները, որպիսիք են Մարշալը, Դուկատը եւ Մաք Արթուրը, նման փոթորկի ժամանակ երբեք ռիսկի չէին դիմի՝ անպաշտպան վայրեջք կատարելու: Այնուհանդերձ, ենթադրենք, թե իրականում նրանք ռիսկի էին դիմել, այդ դեպքում բոլոր երեք մովաթե հագուստները պետք է որ կորած լինեին: Ավելին, հետաքննության արդյունքում պարզ դարձավ, որ դեկտեմբերի 15-ի գիշերը «Արքտոր» նավը վերջին պահին խուսավարել էր Էյլեան Սորի մահաբեր ժայռերին մոտենալիս: Փարոսը, ըստ «Արքտորի» ականատես վկաների ցուցմունքների, այդ գիշեր չէր լուսավորվել: Այսպիսով կարելի է եզրակացնել, որ փարոսը պահողներն այդ ժամանակ արդեն անհետացել էին: Ինչեւէ, սա քննչական կոմիտեի կողմից արված միակ հավաստի եզրակացությունն էր: Սնաց անպատասխան հարցերի մի ամբողջ շարան: Հնարավոր էր, արդյոք, որ աներեւակայելի կատաղի փոթորիկ առաջացած լիներ միայն Էյլեան Սոր կղզու շուրջ, չնայած այն հանգամանքին, որ այդ շրջանի այլ տեղ փոթորիկ չէր գրանցվել: Արդյո՞ք Դուկատն ու Մաք Արթուրը փոթորկի ժամանակ իջել էին արեւմտյան նավամատույց եւ ծովի մեջ ընկել: Եվ եթե դա այդպես է եղել, ապա ի՞նչ է կատարվել Մարշալի հետ: Այս բոլոր հարցերին պատասխաններ չկան, թեւեւ առկա են բազմաթիվ ենթադրություններ ու վարկածներ: Ամենահայտնի վարկածներից մեկն այն է, որ երեքից մեկը խելագարվել է, սպանել իր երկու ընկերներին, այնուհետեւ ինքնասպան է եղել: Սակայն անզամ այս տեսությունը շատ

թերի է: Կացինները, դանակներն ու մուրճերը չէին օգտագործվել, եւ ինչպես պնդում էր Տոզեֆ Մուրը, նրա երեք ընկերները հանգիստ ու հնազանդ մարդիկ էին: Ի վերջո, առաջ քաշվեց այն վարկածը, որ այդ վայրը նզովյալ է: Առասպելներից մեկի համաձայն, երկար տարիներ առաջ Աստված այցելել էր մի ճգնափորի: Բայց ոչ ոք չգիտեր, թե ինչ կերպարանքով էր Նա հայտնվել: Իսկ Աստծո ինչի՞ն էին պետք հնադարյան երեք նավաստիները: Ինչ էլ որ եղած լինի, իրեղեն ապացույցների բացակայության պատճառով քննությունը բացառեց նաեւ այդ ենթադրությունը:

Եվ այսպես, անկախ այն հանգամանքից, թե իրականում ինչ էր տեղի ունեցել այդ ճակատագրական օրերի ու գիշերների ընթացքում, Էյլեան Մորի քարքարոտ կղզիները մինչ օրս պահում են իրենց մութ գաղտնիքը: Այս անբացատրելի գաղտնիքին, այս վիճելի հանելուկին, հավանաբար, գումարվում է ամենամեծ առեղծվածը՝ փարոսում հայտնաբերված Թոմաս Մարշալի օրագիրը, որը լրացուցիչ անպատասխան հարցեր է առաջ քաշում: Էլ չէ՛նք խոսում ենթադրությունների մասին:

Հետեւյալն էր նշվում.

«Ղեկտեմբերի 12,

հանկարծահաս մրրիկը հյուսիս-արեւմտյան ուղղությամբ ներս է թափանցում: Ծովը մոլեգնում է: Ես երբեք նման փոթորիկ չեմ տեսել: Չափազանց բարձր ալիքներ: Դրանք մոլեգնահար զարնվում են լուսաշտարակին: Սնացած ամեն ինչ կարգին է: Դուկատը բորբոքված է երեւում»:

Առաջին անգամ այս գրառումը կարդալուց հետո «Հեսպերուսի» նավապետն ու Տոզեֆ Մուրը տարակուսանքով իրար նայեցին: Մասնավորապես, նույն օրը՝ դեկտեմբերի 12-ին, ընդամենը քսան կամ մտասուկոր այրքան մղոն դեպի արեւելք՝ Լյուիս կղզում, նման փոթորիկ չէր նկատվել: Ավելին, օրն անսովոր հանգիստ էր՝ տարվա այդ եղանակի համար: Դուկատի պահվածքի վերաբերյալ արված մեկնաբանությունները եւս տարօրինակ էին:

Հաջորդ օրը՝ կեսգիշերին մոտ, նավի գրանցամատյանում գրանցվել էր հետեւյալը. *«Փոթորիկը շարունակում է մոլեգնել: Զամին անդադար ոռնում է: Մեզ չի հաջողվում դուրս գալ: Մի նավ անցնելով՝ մատախուղի շշակի ձայնը հնչեցրեց: Մենք կարողացանք տեսնել նավի խցիկի լույսերը: Դուկատը հանգստացել է: Մաք Արթուրը լացում է»:*

Նիկոլա ԴՈՒՐԵՏԻՉ

Եվ կրկին, Մուրն ու Լավապետը հարցական հայացքներ են փոխանակում: Ի՞նչն կարող էր ստիպել ձեր ծովագայլ Դոնալդ Մաք Արթուրին լաց լինել: Նա ժայռի պես պինդ էր, եւ Մուրը չէր հիշում, որ երբեւէ նրան արցունքների մեջ տեսած լիներ:

«Դեկտեմբերի 13

Ամբողջ գիշեր մորիկը կաղկանձել ու կոծել է: Քամին փոխել է ուղղությունը եւ այժմ փչում է հյուսիս-արեւմուտքից: Դուկատը հանգիստ է: Մաք Արթուրն աղոթում է»:

Գրեթե անհնար է հավատալ: Մեկ օր առաջ Մաք Արթուրը լաց էր լինում, իսկ այժմ նա աղոթում է: Ակնհայտ է, որ սարսափելի ինչ-որ բան էր տեղի ունեցել: Բայց ի՞նչ: Գրանցամատյանի հետեւյալ գրառումն ավելի մեծ զարմանք առաջացրեց.

«Կեսօր է: Օրը մռայլ է ու մառախլապատ: Մենք երեքով աղոթում ենք»:

Պաշտոնական հետաքննության ընթացքում Տոգեֆ Մուրը կտրականապես ու բացահայտորեն շեշտեց, որ իր ընկերներից ոչ ոք, ըստ իր տեղեկության, նախկինում երբեք սովորություն չունեին աղոթելու: Քիչ հավանական էր, որ փոթորկի վախը նրանց դրդեր իրենց սրտում կտրուկ փոփոխություն անել, քանի որ ծովում անցկացրած երկար տարիների ընթացքում նրանք բազմաթիվ դժբախտությունների ու փոթորիկների միջով էին անցել: Գրանցամատյանում վերջին գրառումը թվագրված է դեկտեմբերի 15-ին: Նշվում է հետեւյալը.

«Դեկտեմբեր 15,

ժամը 13-ն է. փոթորիկը մեղմացել է: Կատարյալ լռություն է: Հանգստություն է իջել բոլորի վրա եւ ամեն ինչ խաղաղ է»:

* * *

Հետաքննությանը ոչինչ չհաջողվեց հաստատել, եւ 1918 թ., հասուն ձեր տարիքում, մահացավ Տոգեֆ Մուրը՝ թողնելով բազում բաց հարցեր անպատասխան: Այդ առիթով «Գարդիան» բրիտանական օրաթերթն իր մահախոսականներում անդրադարձ է կատարել այդ իրադարձության կապացույթամբ, որը նաեւ հիշատակված է Քիզիլնգի ժամանակակից արխիվներում:

Ես, ինչպես նշել էի առաջաբանում, այս պատմության մասին իրա-

զեկվել եմ Ուլապուլի փաբում ներկա գտնվող մի նավաստուց: Միայն շատ ավելի ուշ, եւ, բոլորովին պատահաբար, պարզեցի, որ այդ պատմությունը պատմող անանուն մարդը ոչ այլ ոք էր, քան «Հեսպերուսի» նավապետի թոռը:

Եվ վերջապես, արժե նշել հետեւյալը, թեւեւ հնարավոր է այն ոչ մի էական նշանակություն չունենա եւ լույս չսփռի այս պատմության վրա, անգամ ընդհակառակը, կարող է քողարկել այն լրացուցիչ իմաստով՝ եւ մեկ շերտ ավելացնելով բազմաթիվ տեսություններին:

Անտիկ դիցաբանության որոշ մեկնությունների համաձայն, Հեսպերոսը կամ Հեսպերուսը, այսինքն՝ Վեսպերը, գիշերային աստղը, Ատլանտի որդին կամ եղբայրն է համարվում: Հետագայում նա Լույնականցվել է Ֆոսֆորի կամ Էոսֆորի հետ, որն ավելի հայտնի է իր լատիներեն անվանմամբ՝ Լյուցիֆեր, որը եղել է առավոտյան աստղի ու իր Աստծո մարմնավորումը: Զրիստոնեական դիցաբանության մեջ, այնուամենայնիվ, ինչպես մեզ հայտնի է, նա դարձավ «ղժոխքի տիրակալը», որի մեջ նա նետվեց Աստծո դեմ ապստամբելու համար:

Այսպիսով, ահա դուք ունեք ամբողջը: Եվ եթե այս պատմությունից որեւէ բարոյախոսություն, ուղերձ, եզրակացություն կամ նման բաներ պետք է վերցվի, ապա դա ցանկացած պատմության երկիմաստությունն է, իմաստի բազմաշերտությունը, բացարձակ ճշմարտության երկդիմությունը, որը, հանգամանքների թելադրանքով, լույսից փոխվում է խավարի, ճշմարտությունից՝ ստի, պատմությունից՝ հեքիաթի եւ հակառակը:

Եվ ուրիշ ոչինչ:

ՆՆՃԵՑՅԱԼՆԵՐՆ ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐ ՉԵՆ ԿԱՐՈՂ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼ

Ամեն անգամ Փարիզ այցելելիս, ես այդ երեք բանը ուղղակի պետք է անեմ: Առաջին՝ այցելել Օրսեի թանգարան եւ դիտել նրա իմպրեսիոնիստական հավաքածուն: Մինչ օրս ես դեռ հիշում եմ այն թրթիռը, որ զգացի, երբ առաջին անգամ մտա այս անհավանական վայրն ու կանգ առա Դեգայի, Մոնեի, Սեզանի կամ Վան Գոգի հիասքանչ գործերի առջեւ, որոնք մինչ այդ միայն գրքերում էի տեսել:

Երկրորդ՝ մի բաժակ թեյ կամ տաք շոկոլադ խմել Լի Դու Մագու սրճարանում եւ հետեւել, թե ինչպես է խաղաղ երեկոյի ընթացքում աշխարհն անցնում Սեն-ժերմենի բուլվարով: Եւ երրորդ՝ նստել Լյուքսեմբերգ զբոսայգու նստարանին եւ համակվել արեւի մեղմ զարնանային կամ աշնանային ճառագայթների լույսով, եւ զեփյուռի, որ Սենի ինչ-որ տեղից քշում-բերում է ջրի թափանցիկ բույրն ու ցրում մեր ճնշող մտքերը՝ տանելով դրանք գաղտնի ու անթափանց հեռուներ: Հավանաբար դա է պատճառը, որ ես միշտ կանգ եմ առնում նույն փոքր, ընտանեկան հյուրանոցում՝ «Սելեքթ»-ում, որը տեղակայված է Դե Լա Սորբոն հրապարակի վրա, քանի որ Լյուքսեմբուրգ այգին գտնվում է հենց անկյունում, եւ Սեն-Միշել ու Սեն-ժերմեն բուլվարներով տասից տասնհինգ րոպե զբոսնելով հասնում ես Սեն- ժերմեն- Պրե եւ Լե-Դու-Մագո եկեղեցի, մոտակայքում է գտնվում նաեւ Օրսե թանգարանը:

1982 թվականի մայիսի 15-ին բացվեց հիասքանչ մի արշալույս, զարնանային չքնաղ մի օր, որն այն ժամանակ, իմ կարծիքով, ու մինչ օրս էլ այդպես եմ կարծում, կարող ես ապրել միայն Փարիզում: Նշեմ, որ կոնկրետ այդ դեպքում ես չէի եկել Փարիզ որպես զբոսաշրջիկ, որ զալիս է զարնանը վայելելու քաղաքի զարմանահրաշ տեսարանները, այլ՝ որպես լրագրող՝ հանձնարարականով: Այսինքն՝ ես BBC-ի լրագրող էի, եւ վավերագրական ծրագրերի խմբագիրներն ինձ ուղարկել էին, որպեսզի, լրագրության արտասովոր ասպեկտներին նվիրված շարքի շոջանակներում, Լյուքթեր հավաքեմ մի փոքրիկ ռադիոհաղորդման համար՝ տխրահուշակ տարեդարձի կապակցությամբ: Թեման ֆրանսիական «Ժորժ Ֆիլիպար» մարդատար նավի բավականին առեղծվածային

խորտակումն էր, որը 1932 թվականին, նավարկության առաջին մեկնարկի ժամանակ, լուրջ վնասներ կրեց՝ ինչ-որ անհասկանալի պատճառով հրդեհվելով, ինչի հետեանքով հիսունից ավել մարդ զոհվեց, այդ թվում՝ մեկ լրագրող: Չնայած հստակ պատկերացում չունեի, թե ինչպես պետք է կազմեի ամբողջական հոդվածը, սակայն գիտեի, որ ինձ հաջողվելու է գտնել փրկվածներից ոմանց եւ արձանագրել այն, ինչ նրանք կարող էին հիշել տասնամյակներ առաջ տեղի ունեցած իրադարձությունից: Այնուամենայնիվ, նախքան իմ հոդվածի վրա աշխատելը, ես մի ազատ օր ունեի, որը մտադիր էի անցկացնել հնարավորինս լավ՝ հաճույք ստանալու այս կախարդական քաղաքի գրավչություններից: Այցելությունը Լյուքսեմբուրգի այգի առաջինն էր իմ ցուցակում:

Ես վաղ արթնացա եւ, մոտակա սրճարանում առույգացնող նախաճաշից հետո, գնեցի ֆրանսիական մի քանի լրագրերի վերջին օրի-նակներն ու գնացի մոտակայքում գտնվող Ժարդին դյու Լյուքսեմբուրգ: Չնայած դեռ վաղ էր, փողոցներում արդեն շատ մարդիկ կային, հիմնականում՝ երիտասարդներ, որոնք շտապում էին Սորբոն եւ ավելի հեռու՝ Փարիզի VI եւ VII Համալսարաններ, զբոսաշրջիկների հետ անբաժան՝ կողքկողքի, ովքեր սագերի պես թափառում էին սովոր խմբերով՝ բարձրաձայն քրքջալով եւ իրենց տեսախցիկներով լուսանկարներ անելով:

Տասը րոպե զբոսնելուց հետո հասա Լյուքսեմբուրգ զբոսայգի եւ անմիջապես արեւի տակ մի դատարկ նստարան գտա: Ես նստեցի եւ առաջին հերթին բացեցի *Le Monde*՝ շտապելով տրվել մեղմ արեւի ճառագայթներին եւ ընթռչնել շագանակենու նորաբողբոջ դալար բույրը: Ես աչքի էի անցկացնում լրագիրը, եռանդով թերթելով էջերը, վերնագրից վերնագիր սահելով, ինչպես դա անում են մարդիկ՝ ինչ որ բան փնտրելիս, մինչեւ որ հանդիպեցի հիսունամյակի կապակցությամբ գրված մի թերթոնի, ինչպես հավանաբար կոահեցիք՝ աղետի մասին, որը պատահեց հսկա «Ժորժ Ֆիլիպար» օվկիանոսային մարդատար շոգենավի հետ, մի նավ, որը երբ 1930 թվականին գործի դրվեց Սեն-Նազերի նավանորոգարանում, աշխարհի ամենաարդիական ու ամենալավ նախագծված նավն էր համարվում: Երկու տարի պահանջվեց այս հսկա՝ տասնյոթ հազար տոննա քաշ ունեցող օվկիանոսային նավը մոնտաժելու համար: Նավը կարող էր օթեանել մինչեւ հազար ուղեւորի, որոնք հնարավորություն ունեին վայելելու այդ ժամանակվա ամենահնարա-

վոր ճոխությունները, իսկ խցիկները հագեցած էին ամենատրակյալ օդորակիչներով: Նավաշինարարները ռեսուրսներ չէին խնայել եւ ուղեորների համար ապահովել էին անվտանգության խիստ միջոցներ, որպեսզի այն համարվի նաեւ հրդեհաշիջման ավտոմատ համակարգով ու ժամանակակից հակահրդեհային սարքավորումներով: Այնուհանդերձ, D տախտակամածի վրա բռնկված հրդեհը, որ եղավ իր ճանապարհորդության առաջին փուլում` դեպի Չինաստան ու հակառակ ուղղությամբ, զարմանալի արագությամբ տարածվեց նավի միջով` խլելով հիսուներեք ուղեւորի կյանք, որից հետո ֆրանսիական մարդատար նավատորմի հպարտությունն ու ուրախությունն անցավ Կարմիր ծովի հատակը:

Մշտական հանձնաժողովը, որն իրականացնում էր «Ժորժ Ֆիլիպարի» հետաքննությունը, ինչպես նշվում է թերթնում, ոչ մի լրացուցիչ ապացույց չգտավ` հավաստելու, որ հրդեհն առաջացել էր էլեկտրական կցամասերի նախագծման անճշտության հետեւանքով, կամ` որ հրդեհը բռնկվել էր հանկարծակի: Այս փութաջան իրականացված հետաքննության արդյունքները ստույգ չէին, սակայն, այնուամենայնիվ, հանգեցրին ինտրիգային մի եզրահանգման, որը, թվում է` մատնացույց էր անում, որ հրդեհի համար պատասխանատու էին միջազգային ազդեցիկ քրեական շրջանականները, որոնք ցանկանում էին այդ մարդատար շոգենավը վերածել լողացող խարույկի` ուղղակի ուղեւորներից մեկին սպանելու համար` ֆրանսիացի հարգարժան լրագրող Ալբերտ Լոնդրեսին: Այս ամենին փոքրիշատե ծանոթ էի նաեւ իմ անձնական հետազոտությունների եւ նյութի շուրջ արձանագրություններ կազմելու իմ նախապատրաստական աշխատանքների շնորհիվ, սակայն, չնայած այդ ամենին, ամբողջ պատմությունը, մեղմ ասած, տարօրինակ ու ինտրիգային էր, քանի որ այն բացեց մեկնաբանությունների եւ հնարավոր բացատրությունների անթիվ դռներ: Եվ այսպես, ես խորասուզվեցի *Le Monde* օրաթերթի ֆելիետոնի մեջ` գաղտնի հույս փայփայելով, որ տողերի արանքից հնարավոր է գտնեմ այս ամեղծվածի բանալին` մի նոր տարրի ակնարկով, որը կարող էր հանգեցնել այս գաղտնիքի ավելի հստակ պարզաբանմանը, անգամ եթե դա կատարվում էր հիսուն տարի անց: Ինչպես ասացի, ես այնքան խորասուզված էի ընթերցանության մեջ, որ նույնիսկ չնկատեցի, թե ինչպես տարեց, փոքր-ինչ կորացած, բայց դեռ ժիր ու եռանդուն ութսունամյա մի մարդ` լուրջ, խոժոռ աչքերով, նստեց իմ կողքին: Նկատեցի, որ, թեեւ հաճելիորեն տաք օր էր, նա

կրում էր ֆրանսիական բերետ, եւ երկար անձրեազգեստի տակից՝ սվիտեր: Ձեռքին բռնել էր թանկարժեք, գեղեցիկ զարդարված մի ձեռնափայտ՝ ցատկող առյուծի կերպարանքով՝ արծաթե բռնակի վրա: Նկատեցի նաեւ, որ կաշվե ձեռնոցներ էր կրում: Գուցե ես նրան անզամ չնկատեի, եթե նա խոսակցություն չսկսեր:

- Ներեցե՞ք, թաքուն չեմ ուզում նայել, սակայն տեսնում եմ, որ կարողում եք «Ժորժ Ֆրիլպար» աղետի մասին ֆելիետոնը,- ասաց նա խոպոտ, ծերունական ձայնով, որը լիովին հակասում էր նրա արտաքինին, բայց ինչը մատնում էր նրա տարիքը:

-Այո, թերեւս սա է Փարիզ իմ այցելության նպատակը... աղետի տարիցիցը: Ես լրագրող եմ եւ ռադիոհաղորդում եմ պատրաստում հիսուն տարի առաջ տեղի ունեցած այդ իրադարձության մասին: Ես նախատեսում եմ գրուցել փրկվածներից մի քանիսի հետ,- ասացի ես՝ հայացք ձգելով նրա ձախակողմյան պրոֆիլին, այնուհետեւ անցա ֆելիետոնին: Նա մի տեսական ժամանակ լռեց, եւ ինձ թվաց, թե գարնանային տաք արեւից նիրհել էր:

- *Le Monde*-ում հիշատակվում է մշտական հանձնաժողովի եզրակացության մասին, թե ի՞նչն է պատճառը, ավելի ճիշտ՝ հրդեհի բռնկման պատճառները,- շարունակեց նա՝ կարճատեւ դադարից հետո:

-Ըմմմ, այո, անհավանական ինչ-որ բան կա նրանում, թե ինչպէս են որոշ հզոր միջազգային հանցավոր շրջանակներ, ըստ երեսույթին, փորձել վերացնել ուղեւորներից մեկին, ոմն լրագրողի՝ Ալբերտ Լոնդրես անունով, թեւեւ ինձ համար դժվար է հավատալ, որ ինչ-որ մեկը կդիմի նման ծայրահեղության՝ ուղղակի մի մարդ վերացնելու համար:

Ինձ թվաց, թե նրա դեմքին խաղացող հեզնական ժպիտում ակնարկ նկատեցի, կամ գուցե դա ուղղակի տեսողական պատրանք էր՝ գարնանային ծակող արեւի ճառագայթների ներքո:

Անկախ լրագրող Ալբերտ Լոնդրեսը, ով գրում էր ֆրանսիական մի լրագրի համար, 1932 թվականի ապրիլին Մարսել վերադառնալիս, Շանհայում նստել էր այդ շոգեհավը: Ֆրանսիացի լրագրողը գրեթե մեկ տարի անց էր կացրել Հնդ-Չինաստանում ջանասիրաբար ու մեթոդաբանորեն հետազոտելով գեւքի մաքսանենգների շրջան, եւ նրա մանրամասն պահպանված գրառումները, այդպէս էր ենթադրվում, որ լի էին տեղեկություններով, կարող էին սարսափ առաջացնել հանրության շրջանում եւ, միաժամանակ, քառս առաջացնել Լոնդոնի, Փարիզի ու Բեռ-

լիսի ազդեցիկ արդյունաբերողների շրջանում:

Լոնդոնի ընթերցողներն անհամբեր սպասում էին, թե ինչ կոր ու սկանդալային բացահայտումներ կիրապարակի հետաքննական լրագրության այս գյուտարարը <Նոավոր Արեւելքից վերադառնալուց հետո: Շատերը դեռ վառ հիշում էին նրա առաջին գիրքը, որը հրատարակվեց ընդամենը երեք տարի առաջ, եւ վերնագրված էր «Ճանապարհ դեպի Բուենոս-Այրես», որտեղ բացահայտվում էր սպիտակ ստրկության մասին սարսափելի ճշմարտությունը. երիտասարդ կանանց Մարսելի ու Համբուրգի մարմնավաճառության տներից տեղափոխում էին Հարավային Ամերիկա: Այսպիսով, զարմանալի չէ, որ այս գիրքը գրելով, նա թշնամիներ էր ձեռք բերել ֆրանսիական ու գերմանական ընդհատակյա արքաների շարքերում:

Այնուհանդերձ, Լոնդոնը խիզախորեն շարունակում էր հետաքննությունը՝ բացահայտելով եվրոպացի աղջիկների նմանատիպ առեւտուրը, որոնց վաճառում էին Շանհայի հասարակաց տներին: Այնուհետեւ նա ուսումնասիրեց մի խումբ դավադիրների ահաբեկչական գործողությունները Մակեդոնիայում եւ Բուլղարիայում, որոնք, նավում բռնկված հրդեհի պատճառով, Լոնդոնի ենթադրյալ մահից ընդամենը երկուսուկես տարի անց, Մարսելում պիտի սպանեին Հարավսլավիայի թագավոր Ալեքսանդր I-ին:

<Նոավոր Արեւելք կատարած իր վերջին ուղեւորության ընթացքում նա ավարտեց մութ ուժերի վերաբերյալ իր բացահայտումները, որոնք կառավարում էին զենքի մահաբեր վաճառքն աշխարհի այն հատվածում, որտեղ ճապոնական կայսերական բանակն արդեն պատրաստվում էր նոր արշավանքների, իսկ տեղի չինացի զինվորական բարձրաստիճան չինովնիկներն ու սադրիչները արյունալի հակամարտություններում սպանում էին իրենց սեփական ժողովրդին՝ Չինաստանի ու Մանջուրիայի խոշոր շրջանների վրա վերահսկողություն ձեռքբերելու նպատակով: Այս մթնոլորտում, որը կանխագուշակում էր նոր պատերազմ, լուրերն այն մասին, որ Ալբերտ Լոնդոնը տուն է գալիս նոր ձեռագրով, որը բացահայտելու էր որոշ մեծահարուստ զինավաճառների, որոնց շուրջն արդեն Լոնդոնի եւ Փարիզի ակումբների մասնավոր երեկոների ժամանակ խոսակցություններ էին պտտվում, ովքեր արդեն տեսական ժամանակ խայտառակ համբավ էին ձեռք բերել՝ որպես անպատկառ «մահվան առեւտրականներ», եւ որոնց մասին խոսակցու-

թյունները տարածվել էին ամբողջ Եվրոպայում՝ անհանդուրժող հրատարակիչների շրջանում, ինչպիսին անտառային հրդեհն է (եթե սա տվյալ պարագայում անպատեհ համեմատություն չէ):

Դեպի Ֆրանսիա վերադարձի ճանապարհին ևավը կանգ էր առել Սայգոնում, որտեղ ավել ուղեւորներ էին, մեծամասամբ Ֆրանսիայի գաղութային պաշտոնյաներ ու նրանց ընտանիքներ, ևավ բարձրացել: Սուտ 800 ուղեւորով գերբեռնված ևավը կանգ էր առել Սիևգապուրում, Պենանգում եւ Յեյոնում, եւ ևավապետը հրամայել էր, որ այն ուղղություն վերցնի դեպի Կարմիր ծով, Սուեզի ջրանցք եւ ֆրանսիական միջերկրածովյան Սարսել ևավահանգիստ: Ես կլանված կարդում էի, երբ խռպոտ ու ծերունական մի ձայն եւս մեկ անգամ կտրեց մտքիս շղթան:

-Գրագ կգամ, որ կարող եմ այդ գիշերվա մասին ձեզ պատմել բաներ, որ այդ ֆելիետոնում չե՛ք գտնի:

-Ներեցե՛ք,- ես ապշած ու շփոթված էի՝ այդ վայրկյանին չհասկանալով, թե ինչ էր ասում ծերունին:

-Մայիսի 15-ի գիշերվա մասին եմ ասում: Հավատացե՛ք ինձ, ես կարող եմ ձեզ այնպիսի բաներ ասել, որ դուք չե՛ք գտնի ոչ մի լրագրում,- ևա շարունակում էր սեւեռուն հայացք նետել դատարկ տարածության մեջ՝ վերհիշելով հիսուն տարի առաջ տեղի ունեցած իրադարձությունները՝ ասես դրանք անտեսանելի Էկրանի վրա ֆիլմի պես պտտվում էին նրա աչքերի առաջ:

- Կներեք, բայց ես չեմ հասկանում...- կմկմացի ես՝ արագորեն փորձելով պարզել՝ զորձ ունեմ մոլագարի, շառլատանի ու խաբեբայի՞, թե՞ լուրջ ու ողջամիտ մարդու հետ...

Դատելով ծերունու հանդարտ ու զուսպ ձայնի տոնից, նրա քաղաքավարի պահվածքից եւ չափազանց խնամված արտաքինից՝ ես եզրակացրի, որ ևա ասում էր ճշմարտությունը, եւ ինձնից ոչինչ չէր գնում լսելու նրա պատմությունը, անգամ եթե դա նրա վառ երեւակայության արգասիքն էր:

- Ես առաջարկում եմ ձեզ բացառիկ մի պատմություն: Դուք նշեցիք, որ լրագրող եք եւ «Ժորժ Ֆիլիպար» աղետին նվիրված հաղորդում եք պատրաստում: Հասկանո՞ւմ եք, ես այն փրկվածներից եմ, ովքեր ակախատես են եղել այդ իրադարձությանը: Եվ քանի որ, դե, աղետից անցել է հիսուն տարի, ես զգում եմ, որ ժամանակն է պատմելու իրական ճշմարտությունը:

Նիկոլա ԴՈՒՐԵՏԻՉ

-Արդյո՞ք այն, ինչ մինչ օրս հայտնի է մեզ, իրական ճշմարտությունը չէ,- միամիտ ձեռնալուծ հարցրի ես: Ծերունին կարծես ինձ չլսեց ու շարունակեց:

- Ես Սայգունում մի քանի այլ ուղեւորների հետ, որոնք ներկայացել էին որպես Ֆրանսիայի գաղութային պաշտոնյաներ, նավ սստեցի, բայց մոտիկից ծանոթ լինելով նավապետ Անտոն Վիկին, հանգիստ էի, իմանալով, որ D տախտակամածի 5-րդ խցիկն ինձ համար պահված է եւ սպասում է ինձ:

-Ներեցեք, եթե դեմ չեք, ձեր ասածներից որոշ գրառումներ կատարեմ, ես ոչ մի ձայնագրող սարք չունեմ, ուստի մտածեցի, որ...- Ես ավելի շատ դա ասացի, որպեսզի նրան չվիրավորեի իր պատմածի վերաբերյալ իմ քիչ անուշադիր վերաբերմունքով, ինչը կնշանակեր, որ ես նրան չէի հավատում, այլ ոչ նրա համար, որ իրականում ես համոզված էի, որ այն, ինչ ինձ ասում էր ծերունին, ըստ էության, իրական ճշմարտությունն է:

Եվ կրկին, կարծես նա ինձ վրա ոչ մի ուշադրություն չէր դարձնում, եւ այդ ամենը պատմում էր անտեսանելի մի ունկնդրի:

-Ծովային ճանապարհորդությունը հաճելի էր, եւ ինչպես միշտ է պատահում նման իրավիճակներում, շատ շուտով ուղեւորները, կատարյալ իռացիոնալ պատճառներով, իրար էին ձգում ու խմբեր կազմում. նրանք հավաքվում էին նույն սեղանի շուրջ՝ նավի ռեստորանում, ամբողջ գիշեր խմում, երբեմն-երբեմն իրար հետ շփվում բարում կազմակերպվող երեկոյան կոկտեյլների ժամանակ, կամ՝ բաց տախտակամածին:

Ահա թե ինչպես ես պարզեցի, որ պարոն Ալբերտ Լոնդրեսը գտնվում է իմ կողքի՝ 6-րդ խցիկում, իսկ 7-րդ խցիկում գտնվում էր չափազանց գրավիչ ու ցանկալի բարեմասնություններով, այդ ժամանակ ես ամուրի էի, շիկահեր մի բուժքույր՝ Իվոն Վալենտին անունով: Ես, օրհորդ Վալենտինը, Լոնդրեսը եւ Լանքոմբ ազգանամբ տարեց մի զույգ միասին էինք ճաշում: Այնուամենայնիվ, պարոն Լոնդրեսը բազմամարդ ու միապաղաղ երեկոյթների ժամանակ հազվադեպ էր շփվում եւ նախընտրում էր ժամանակն անցկացնել իր խցիկում, որտեղ ժամեր շարունակ աշխատում էր իր նոր գրքի, ինչպես ինքն էր ասում՝ գրառումների վրա, որը պիտի ցնցեր աշխարհը: Եվ ճակատագրական այդ գիշերը նա հրաժարվեց նման մի խնջույքի ժամանակ միանալ մեզ, եւ, քանի որ Լանքոմբ զույգը նույնպես հրաժարվել էր խնջույքին մասնակցել, ես ու Իվո-

և որոշեցինք միայնակ անցկացնել այդ երեկոն՝ պարելով ու շամպայն խմելով, խոսելով մեր կյանքի հետագա պլանների մասին, երբ մեկ կամ երկու օրից ժամանենք Մարսել: Ինչքան հիշում եմ, տաք ու խոնավ երեկո էր, եւ մենք որոշեցինք թեթեանալ լավ սառեցրած մեծ քանակությամբ շամպայնով: Հավանաբար դա էր պատճառը, որ Իվոնը հաճախ այցելում էր կանացի սենյակ ու երկար ժամանակ փակվում այնտեղ: Նման մի «ընդմիջումից» հետո նա վերադարձավ շփոթված՝ պնդելով, որ դրա պատճառը խոնավ գիշերն ու անհամար կոկտեյլներն են: Այնուհանդերձ, նա արագ հավաքեց իրեն, եւ մենք շարունակեցինք մեր խոսակցությունն այնտեղից, որտեղ կանգ էինք առել: Մի պահ ռուսական «Սովետսկայա Նեֆտ» տանկերն անցավ մեր հետեւից մեկ մղոն, կամ գուցե ավելի քիչ, հեռավորության վրա, եւ Իվոնը, որն արդեն շամպայնից բավական կայտառացել էր, նավի անձնակազմին ուրախ ձեռքով արեց: Կեսգիշերին մոտ նավապետ Վիքս իր հյուրերին բարի գիշեր մաղթեց եւ առանձնացավ իր խցում, իսկ մենք մի որոշ ժամանակ մնացինք տախտակամածի վրա՝ ծովի մեղմ զեփյուռի ներքո զովացնելով մեր տաք ճակատներն ու նայելով թրթռացող լույսերին, որոնք Արաբական թերակղզու ափերից աչքով էին անում մեզ՝ ասես փայլփլուն աստղերի հետ մրցելով:

«Կհավատա՞ք՝ այդ ծեր այծն իր մեջ պոետ ունի», - մտածեցի ես, բայց չընդհատեցի, ուղղակի իմ նոթատետրում գրառում արեցի:

-Իսկ հետո, կեսգիշերից մոտ երկու ժամ անց, Իվոնն ու ես վերջապես որոշեցինք առանձնանալ: Ես նրան ուղեկցեցի դեպի իր խցիկ 7-ը, եւ հետո, մինչ առանձնանալը, միտքս փոխեցի եւ որոշեցի եւս մեկ բաժակ շամպայն խմել: Երբ ես շարժվում էի դեպի նավի ետնամասում գտնվող իմպրովիզացված բարը, ինձ թվաց՝ լսեցի, թե ինչպես էր առաջին օգնականը մի տեսակ այլալված շտապում դեպի կապիտանի մոտ: Ինչ-որ բան ինձ հուշում էր, որ դժոխքի դուռը բացվել է եւ անսպասելի բան է կատարվելու, եւ ես գնացի նրա հետեւից՝ հարցնելով, թե արդյո՞ք օգնության կարիք ունի: Նա միայն ասաց. «Փա՛րջ Աստծո, որ դուք այստեղ եք: Ձեր խցում հրդեհ է բռնկվել»: Ես ապշած էի, բայց ընթրիքից առաջ, երբ գնացել էի թարմանալու եւ ընթրիքի երեկոյի համար փոխվելու, իմ խցում չէի եղել: Նա դուրս գնաց կապիտանին արթնացնելու, իսկ ես շտապեցի դեպի D տախտակամածը՝ Իվոնին փնտրելու: Երբ հասա 7-րդ խցիկ, այն նույնպես կրակի ճիրաններում էր, եւ թվում էր, թե հրդե-

Նիկոլա ԴՈՒՐԵՏԻՉ

հը բռնկվել էր ոչ թե մեկ վայրում, այլ մոլեզվում էր նավի այդ ամբողջ հատվածում, ու ոչ միայն, եւ գնալով այն տարածվում էր: Իվոնն այնտեղ չէր: Ուժեղ կրակի պատճառով ես ստիպված էի հետ գնալ, եւ հենց այդ պահին ժամանեցին կապիտան Վիքը, նրա առաջին օգնականն ու Իվոնը: Նա հիստերիկ բղավում էր եւ փորձում ինչ-որ բան բացատրել նրանց: Դա վերջին անգամն էր, որ տեսա նրան: Ես մեկ անգամ ես փորձեցի հասնել 6-րդ խցիկ, որտեղ պետք է լիներ պարոն Լոնդրեսը, բայց՝ ապարդյուն: Հրդեհը սաստկացավ եւ բոպեների ընթացքում տարածվեց նավապետի կամրջակում: Շուտով տագնապի ազդանշան հնչեց եւ նավի շարժիչներն անջատվեցին: Երբ պարզ դարձավ, որ մենք դժոխքի հետ ճակատամարտում տանույ ենք տալու, նավապետը հրամայեց լքել նավը: Հանգիստ ու կանոնավորապես փրկարար նավակները իջեցվում էին, իսկ ուղեւորները, խոնավ սրբիչների ու վերմակների մեջ փաթաթված, որպեսզի թանձր ու տաք ծխին դիմադրեն, սկսեցին նստել նավակները: Ամբողջ գույքը, որ կարող էր որպես լողացող լաստանավ ծառայել, ծովը նետվեց: Ուղեւորների մի մասի մոտ խուճապ առաջացավ, իսկ նրանցից ոմանք սկսեցին ծովը նետվել: Այդ պահին ինձ թվաց, թե ինչ-որ մեկին 6-րդ խցից դուրս սողալիս տեսա, սակայն վստահ չեմ, ծուխը բավական թանձր էր, եւ մեծ քանակությամբ շամպայնը, որ այդ գիշեր խմել էի, նույնպես ազդել էր: Որոշ ժամանակ անց, նավի մեջ, որտեղ ես էի, ռադիոօպերատորից տեղեկացա, որ տագնապի ազդանշանն ուղարկելիս ռադիոհաղորդիչն անսպասելիորեն լռել էր, եւ երբ օպերատորը շտապել էր պահեստային մարտկոցներով կնիքված պահեստը, այն դատարկ էր տեսել: Այնուամենայնիվ, անգամ տագնապի ազդանշանի կարճատեւ ահազանգը բավական էր, եւ կարճ ժամանակ անց նավերի մի ամբողջ նավատորմիդ օգնության հասավ մեզ, որոնց թվում էր վերը նշված ռուսական նավթատար նավը, բրիտանական երկու շոգենավ, ճապոնական մեկ բեռնանավ եւ ես երկու անդրատլանտյան նավեր: Կարճ ժամանակ անց բոլոր ողջ մնացածներին դուրս հանեցին Կարմիր ծովի ջրերից: Ես հայտնվեցի բրիտանական շոգենավերից մեկում, որը, մինչ իր ճամփորդությունը դեպի Սաուփեմփթոն շարունակելը, ինձ տեղափոխեց Մարսել:

Ծերունին վերջապես լռեց՝ դրամատիկ դադար տալով, ասես ուզում էր գնահատել իր խոսքերից ստացված տպավորությունը, իսկ հետո, երբ պատրաստվում էի հարց տալ, նա աճապարելով շարունակեց.

-Այսպես, ի՞նչ մնաց ասելու:

-Չնայած քննչական կոմիտեին իմ եւ մի շարք այլ ուղեւորների տված նախնական ցուցմունքներին, որոնց համաձայն՝ բոլորն էլ գրեթե համոզված էին, որ տեսել են Ալբերտ Լոնդրեսին՝ իր այրվող խցիկից դուրս սողալիս, կոմիտեի պաշտոնական եզրակացությունն այն էր, որ հայտնի լրագրողը խեղդվել է, թեւէ նրա մարմինն այդպես էլ չհայտնաբերվեց, եւ ոչ էլ նրա ձեռագրերից որեւէ էջ, որոնք հավետ անհետացան Կարմիր ծովի ալիքների մեջ: Ես այդպես էլ չիմացա, թե ինչ եղավ Իվոն Վալենտինիի հետ: Նրա անունը խեղդվածների ցուցակում էր, թեւէ այդ ճակատագրական ճանապարհորդության ընթացքում մեր բազմաթիվ զրույցների ժամանակ Իվոնն ինձ ասել էր, որ ինքը լավ լողորդ է: Հետադարձ հայացք գցելով այդ ամբողջ իրադարձությանը, հասկացա, որ ես ավելի շատ հարցեր ունեմ, քան պատասխաններ: Արդյո՞ք Ալբերտ Լոնդրեսն անհետացավ ամեհի դժոխքում, որը կույ տվեց «Ժորժ Ֆիլիպարին», ինչպես նշված էր քննչական կոմիտեի եզրակացություններում: Գուցե՞ նրան հաջողվեց ճողոպրել հրդեհից, թե՞ D տախտակամածի 6-րդ խցիկի անցքով սողացող տղամարդու պատկերն իմ երեւակայության արդյունքն էր: Իսկ մյուս բոլոր ուղեւորներ՞ը, ովքեր նույնպես պնդում էին, որ տեսել են ինչ-որ մեկին խցիկից դուրս գալուց: Արդյո՞ք դա «կոլեկտիվ փսիխոզի» նշան էր: Արդյո՞ք Իվոն Վալենտինն այդ գիշեր իսկապես կանացի սենյակ էր գնում, թե՞ նրա այդ գնալ-գալու մեջ ավելի չար պատճառ կար: Երբ նա ուրախությամբ ձեռքով արեց ռուսական նավթատար նավի անձնակազմին, իրականում նա ինչ-որ ազդանշաններ էր տալիս նրանց: Արդյո՞ք հրդեհը միտումնավոր էին արել՝ ուղղակի մի մարդու վերացնելու համար, թե՞ այն առաջացել էր տեխնիկական սխալի հետեւանքով, որը հետագայում նավաշինարարները, ազդեցիկ արդյունաբերական շրջանակների շնորհիվ, կարողացան կոծկել: Այս բոլոր հարցերը մինչ օրս՝ հիսուն տարի անց, մնացել են անպատասխան: Եւ, զուցե, այդպես ավելի լավ է: Ի՞նչ իմանա:

Երբ ծերունին լռեց, ես էլ չխոսեցի, սպասելով, թե նա ինչ-որ բան կավելացնի: Սակայն այս անգամ նա լռեց՝ ընկղմվելով խոր լռության մեջ՝ այնքան խորունկ, ինչպես Կարմիր ծովի ջրերն են: Վերջապես ես խորը շունչ քաշեցի եւ ասացի.

- Չափազանց հետաքրքիր պատմություն է: Շնորհակալություն: Նետեցե՛ք, կարո՞ղ եմ Ձեր անունը հարցնել:

Նիկոլա ԴՈՒՐԵՏԻՉ

-Իհարկե,- ասաց նա՝ դուրս գալով իր անուրջներից:- Ինչ կոպիտ է իմ կողմից, ինչպես եմ՝ ներեցե՛ք ինձ:

Նա ոտքի կանգնեց և դեմքով իմ կողմը շրջվեց. այդ պահին ես առաջին անգամ տեսա նրա դեմքի այն կողմը՝ մի մեծ ու անճոռնի սպիից այլանդակված, որը կարող էր միայն այրվածքներից առաջանալ: Նա զգուշորեն հանեց մի ձեռնոցը և թիկնոցի ներսի գրպանից հանեց գեղեցիկ տպագիր մի այցեքարտ և փոխանցեց ինձ: Նրա ձեռքը նույնպես պատված էր նմանատիպ սպիներով: Ես հայացք նետեցի ձեռքիս փոքրիկ պլաստիկապատ թղթին՝ անտակտորեն թաքցնելով այն փաստը, որ ես ապշած էի գրուցակցիս անսպասելի տեսքից:

ԲԵՐՏՈՒԴ ՍԱԼՆԵՐ, եսք.

10 Ոյու Փողոց

75006 Փարիզ

Հեռ. 01 45 44 38 11

-Որեւէ հարց ունենալու դեպքում՝ վստահ, կապ կհաստատեմ այս համարով... - վերջապես մրմնջացի ես և գլուխս բարձրացրի, բայց ծերունին արդեն բավականին հեռու էր և շարժվում էր դեպի այգու մուտք տանող ճանապարհով: Ես շարունակում էի հայացքս սեւեռել նրա կորացած մեջքին՝ մինչեւ որ նա անհետացավ վայրի յասամանների խիտ մացառուտի ետևում, որն օղակում էր ծանր չուգունից պատրաստած այգու դարպասը:

* * *

Երեք օր անց, երբ ես ողջ մնացած մյուս վկաների հետ գրուցեցի «Ժորժ Ֆիլիպար» նավի խորտակման մասին, առաջին կասկածի նշույլներն ի հայտ եկան այն ժամանակ, երբ նրանցից կարծես ոչ մեկը չէր հիշում Բերտուդ Սալներին: Սկզբում ես դա կապում էի այն փաստի հետ, որ այդ դեպքից գրեթե կես դար էր անցել, և որ բոլոր իմ գրուցակիցներն արդեն պատկառելի տարիքի էին, թեև նրանցից ոմանք հիշում էին մեծ կրծքերով շիկահեր Իվոնին, ով, ինչպես նրանք շեշտեցին, հատուկ ջանքեր էր գործադրում Ալբերտ Լոնդրեսին իրենով անելու համար:

Հետևաբար, այս տարածաշրջաններից դրդված, որոշեցի հավաքել այցեքարտի համարը, որը մի քանի օր առաջ թողել էր իմ խորհրդավոր գրուցակիցը: Ինձ պատասխանեցին «Հոթել դե Լաբ Սան ժերման»

ընդունարանից: Հարցին, թե Բերտոլդ Սալներ անունով հյուր ունե՞ն իրենց հյուրանոցում, պատասխանեցին, որ չունեն, եւ այդ անունն իրենց ծանոթ չէ: Նույն առավոտյան եւ զանգահարեցի *Le Monde*-ի իմ գործընկերոջը եւ խնդրեցի նրան ստուգել իրենց արխիվները՝ պարզելու, թե արդյո՞ք Բերտոլդ Սալները եղել է նալից տուժած ուղեւորների ցուցակում:

Պատասխանը բացասական էր:

Մինչ օրս եւ պատասխան չունեմ, թե ով է խորհրդավոր Բերտոլդ Սալները: Արդյո՞ք նա վարձու մարդասպան էր, որին հանձնարարել էին սպանել Ալբերտ Լոնդրեսին, մի հրձիգամուլ, ով հրկիզել էր նալն ու հեռացրել պահեստային ռադիոմարտկոցները՝ կնքված պահեստային սենյակից: Կամ, գուցե, Իվոն Վալենտի՞նն էր դա արել այնպես, որ թվա, թե Սալներն է դա նախաձեռնել: Ի՞նչ էր պատահել ենթադրյալ բուժքրոջը, որի մարմինն այդպես էլ երբեւէ չգտնվեց: Եվ, իվերջո, Ալբերտ Լոնդրեսն իսկապե՞ս ջրատույզ էր եղել, թե նա «Ժորժ Ֆիլիպարի» աղետն իր օգտին օգտագործեց, որպեսզի անհետանա առանց հետքի եւ այսպիսով փախչի իրեն հետապնդողներից, որոնց զայրացրել էին նրա ուսումնասիրությունները: Այս բոլոր հարցերի պատասխանները սահում են իմ մատների արանքով, ինչպես Կարմիր ծովի ջրերն են հոսում ձեռքերի միջով եւ, գուցե, դրանց պատասխանները եւ երբեք չեմ գտնի:

Միայն երկար տարիներ անց, ազատ մի ժամանակ, այս պատմությունը գրելիս, հանկարծակի մտքովս անցավ, որ Բերտոլդ Սալներ անունը կարող է անագրամա լինել: Տառերը վերադասավորելիս՝ շուտով եւ ստացա ԱԼԲԵՐՏ ԼՈՆԴՐԵՍ անունը: Եթե խորհրդավոր Բերտոլդ Սալներն իրոք Ալբերտ Լոնդրեսն էր, ապա հնարավոր է, որ նա պատմել էր ամբողջ պատմությունը, ինչպես կպատմեր գործընկերը գործընկերոջը, լրագրողը՝ մեկ այլ լրագրողի, զգալով, որ եւ կհամառեի եւ վաղ թե ուշ կպարզեի, ինչպես ինքն էր ասում Լյուքսեմբուրգ զբոսայգում, «իրական ճշմարտությունը»: Դա, սակայն, դեռեւս իմ հարցերից ոչ մեկի պատասխանը չտվեց, այլ ուղղակի հարյուրավոր նոր հարցեր առաջ բերեց:

Այնուամենայնիվ, մի բան ակնհայտ է՝ այն, որ «Ժորժ Ֆիլիպար» նալի խորտակումից յոթ տարի անց, այն պահից, երբ լրագրող Ալբերտ Լոնդրեսն անհետացավ եւ նրա հետ մեկտեղ՝ իր ձեռագրերը, որոնք պետք է բացահայտեին զենքի առետրով զբաղվողների շրջանակները,

Նիկոլա ԴՈՒՐԵՏԻՉ

այսպես կոչված՝ «մահվան առետրականներին», աշխարհն ականատես եղավ եւս մեկ՝ ավելի մեծ ողբերգության, որի ժամանակ բազմաթիվ կյանքեր կորսվեցին եւ շատ ավելի մեծ թվով մարդիկ անհետացան:

Նրանց ցուցմունքների վերաբերյալ գրառումները կկորչեն տարբեր ծովերում, կարմիր ծովում՝ մարդկային արյան ծովում:

Բայց դա բոլորովին այլ պատմություն է:

ՏՈՒԼԻԱ ԲԱՄԲԵՐԻ ԱՆԲԱՑԱՏՐԵԼԻ ՄԱՀՐ

Ուիլյամ Հերբերտ Բամբերը միապաղաղ, գունատ, ձանձրալի մարդ էր: Եվ այդպես էլ նրա կյանքն էր՝ միօրինակ, տաղտկալի, դժգույն: Եվ ահա անսպասելի, գրեթե աննկատ մի ժամանակ պատահեց մի բան, որը գլխիվայր շուտ տվեց նրա աշխարհը եւ սկիզբ դրեց հետեյալ պատմությանը:

Ես բոլորովին պատահաբար առնչվեցի Ուիլյամ Հ. Բամբերի գործին: Պատրաստելով չբացահայտված հանցագործությունների, առեղծվածային մահերի ու անհետացումների մասին մի շարք ռադիոհաղորդումներ՝ ես գրույցի բռնվեցի իմ գործընկեր Սթիվեն Բրաունի՝ BBC լրատվականի մի խմբագրի հետ, ով ինձ առաջարկեց անպայման այցելել Լոնդոնի Սթրենդ փողոցի վրա տեղակայված թագավորական դատարանի գրադարանն ու ընթերցասրահը, շեշտելով, որ դա տեղեկատվության հրաշալի աղբյուր է, եւ հենց նա էլ իմ ուշադրությունը հրավիրեց ոմն Բիլ Բամբերի գործի վրա: Քանի որ դատարանը տեղավորված է Բուլ Հաուսից ընդամենը մի քանի հարյուր մետր հեռավորության վրա՝ BBC-ի լոնդոնյան գլխամասային գրասենյակներից մեկի համեմատությամբ, որտեղ ես վերջին քսան տարիների ընթացքում պարբերաբար էի այցելում, հաջորդ օրը ես միանգամից հայտնվեցի դատարանի մոտ՝ պարզելու նրանց արխիվներ մուտք գործելու իմ հնարավորությունները: Իհարկե, ինչպես միշտ, BBC-ի անունը հիշատակելուց հետո բոլորը միանգամից մոտենում էին եւ, առանց որեւէ քաջքշուքի, շուտով մխրճվեցի փոշոտ ու դեղնած թղթապանակներով լի մի լաբիրինթոս, որը թաքցնում էր եւս մի գաղտնիք՝ այն ժամանակ չկռահելով, թե ուր կտանի ինձ այս ամբողջ պատմությունը: Եվ այսպես, այն հանձնում եմ ձեր դատին, եւ ինքներդ վճռե՛ք, թե արժե՞ր արդյոք այն պեղել Թագավորական պալատի արխիվների գետնափորներում եւ գրի առնել՝ այդպիսով այն պոկելով բյուրոկրատական անտարբերության եւ ընդհանուր մոռացության ճիրաններից:

Ինչպես ասացի, Ուիլյամ Բամբերը Լիվերպուլի հազարավոր բնակիչ-

ների պես մյուսներից ոչնչով չտարբերվող մարդ էր: Նա հիսունն անց էր, բայց եւ այնպես աշխատասեր ու ժրաջան, քաղաքավարի վարքագծով, ինչ-որ չափով պարփակված մի մարդ, ով հագնվում էր զուսպ եւ համեստ, ոմանք կարող է անգամ ձանձրալի ասելիս, եւ մի անձնավորություն էր, ով իր ծանոթների, ընկերների ու գործընկերների կողմից կատարյալ հարգանք էր վայելում: Նրա «ընկերների հետ լավ ժամանակ անցկացնելու» հասկացությունը բաղկացած էր սովորական այցելություններից՝ երկու շաբաթը մեկ անգամ տեղի փաբ, որտեղ կանոնավոր կերպով շախմատի մրցաշարեր էին կազմակերպվում: Իր զուսպ ու համեստ կնոջ՝ Տուլիայի հետ իրենց տանը երաժշտական «խնջույքների կազմակերպումն» ուղեկցվում էր կնոջ ջութակահարությամբ եւ դաշնամուրով ջութակին նվագակցումով:

Ուիլյամի ինքնամփոփ ու գոհացուցիչ պահվածքը հատկապես գնահատվում էր նրա գործատուի կողմից - հարգված եւ հեռանկարային ապահովագրական ընկերություն՝ *Հեռանկար Ապահովագրական Ընկերություն*, որտեղ Բիլը, ինչպես նրան անվանում էին գործընկերներն ու ընկերները, վերջին տասնհինգ տարում աշխատում էր որպես ապահովագրական գործակալ: Այդ ընթացքում Բիլը ձեռք բերեց չափազանց վստահելի աշխատակցի համբավ: Նա աշխատասեր էր եւ երբեք պաշտոնի առաջխաղացում կամ աշխատավարձի բարձրացում չէր պահանջում: Այս բարձր անձնային հատկանիշների եւ իր զուսպ ու հանգիստ կնոջ շնորհիվ նրանք սիրված, թեեւ ոչ այնքան շփվող, զույգ էին Էնֆիդի բնակելի թաղամասի Վուլվերթոն փողոցի իրենց հարեանությունում: Համաձայն հարեանների կողմից ավելի ուշ տրված վկայությունների՝ Բիլը երբեք անվերահսկելի պահվածքի նշաններ չի ցուցաբերել, ոչ էլ, որքանով որ կարող էին նրանք դատել, զայրույթի բռնկումներ էր ունեցել: Սակայն, չնայած վկայություններին, դատական նիստի ատենակալները պաշտպանեցին մեղադրյալ կողմին, ում նկարագրմամբ Ուիլյամ Հ. Բամբերը մի մարդ էր, ով ցուցաբերել էր դաժան, առավել եւս՝ սադիստ մարդասպանի բոլոր նշանները:

Մասնավորապես, երբ հայտնաբերվեց նրա կնոջ մարմինը, նրա գլխին այնքան դաժան հարվածներ էին հասցրել, որ ուղեղի մասնիկները ցաք ու ցրիվ էին եղել ամբողջ խոհանոցի հատակին, որտեղ նրան

հայտնաբերել էին սեփական արյան լճափոսի մեջ: Ավելին, նրան սպանել էր մի մարդ, ով նենգաբար ու գիտակցաբար թողել էր կարմիր տառեխների մի շարան, որը կստիպեր ոստիկանությանը կեղծ եզրակացություններ անելու՝ սա էր հետաքննության եզրահանգումը, չնայած այն հանգամանքին, որ իրեղեն ոչ մի ապացույց չէր հայտնաբերվել, որը հղում կաներ Տուլիա Բամբերի ամուսնուն՝ նրա կնոջ մահվան մեջ մեղավոր լինելու համար: Բացի այդ, Բիլ Բամբերը գրեթե կատարյալ ալիքի ուներ: Հետեւաբար, դժվար է հավատալ, որ, չնայած ոստիկանական շատ թույլ վարկածին, որը ցանկացած պաշտպանություն կարող էր արմատախիլ անել մանրակրկիտ խաչածեւ հարցաքննության միջոցով, եւ չնայած ամբաստանյալի հետ կապված որեւէ շարժառիթի բացակայության, եւ չնայած այն հանգամանքին, որ դատավոր Ռոբերտ Ալդերսոն Ռայթն իր եզրափակիչ ելույթում գրեթե աղերսում էր դատարանին նրան ազատ արձակել, Բիլ Բամբերն իր կնոջ սպանության գործում մեղադրյալ ճանաչվեց:

Մինչ դատավոր Ռայթը պատրաստվում էր վերջնական վճիռ կայացնել, Բիլ Բամբերը կարողացավ միայն երկու բան ասել. «Ես մեղավոր չեմ: Ուրիշ ոչ մի բան չեմ կարող ասել»: Անգամ դատավորն ամբաստանյալից ավելի ցնցվեց դատարանի կայացրած վճռից, սակայն օրենքով ընդունված վճիռը՝ կախաղան հանել, հրապարակելուց բացի այլընտրանք չուներ:

Նույնիսկ այս ներածական եւ թերի ծանուցումների հիման վրա կարելի է եզրակացնել, որոշակի աստիճանի հարաբերական վստահությամբ, որ Բիլ Բամբերի գործով դատավճիռը կայացնելուց հետո այդ առեղծվածային տղամարդը՝ Բամբերի կնոջ իրական մարդասպանը, պետք է որ թեթեւացած շունչ քաշեր՝ գիտակցելով, այդպես էր թվում, որ նա անթերի սպանություն է գործել:

* * *

Երկուշաբթի օրը՝ սեպտեմբերի 19-ին, ուղիղ ժամը 19:15-ին, երբ հեռախոսը զանգեց, Լիվերպուլի հյուսիսային Տոն Սթրիթ փաբում ոչ ոք անգամ չէր կանկաճում, որ դա առաջին ազդանշանն էր, որը կանխագուշակում էր սարսափելի ու աղետալի իրադարձությունների մի շարք,

Նիկոլա ԴՈՒՐԵՏԻՉ

որն արմատապես կկործանի Բիլ Բամբերի անխռով ու խաղաղ ընտանեկան կյանքը: Այդ երեկո Բիլ Բամբերը պետք է ներկա գտնվեր այն փաբում, որտեղ տեղի շախմատիստների մասնակցությամբ տեղի էր ունենալու եւս մեկ սիրողական մրցաշար, ուր դրսևորվելու էին նրանց առանձնապես աչքի չընկնող հմտություններն ու կարողությունները, ինչն ակնհայտ էր մրցաշարի անվանումից՝ *Էնֆիլդ թաղամասի տեղական փաբերի երկրորդ լիգայի թիմային առաջնություն:*

Այնուամենայնիվ, հիսուներկուամյա ապահովագրական գործակալն այնտեղ չէր, որպեսզի պատասխաներ անձանոթի զանգին: Հեռախոսը վերցրեց մատուցողուհին, ով լսափողը փոխանցեց շախմատի թիմի ավագ Սամուել Բիթին, որը գծի մյուս ծայրում գտնվող տղամարդուն բացատրեց, որ Բիլ Բամբերը դեռեւս փաբ չի ժամանել եւ առաջարկեց ավելի ուշ զանգել: Հեռախոսի ձայնը, որ պատկանում էր ոմն Ռոբերտ Ս. Քուալթրոյի, այդպես էր նա ներկայացել, խնդրեց, որ իր ուղերձը փոխանցվի Բիլ Բամբերին, երբ նա պանդոկ ժամանի: Առեղծվածային զանգահարողը խնդրել էր, որ Բիլ Բամբերը հաջորդ օրն այցելի իրեն՝ Մոսլի Հիլլ շրջանի Միկլավ Գարդենս Իստ հասցեում գտնվող իր տունը՝ քննարկելու իր ապահովագրության հետ կապված որոշ հարցեր: Բիթին, ինչպես ավելի ուշ նա հիշեց նստիկանական հետաքննության ժամանակ, հաղորդագրությունը գրել էր ծրարի հետեւի մասում:

Ստտավորապես նույն ժամին Բիլ Բամբերը դուրս էր գալիս Վուլվերթոն փողոցի 29 հասցեում գտնվող իր տնից եւ շարժվում էր դեպի տրամվայի կանգառ՝ պլանավորելով հասնել փաբ, որտեղ շախմատի իր թիմակիցներն անհամբեր նրան էին սպասում, երբ արդեն զարեջրի երկրորդ ռաունդում էին: Ճիշտն ասաց, նա չէր ուզում կնոջը մենակ թողնել դատարկ տանը: Մասնավորապես, նախորդ մի քանի շաբաթների ընթացքում նրանց թաղամասում մի շարք գողություններ էին կատարվել, իսկ Բիլը հաճախ տանն էր պահում ապահովագրական ընկերության գործարքների դիմաց հավաքագրված խոշոր գումարները: Հավանաբար դա էր պատճառը, որ նա կնոջը զգուշացրել էր իր բացակայության ժամանակ անձանոթների առաջ դուռը չբացել:

Գրեթե վայրկյաններ անց տրամվայը ժամանեց, եւ Բիլը նստեց առաջին վագոնը, որը գրեթե դատարկ էր: Ադուտ լուսավորված տրամ-

վայի խորքում ևս նկատեց եւս մեկ ուղեորի: Միջին տարիքի մի մարդ՝ «Ղուբերտուս» վերարկուով, ևույն գույնի գրեթե ծիծաղելի գլխարկով՝ զարդարված ինչ-որ գունագեղ փետուրներով, ինչպես հետագայում կհիշեր Բիլ Բամբերը հետաքննության ժամանակ: Անձանոթն աղոտ լույսի տակ փորձում էր ինչ-որ գիրք կարդալ եւ սաքսաֆոնի նմանվող մի մեծ կոր ծխամորճ ուներ, որից Բիլը տեսել էր Կոնան Դոյլի հայտնի դետեկտիվ վեպերի պատկերազարդ գրքերում: Բիլ Բամբերն այդ ամենի մասին պիտի հիշատակեր հետաքննության ժամանակ, սակայն մարդը, ով կարող էր հաստատել, որ Բիլն իրոք այդ պահին եղել էր տրամվայում, այդպես էլ չգտնվեց, չնայած այն հանգամանքին, որ ևս կրում էր հատկանշական եւ բավականին անսովոր հագուստ:

Հետաքննության ընթացքում շախմատի թիմի ավագ եւ «Սետերո Հիդ» փաթի սեփականատեր Սամուել Բիթը խոստովանել էր, որ ինքն անձամբ չի կարող հիշել, թե կոնկրետ երբ էր Բիլը պանդոկ մտել, բայց նկատել էր՝ նշված հեռախոսագանգը ստանալուց կարճ ժամանակ անց, որ ևս սեղանի շուրջ նստած շախմատ էր խաղում, եւ որ ևս փոխանցել էր նրան նշված հաղորդագրությունը: Բիթը նաեւ նշել էր, որ Բիլը նման հաղորդագրություն ստանալուց հետո զարմացած էր: Նա ասել էր, որ նման տարօրինակ անունով մարդու չի ճանաչում եւ ծրարի վրա գրված հասցեն գտնվում է Լիվերպուլի հակառակ կողմում՝ Բամբերի գործնական տարածքից դուրս: Սամուել Բիթը նաեւ հիշել էր, որ մրցաշարի ավարտից հետո Բիլն իր ընկերներից հարցրել էր, թե արդյո՞ք նրանք Միկլով Գարդենս Իսթ-ի տեղը հստակ գիտեն, եւ որ համարի տրամվայն է այդ վայրը մեկնում եւ ինչքան ժամանակ նրանից կպանջվեր այնտեղ հասնելու համար:

Երբ այդ օրվա երեկոյան ևս տուն վերադարձավ, Տուլիան արդեն պառկել էր քնելու, եւ խոհանոցի պահարանի վրա ևս գտավ մի հաղորդագրություն, որում ասվում էր, որ իր կրտսեր եղբայր Սթիվենը իրեն է փնտրում, թեեւ ոչինչ նշված չէր, թե ինչու է նրան փնտրում, իսկ նրա ճաշը ծածկած դրված էր սեղանին, եւ ջրով լի թեյնիկը սալօջախին էր: Նա հիշում էր, որ իր ընթրիքը ոչ այլ ինչ էր, քան թունայից ու վարունգից բաղկացած մի պարզ սենդվիչ՝ երկու կտոր սեւ հացի մեջ դրած, մի խաշած ձու եւ մի թեյի բաժակ՝ թեյի տոպրակով: Թեյամանում ջուրը

Նիկոլա ԴՈՒՐԵՏԻՉ

եռալուց հետո ևս այն լցրել էր թեյապարկի վրա և ևստել ճաշելու: Քսան ընդհատեց ևս արդեն պառկած էր իր տաք կնոջ կողքին՝ վերելի հարկի իրենց ևնջասնյակում: Մինչ քնելը ևս մտորել էր, թե ինչ կարող էր ցանկանալ իր կրտսեր եղբայրը, ով աշխատել էր որպես լրագրող տեղի թերթում, սակայն վերջերս աշխատանքից ազատվել էր, և եզրակացրել, որ, հավանաբար, եկել էր, որպեսզի ևսորից մի քիչ պարտք վերցնի՝ իր երիտասարդ կնոջն ու նրանց երկու ամսական երեխային կերակրելու համար: Բիլը գիտեր, որ, ինչպես ևսխնկնում բազմիցս, այս անգամ ևս նրան կօգնի ու կտա անհրաժեշտ գումարը, սակայն մինչև այդ՝ նրա զխիսն ճառ կկարդա, թե ինչպես է պետք շատ ջանք գործադրել ավելի լուրջ աշխատանք գտնելու համար՝ տանը ևստել սպասելու փոխարեն, թե «երկնքից ինչ-որ բան կթափվի»:

Հաջորդ օրը Բիլ Բամբերը, ժամացույցի մեխանիզմի պես ճշգրիտ, գնաց իր սովորական գործին՝ վաճառելով ապահովագրական պայմանագրեր և փոխհատուցելով հազվադեպ հանդիպող հայցերը: Ուղիղ ժամը 14:00-ին ևս տուն վերադարձավ ճաշի, և, կարճատե հանգստից հետո, ևս մեկ անգամ դուրս եկավ իր կեսօրվա հաճախորդների հետ հանդիպման ևս երեկոյան ժամը 18:00-ին եզրափակեց իր այցելությունները: Մինչ Տուկիան թեթև ընթրիք էր պատրաստում, Բիլը դուրս եկավ լվացվելու ու փոխվելու ևս ևսոր ձեռանմուշներ ու ապահովագրական գնահատման թերթիկներ պատրաստելու՝ անսովոր անվամբ ևսոր հաճախորդի համար, ով իր սեփական կամքով կապվել էր նրա հետ:

Ժամը 18:30-ին, ընթրիքն ավարտելուց հետո ամուսինները լսեցին դռան զանգի ձայնը: Տուկիան դուռը բացեց տասնչորսամյա կաթնավաճառ Ալան Ստյուարտի առաջ, ով նրան տվեց սովորական կաթի շիշը: Սա վերջին անգամն էր, երբ ինչ-որ մեկը կենդանի տեսավ Տուկիա Բամբերին: Միայն մի քանի ընդհատեց ևս Բիլ Բամբերը դուրս եկավ տնից: Փողոցից մի քանի հարյուր մետր այն կողմ՝ Բելմոնտ փողոցում, ևս ևստեց առաջին տրամվայը, որը նրան պիտի տաներ առեղծվածային պարոն Քուլաթրոյի թողած հասցեն: Ժամը 19:00-ի կողմերը, այդ ճանապարհից երկու կիլոմետր անցնելուց հետո, Լոջ Լեյնի մոտ ևս ուրիշ տրամվայ ևստեց: Ինչպես հետագայում արձանագրվեց հետաքննության ընթացքում, որը հաստատեց ևս ևս մեղադրող կողմը, նրա վարքագիծը ևստ-

վոր էր մի մարդու համար, ով սովորաբար ամաչկոտ ու հանգիստ էր: Բիլ Բամբերը բացեիբաց խոսում էր տրամվայի ուղեկցորդ Թոմ Ֆիլիպսի հետ՝ թե ինչպես էր նա հույս փայփայում, որ վաճառելու է մի թանկարժեք կյանքի ապահովագրական պայմանագիր եւ դրանով զգալի գումար էր վաստակելու: Ժամը 19:15-ի սահմաններում նա հասավ Պենի Լեյն կանգառը, որտեղ նստեց երրորդ տրամվայը, որը նրան պետք է հասցներ ութ կիլոմետր երկարությամբ ձգվող ուղեւորության վերջակետը: Իջնելուց առաջ նա տրամվայի ուղեկցորդ Արթուր Թովմասին հարցրեց, թե Միկլավ Գարդենս Իսթ հասցեին որ կանգառն է ամենամոտը:

- Այդ հասցեն ինձ համար անձանոթ է,- ասաց նա՝ հավելելով,- բայց մենք կանգ ենք առնում Միկլավ պողոտայում: Այնտեղ ինչ-որ մեկին հարցրեք... այն պետք է որ մոտակայքում լինի:

Հաջորդ կես ժամը Բիլ Բամբերը թափառում էր Մոսլի բլրի շրջակայքում: Նրան հաջողվեց գտնել Միկլավ Գարդենս Նորգ /Հյուսիս/, Միկլավ Գարդենս Վեսթ /Արեւմուտք/, Միկլավ Գարդենս Սաուզ /Հարավ/ հասցեները, սակայն Միկլավ Գարդենս Իսթ /Արեւելք/ տանող ոչ մի նշան չկար: Նա թակեց Միկլավ Գարդենս Վեսթ 25 հասցեում գտնվող դուռը: Թեթրին Մեթերվել անունով մի կին բացեց դուռը, ով միանգամից մի քիչ զայրացած տոնով հարցրեց, թե արդյո՞ք նա Եհովայի վկա է, քանի որ նրանք այդ օրն արդեն երկու անգամ անհանգստացրել էին նրան: Երբ հերքեց դա եւ քաղաքավարի բացատրեց նրան անհանգստացնելու պատճառը, նա կարծես փոքր-ինչ շփոթված էր, բայց շարունակում էր բղավել, որ Միկլավ Գարդենս Իսթ պարզապես գոյություն չունի: Շնորհակալություն հայտնելով եւ եւս մեկ անգամ ներողություն խնդրելով անհանգստության համար՝ Բիլ Բամբերը հիշեց, որ ապահովագրական ընկերության իր ղեկավարներից մեկը՝ Տոգեֆ Կարուտեսը, ապրում է մոտակայքում: Նա գտավ նրա հասցեն եւ թակեց դուռը, բայց քանի որ ոչ ոք չպատասխանեց, շարժվեց դեպի Ալերթոն փողոց: Մեկ րոպե չանցած, տեսավ ոստիկանության սպա Ջեյմս Սմիթին, ով փողոցի հակառակ կողմում իր գործն էր անում: Սպան նրան առաջարկեց գնալ տեղի փոստային բաժանմունք եւ այնտեղից ճշտել այն հասցեն, որը ապահովագրական հաճախորդը փոխանցել էր նրան: Բիլը շնորհակալություն

Նիկոլա ԴՈՒՐԵՏԻՉ

հայտնեց խորհրդի համար եւ ասաց, որ արդեն մթնում է:

- Այո, մոտավորապես ժամը 20-ն է: Ավելի լավ է շտապեք,- ավելացրեց սպան եւ շարունակեց իր գործը: Փոստային բաժանմունքում փողոցների հատակագիծը չկար, ուստի Բիլը գնաց մոտակա թերթի կրպակն ու համոզեց սեփականատիրոջը՝ տիկին Լիլիան Պինչեռնին, ստուգել իր թերթի առաքման ցուցակի անունները՝ մանրամասն բացատրելով նրան խնդրի էությունը: Նա հաստատեց, որ Միկլավ Գարդենս Իսթ գոյություն չունի:

Պարտության մատնված, Բիլ Բամբերը վերջապես հանձնվեց եւ ճամփա ընկավ դեպի տուն:

Ժամը 21.00-ից մի փոքր շուտ նա վերադարձավ Բուվերթոն փողոցում գտնվող իրենց տուն: Հարեանները՝ Տոն Տոնսոնն ու նրա կին Ֆիննան, որ այգում էին, տեսան, թե ինչպես է նա շոշափում ետնադռան կողպեքը: Վերջապես նրան հաջողվեց բացել կողպեքն ու տուն մտնել: Տոնսոնները դեռ դրսում էին, երբ ընդամենը մի քանի րոպե անց Բիլ Բամբերը նորից դուրս եկավ եւ հանգիստ կանչեց նրանց, որ մտնեն իր տուն, սթափ եւ զուսպ ավելացնելով՝ «Եկեք... Տուլիային սպանել են»:

Քիչ անց ոստիկանները ժամանեցին: Տուլիա Բամբերը տասը հարված էր ստացել գլխին, մահացու հարվածը ստացել էր բութ առարկայով: Նրա գանգը փշրվել էր, իսկ վարդագույն ուղեղը ցաքուցրիվ էր եղել ողջ խոհանոցի կապույտ ու սպիտակ սալիկներին: Ամենուր արյուն էր: Դատախազն ընդգծեց, որ դա առանձնակի դաժան սպանություն է, քանի որ տասը հարվածից ցանկացածը կարող էր սպանել խեղճ Տուլիային: Դատաբժշկական փորձագետների եզրակացությամբ՝ մահը վրա էր հասել այդ օրը երեկոյան՝ 18:30-20:00 ընկած ժամանակահատվածում:

Բիլ Բամբերն իր մահացած կնոջ ահասարսուտ տեսարանից ցնցված՝ չէր երեւում: Նա կարծես թե հանգիստ ու հավասարակշռված էր: Որոշ ժամանակ անց, երբ ոստիկանությունն ավարտեց իր հետաքննությունը, Բիլը դուրս եկավ տնից, որտեղ տեղի էր ունեցել սպանությունը եւ տեղափոխվեց մի քանի կիլոմետր հեռավորության վրա գտնվող իր եղբոր՝ Ստեֆանի տուն: Իսկ չար լեզուները սկսեցին հարցեր ճոճել:

Ինչու՞ էր Բիլ Բամբերն այդքան բացահայտ խոսում իր աշխատանքի մասին բոլորովին անանուն տրամվայի ուղեկցորդի եւ անձանոթ մարդ-

կանց հետ, որոնց պարզապես նոր էր հանդիպել՝ անձանոթ հասցեն փնտրելիս: Միտումնավոր՞ էր ուստիկանական սպայի ուշադրությունը հրավիրել ստույգ ժամի վրա, շեշտելով, որ գրեթե ժամը ութն է եւ որ փոստային բաժանմունքը կարող է փակ լինել: Եվ, ի վերջո, ո՞վ էր այդ առեղծվածային պարոն Քուալթրոուն, ով այդ երեկո հեռախոսազանգով նրան խաբելով քաշել էր իր տնից: Եթե Մուսի Հիլլում նման հասցե գոյություն չուներ, արդյո՞ք պարոն Քուալթրոուն իրականում գոյություն ունի: Հարցեր, որոնք թունավոր բոռի պես գեռում էին:

Տուլիա Բամբերին տեղի գերեզմանատանը հուղարկավորելուց ընդամենը մեկ շաբաթ անց, ուղիղ փետրվարի 2-ին, Բիլ Բամբերը մեղադրվեց նրա սպանության մեջ: Առերեսվելով ուստիկանների մեղադրանքներին՝ Բիլ Բամբերը կարողանում էր միայն խղճուկ մեկնաբանություններ անել. «Դե, ի՞նչ կարող եմ ասել, բացի այն, որ ես միանգամայն անմեղ եմ»: Ինչպես եւ սպասվում էր՝ տաքլոիդները հաջողակ օր ունեցան, եւ դանակները դուրս ցցվեցին: Վերնագրերը սենսացիոն էին, սահմանակցելով անողորմության այնպես, որ, անգամ մի քանի շաբաթ անց, երբ դատական նիստերը սկսվեցին, Նույնիսկ մեղադրող կողմը որեւէ առարկություն չուներ, երբ պաշտպանական կողմը միջնորդեց, որ Լիվերպուլի ոչ մի բնակիչ չմասնակցի դատական նիստին:

Մեղադրող կողմն առանձնացրեց մի առանցքային տարր, որը հաստատվեց հետաքննության ընթացքում: Մասնավորապես, պարզ դարձավ, թե որտեղ էր զանգահարել առեղծվածային պարոն Քուալթրոուն: Չուտ պատահամբ Տուլիա Բամբերի սպանության գիշերը կատարված զանգը պետք է որ արված լիներ հեռախոսակայանից, քանի որ մետաղադրամով աշխատող հանրային հեռախոսի փողանցքն արգելափակված էր: Եվ այսպես, հեռախոսազանգը եւ դրա անսարքության մասին ծանուցումը ճիշտ ժամանակին ձայնագրվել էր հեռախոսակայանում, ըստ որի պարզ երեւում էր, որ զանգը կատարվել էր Ռոչեսթեր փողոցի Անֆիլդ 1627 հանրային հեռախոսախցիկից՝ Բամբերների տնից ընդամենը մի քանի մետր հեռավորության վրա: Այսպիսով, իհարկե, պարոն Բամբերը փաբում չէր գտնվում, որպեսզի պատասխաներ զանգին, հրճվանքով պարզաբանում էր մեղադրող կողմի փաստաբանը, հավելելով, որ հենց այդ պատճառով խորհրդավոր պարոն Քուալթրոունի համար

ավելի ուշ անհնար էր, պարոն Բամբերի փաթեթամանելուց հետո, կրկին զանգել նրան, միանգամայն պարզ պատճառով՝ Բիլ Բամբերն ու Քուալթրոուն միեկույն անձն էին: Բամբերը, ինչպես պնդում էր մեղադրող կողմը, ինքն էր հեռախոսազանգ կատարել, այնուհետև նստել էր տրամվայ եւ շտապել գարեջրատուն՝ ստանալու ոմն պարոն Քուալթրոոյի թողած հաղորդագրությունը: Ահա թե ինչու էր նա ընտրել համեմատաբար անսովոր անուն, որպեսզի այն ավելի հեշտ հիշվի հաղորդագրությունը գրանցող անձի կողմից, պնդում էր մեղադրող կողմը: Ավելին, նրա համար հարցումը տրամվայի ուղեկցորդին, ոստիկանական սպային եւ Սուլի Հիլի բնակիչներին իր համար արդարացված այլբի ստեղծելու լավ մշակված ծրագրի մի մասն էր կազմում, պնդում էր մեղադրող կողմը: Իսկ տուն վերադառնալուն պես կնոջը սպանված գտնելուց հետո նրա հանգիստ, անտարբեր պահվածքը բնորոշ է նրան, ով արդեն գիտեր, որ սպանությունը կատարվել է՝ հայտարարեց մեղադրող կողմի պաշտպանը: Բամբերի փաստաբանն առաջ քաշեց շատ պարզեցված մի պաշտպանություն, որը բաղկացած էր միայն մի քանի հայտարարություններից: Պաշտպան կողմը հիմնավորեց իր փաստարկներն այն պնդմամբ, որ ամբաստանյալը սպանություն չի գործել, եւ որ պաշտպան կողմի խնդիրը չէ ապացուցել Բիլ Բամբերի անմեղությունը կամ՝ ով է իրական մարդասպանը: Բամբերը Քուալթրոուն չէ, եւ որ այդ առեղծվածային անձի ինքնության պարզումը պաշտպանի խնդիրը չէ: Մեղադրյալն այդպիսի մեծ իրարանցում էր ստեղծել՝ պարզելու, թե որտեղ է գտնվում Միկլավ Գարդենս Իսթ հասցեում գտնվող տունը՝ այդպես էր պնդում պաշտպանական կողմը, քանի որ դա մի վաճառք էր, որը միանգամայն տարբերվում է սովորական վաճառքներից, եւ որովհետև նա ուներ անսպասելի շահույթ ստանալու հազվադեպ հնարավորություն: Ի լրումն, պաշտպանական կողմը հղում արեց, որ պարոն Բամբերը հրապարակայնորեն ի ցույց էր դրել իր բոլոր հույզերը, մի զգացում, որը չափազանց հազվադեպ էր նրա դեպքում: Ամեն դեպքում, դա նրա մեղավորությունը չէր ապացուցում, ընդգծեց պաշտպանական կողմը: Նա վերադարձավ իր սովորական բնույթին միայն սպանված կնոջ մարմինը տեսնելուց հետո: Նա կրկին դարձավ պարկեշտ, *իևտրոպերտ* անձնավորություն: Բացի այդ, պարոն Բամբերը բացարձակապես որեւէ դրդա-

պատճառ չունեն սպանելու իր կնոջը՝ եզրակացրեց դատապաշտպանը: Քրեական իրավունքի բոլոր կանոնների եւ ընթացակարգերի համաձայն՝ պաշտպանը միանգամայն իրավացի էր: Ոստիկանությունը բացի ենթադրություններից ու կասկածներից, որեւէ հիմնավոր ապացույց չուներ, եւ առաջադրված փաստերը հաշվի առնելով, Բիլ Բամբերը պետք է որ անմեղ ճանաչվեր: Այնուհանդերձ, դատավարության վերջին օրը դատարանից միայն մեկ ժամ պահանջվեց դատավճիռը կայացնելու համար: Ուիլյամ Հերբերտ Բամբերը մեղավոր ճանաչվեց սեփական կնոջ սպանության մեջ, եւ դատավորին ոչինչ անել չէր մնում, բացի նման դեպքերում դատավճիռը կայացնելուց՝ մահապատիժ կախաղանով:

Պաշտպանական կողմն անմիջապես բողոքարկեց: Մեկ շաբաթ անց Ուիլյամ Բամբերին տեղափոխեցին Լոնդոն, որտեղ նա ներկայացավ Ստրենդ կենտրոնական փողոցի Թագավորական դատարան: Լիվերպուլի հիստերիայից ու նախապաշարմունքներից հեռու՝ դատարանի երեք դատավորները եւս մեկ անգամ մանրակրկիտ ուսումնասիրեցին Բիլ Բամբերի դեմ ուղղված բոլոր վկայությունները: Երկու օր տեսած լսումներից հետո, դատարանը հեռացավ որոշում կայացնելու: Քառասունհինգ րոպե անց կրկին վերադարձավ եւ հրապարակեց կայացրած որոշումը՝ հայցը բավարարել եւ նախնական դատավճիռը բեկանել:

Ուիլյամ Բամբերը Լոնդոնի դատարանից հեռացավ որպես ազատ, բայց՝ զգայականորեն ջախջախված մարդ: Միայն երկու ամիս անց Ուիլյամ Բամբերը սրտի սուր կաթվածից պիտի մահանար Լիվերպուլի իր մենավոր տանը:

Եվ այսպես, այս տխուր եւ ուսանելի պատմությունը կունենար իր ավարտը, եթե մի քանի օր առաջ չլիներ Լույսը անպատահական մի դեպք, Ուիլյամ Բամբերի մասին իմ պատրաստած հաղորդումից հետո, որի հետ ես առնչվեցի, կամ ավելի ճիշտ՝ Ուիլյամ Բամբերի ողբերգության հետքերով փնտրտուքներն ինձ համար նոր բացահայտումների հիմք ստեղծեցին:

Հաղորդումը եզրափակեցի մի շարք անպատասխան բաց հարցերով՝ ո՞վ էր առեղծվածային պարոն Քուալթրոուն: Արդյո՞ք նա իրականում գոյություն ուներ, թե՞, ինչպես նախնական վարկածում պնդում էր մեղադրող կողմը, Բամբերն ու Քուալթրոուն Լույս անձն էին: Ինչպե՞ս էր

Նիկոլա ԴՈՒՐԵՏԻՉ

հնարավոր, որ, չնայած հիմնավոր ապացույցներին, դատարանը Ուիլյամ Բամբերին մեղավոր ճանաչեց: Արդյո՞ք Թագավորական դատարանը հետազայում նույն սխալը թույլ տվեց՝ պնդելով, որ նա անմեղ է: Եվ վերջապես, եթե մարդասպանը Ուիլյամ Բամբերը չէր, այդ դեպքում ո՞վ էր այդքան դաժանաբար սպանել Ջուլիա Բամբերին:

Հաղորդման հեռարձակումից մի քանի օր անց, իմ ավագ գործընկերու լրագրող Ֆիլիպ Ուդենը, ով մասնագիտացած էր դատական նիստերի մեջ, ճաշին BBC-ի ճաշարանում մտնեցավ ինձ: Մենք փոքր-ինչ զրուցեցինք, հետո հանկարծ, առանց որեւէ ակնհայտ պատճառի, նա ասաց, որ լսել է իմ հաղորդումը եւ հավանել այն: Ես շնորհակալություն հայտնեցի նրան սիրալիրության համար՝ հավելելով, որ հատկապես ուրախ էի դա լսել նրա նման բանիմաց արհեստավարժի կողմից: Իսկ հետո Ֆիլիպ Ուդենն ինձ հարցրեց, թե ինչպե՞ս եմ ես առնչվել «Ջուլիա եւ Ուիլյամ Բամբերների» գործին: Ես բացատրեցի, որ չբացահայտված դեպքերի եւ առեղծվածային մահերի ու անհետացումների վերաբերյալ հաղորդումների մի ամբողջ շարք էի պատրաստում՝ հավելելով, որ լրատվական թողարկումների մեր ընդհանուր գործընկերը՝ Սթիվեն Բրաունը, բոլորովին պատահաբար, ինձ հղում էր արել Ջուլիա եւ Ուիլյամ Բամբերի պատմությունը: Մի պահ թվաց, թե Ֆիլիպ Ուդենը թեթևակի ապշած է, եւ նրա դեմքին կարծես անտեսանելի մի ստվեր սահեց, սակայն սկզբում ես դա բացատրեցի BBC ճաշարանի աղոտ, նեղնային լուսավորությամբ: Նա լռեց, մտածմունքների մեջ ընկավ, կու՛մկում խմեց թեյը, եւ ապա երկար դադարից հետո վերջապես ասաց.

- Գիտե՞ք, թե ով է Սթիվեն Բրաունը: Դուք գիտե՞ք, որ դա նրա իսկական անունը չէ: Նրա հայտնած այս տեղեկությունն ինձ շփոթեցրեց եւ միայն կարողացա բերանիցս թռցնել.

-Ոչ, չգիտեի:

- Նա փոխել է անունը, որպեսզի հանրության շրջանում անհարմարություններից զերծ մնա, որպեսզի մտահոգիչ հարցեր տվող տաղտկալի մարդիկ իրեն չհետապնդեն: Նրա իրական անունը Սթիվեն Բամբեր է, եւ նա Ուիլյամի կրտսեր եղբայրն է:

Այս լուրն ինձ մինչեւ ոսկորներս ցնցեց, թեւեւ ես ամեն ինչ արեցի դա թողարկելու համար, հուսալով, որ BBC -ի ճաշարանի աղոտ նեղնային

լուսավորությունը կթաքցնի իմ զարմանքը: Մեջս սկսեցին հարցեր ճարճատել՝ ինչպես շագանակները բովելիս: Ի՞նչ նպատակով էր Սթիվն ինձ ուղղորդել եղբոր ու հարսի սպանության գործին: Հնարավո՞ր էր՝ նա լիներ առեղծվածային Քուայթրոուն, ինչը կնշանակեր, որ նա է իրական մարդասպանը: Ի վերջո, Տուլիան պետք է որ լավ ճանաչեր իր մարդասպանին, հակառակ դեպքում նա նրան տուն չէր թողնի: Սա, ինչպես ասում են, հանցանքի վայրում մարդասպանի վերադա՞րձն էր: Արդյո՞ք Սթիվենն, ի վերջո, ցանկացել էր անուղղակիորեն ընդունել իր մեղքը, որը կրժում էր իրեն ամբողջ կյանքի ընթացքում:

Ես մտորումների մեջ էի, մինչեւ որ Ֆիլիպ Ուդենը վերջացրեց թեյն ու վերադարձավ իր աշխատասենյակը: Ես վեր թռա աթոռից, ասես դրա վրա կրակամոխրի մի ողջ կույտ կար, եւ փորձելով որքան հնարավոր է անմեղ երեւալ, մոտեցա շիկահեր, գանգուր կեղծամին, որը պատկանում էր ճաշարանի գանձապահ Ֆլոյին, այլ կերպ ասած՝ հնարավոր ու անհնար ամեն տեսակ տեղեկատվական աղբյուրներին, եւ մտնելով անհոգ մի մարդու կերպարի մեջ, ով, կհավատա՞ք, հանկարծ ինչ-որ բան էր հիշել եւ նրան հարցրի, թե արդյո՞ք այդ օրը ճաշարանում տեսել էր Սթիվեն Բրաունին:

-Չե՞ք լսել,- պատասխանեց շիկահեր կեղծամը:- Սթիվեն Բրաունն անցյալ շաբաթ ինքնասպան եղավ... *ըստ երեւոյթին՝ քաղցկեղի պատճառով*,- ասաց նա՝ արտաբերելով վերջին երկու բառն այնպես, ասես հայիոյական, միանգամայն անհարիր բան էր ասում մի մարդու վերաբերյալ, ով իր ողջ կյանքի ընթացքում իսկական հրեշտակ էր եղել, եւ ով ողջ կյանքում կրել էր ցավ ու տառապանք:

ՎԱՅՆՈՒՆ ԿԱՄՐՏԻ ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1.1978 թվականի սեպտեմբերի 7-ի հինգշաբթին լուսացավ Լոնդոնի համար բոլորովին ոչ արտասովոր՝ ամպոտ ու անձրեւոտ Էր: Ամբողջ առավոտ բարակ անձեւ Էր մաղում եւ միայն առավոտյան ժամը 11-ի սահմաններում այն դադարեց, սակայն երկինքը շարունակում Էր ամպամած մնալ: Այդուհանդերձ, հենց այս փաստն անսահման ուրախություն պատճառեց կարճահասակ ու ամրակազմ, մկանուտ միջերկրածովյան արտաքինով այդ տղամարդուն՝ թխավուն մաշկի գույնով եւ հաստ, մուգ, գրեթե ագռավի պես սեւ մազերով ու մուգ աչքերով, որոնց վերետում ոլորված էին երկու հաստ, խիտ, թրթուրանման հոնքերը: Առաջին հայացքից Նա նման Էր կորսիկացու, թուրքի, հույնի կամ սիցիլիացու, բայց ոչ դանիացու, ինչպես Նշված Էր անձնագրում: Թեպետեւ սա եւս մի դետալ Էր, որը կարող Էր մոլորության մատնել միամիտ օրինապահին՝ սխալ եզրակացություններ անելու: Այսինքն, թեւ Դանիայի քաղաքացի Էր, սակայն թխամորթ տղամարդը ծագումով իտալացի Էր եւ ճանապարհորդում Էր Ֆանֆրանկո Տուլիանո անվամբ, մի բան, որ «Սավո» հյուրանոցի ընդունարանի աշխատակից Դեբին հետազայում պիտի հիշեր հյուրանոցի գրանցամատյանի օգնությամբ՝ Սքոթլանդ Յարդի տեսուչների հետ զրույցի ժամանակ: Նա նաեւ պիտի հիշեր, որ արտասովոր տղամարդն ասել Էր, թե նախորդ ամսվա ընթացքում արդեն երրորդ անգամն Էր այցելում Լոնդոն, եւ որ ինքն արվեստի դիլեր Է: Հիշողությունից ետ կանչելով այդ օրվա իրադարձությունները՝ «Սավոյի» աշխատակիցները պիտի պարզեին, որ նրբաճաշակ ոճով հագնված այցելուն, որը հյուրընկալվում Էր 218 սենյակում, առավոտյան ժամը 11-ին մոտ իջել Էր հյուրանոցի նախասրահ, ընդունարանում վճարել իր հաշիվն ու վերցրել ուղեբեռը, որը բաղկացած Էր մի փոքր կաշվե ուղեպայուսակից, ինչպիսին հաճախ օգտագործում էին Սիթի-ի փաստաբանները: Թխաթույր վերարկու հագած եւ մուգ մոխրագույն գլխարկ դրած՝ ձեռքին սեւ հովանոց, մառախլապատ այդ առավոտ նա դուրս Էր եկել եւ քայլերն ուղղել դեպի Սթրենդ՝ Վաթնոլ կամրջի ուղղությամբ, որպեսզի մեկ ժամ անց տաքսի նստած վերադառնար Տրաֆալգարի

հրապարակից, որից հետո, վերցնելով ճամպրուկը, անհետացել էր:

Լոնդոնի այդ ցրտաշունչ ու անձրեւոտ առավոտյան, երբ «Սավոյի» երկրորդ հարկի 218 սենյակի լոգարանում սափրվում էր Ջանֆրանկո Տուլիանոն, ով աշխատակիցների շրջանում առավելս հայտնի է Պիկադիլի կեղծանվամբ, ժպտաց այն մտքով, որ խաղում էր նրա գլխում, երբ բացեց աչքերն այդ առավոտ: Նա խորհրդանշական հեգնանք էր գտել այն բանում, որ, մասնավորապես, այդ օրը՝ սեպտեմբերի 7-ին, իր գլխավոր գործատուն՝ Բուլդարիայի պետության ղեկավար Թոդոր ժիվկովը, նշում էր իր վաթսուևյոթերորդ տարեդարձը:

«Սա միանգամայն տեղին ծննդյան նվեր կլինի», - մտածեց թխաղեմ այցելուն «Սավոյում»՝ դեմքից լվանալով սափրելու քսուքի մնացորդն ու երեսին քսելով բուրավետ լոսյոն: Նա սանրեց խիտ, մուգ մազերը, ինչպես նաեւ՝ թավ հոնքերը, իսկ հետո իր մազոտ թելատակին գնդիկավոր դեզոդորան քսեց: Այնուհետեւ զգուշությամբ օծանելիքի սրվակն ու սափրվելու քսուքը դեզոդորանտի հետ մեկտեղ դրեց փոքրիկ թավշե տոպրակի մեջ, որի մեջ տեղավորել էր նաեւ ատամի մածուկն ու խոզանակը: Հետո խնամքով տեղավորեց միանգամյա օգտագործման ածելին պոլիէթիլենային տոպրակի մեջ, որը նույնպես դրեց այդ շագանակագույն թավշե տոպրակի մեջ: Նա նույնն արեց իր մետաղյա սանրի հետ, իսկ հետո այդ ամբողջ տոպրակը խցկեց ճամպրուկի մի անկյունում, որի մեջ նա արդեն կոկիկ դասավորել էր մի քանի ներքնազգեստ, երկու վերնաշապիկ, մի քանի զույգ սեւ բամբակյա եւ մետաքսե զուլպաներ, գծավոր մուգ կապույտ գիշերազգեստ: Նա զգուշորեն փակեց ճամպրուկն ու դրեց հյուրանոցի դռան մոտ: Այնուհետեւ սեղանի վրայից վերցրեց մի սեւ կաշվե պատյան՝ ամրացված դեղին մետաղյա անկյուններով, բացեց եւ մեկ անգամ եւս հավաստիացավ, որ անձնագիրն ու ավիատոմսն այնտեղ են: Նա փակեց այն եւ խցկեց բաճկոնի ներսի ձախ գրպանը, որը կախված էր զգեստապահարանի դռան կախիչից: Հետո հազավ բաճկոնն ու թեթեւ անձրեւանոցը, եւս մեկ անգամ հայացքը պտտեց սենյակով, կռացավ, ձախ ձեռքով բարձրացրեց ճամպրուկը, աջով՝ գլխարկը դրեց գլխին, դռան մոտ դրված անձրեւանոցի դարակից դուրս քաշեց մեծ, սեւ տղամարդու հովանոցը եւ իր հետեւից փակեց հյուրանոցի 218-րդ սենյակի դուռը: Նա վերելակով իջավ հյուրանոցի նախասենյակ, ճամպրուկը թողեց պահոցում, կանխիկ վճարեց հյու-

րանոցի հաշիվը, քաղաքավարի ժպտաց ընդունարանի բարեկամ, շիկահեր աշխատակցուհուն եւ դուրս եկավ հյուրանոցից: Նա նկատեց, որ անձրեւն արդեն դադարել էր, բայց Սթրենդի մերձակա մայթը լի էր ջրափոսերով, իսկ Լոնդոնի վերելում երկինքը մռայլ էր ու սպառնալից:

«Իդեալական է», - մտածեց նա եւ շարժվեց Վաթնլոլ կամրջի ուղղությամբ, որը հյուրանոցի մուտքից ընդամենը մի քանի հարյուր մետր դեպի արեւելք էր, եւ Բուշ Հաուսից՝ BBC-ի մեդիաընկերության միջազգային կենտրոնակայանից, Լույնքան հեռու՝ դեպի արեւմուտք, որտեղ աշխատում էր իր հերթական գոհը:

2. Գեորգի Մարկովը պատկառելի անձնավորություն էր՝ նեղ, Լուրբ դեմքով, մուգ, աշխույժ, խորաթափանց աչքերով եւ խիտ, ուղիղ, ալեհեր մազերով: Նա բարձրահասակ էր, վայելչակազմ՝ ավելի շատ նման լատինամերիկյան ալֆոնսի կամ դերասանի, քան բուլղարացի այլախոհի, գրողի կամ լրագրողի, թեեւ իմաստուն այդ մարդը միշտ խուսափում էր նման կարծրատիպերից, քանի որ դրանք, ըստ Էուրոյան, լիովին սխալ են: Լոնդոնի արվարձաններից մեկում տեղակայված փոքրիկ առանձնատան հյուրասենյակի վարագույրները ետ քաշելիս՝ Գեորգին, ասես չէր էլ նկատում այն մռայլ, խոնավ օրը, որ իջել էր քաղաքի ու արվարձանի վրա՝ հենց սեպտեմբերի 7-ի այդ օրը: Նա բոլորովին այլ մտմտուքների մեջ էր, որ տանջում էին նրա քունն այն ժամանակից ի վեր, երբ իրեն նվիրել էր քննադատելու կոմունիստական ռեժիմը, որ կապանքների մեջ էր դրել իր հին հայրենիքը, հարձակվելով, հատկապես, BBC-ով, Deutsche Welle-ով եւ Radio Free Europe-ով հեռարձակվող քննադատական գրվածքներով ու լուսաբանումներով. թիրախում հիմնական առաջամարտիկներն ու ջատագույններն էին՝ բուլղարական Լոմենկլատուրան եւ Նախագահ Թոդոր ժիվկովը: Թեեւ գիտեր, որ ոչինչ չի կարող ստիպել իրեն դադարեցնելու իր սուր քննադատությունը, այնուհանդերձ, Նախորդ գիշերվա անսնուն հեռախոսազանգը թեթեւ ցնցել էր նրան՝ խարխուլելով նրա բնածին ինքնավստահությունն ու գրեթե պարտավորական հոգեկան անդորրը: Գծի մյուս կողմում գտնվող անձանոթի ձայնը սառը, կատարյալ հանգիստ ու միալար տոնով եւ կտրատված անգլերենով, ինչպես մի մարդու, որ վերջերս էր լեզուն սովորել, տեղեկացրել էր, որ նա պետք է զգուշանա, քանի որ անհայտ անձինք եւս մեկ անգամ կփորձեն «լռեցնել իրեն»: Նա գործածեց հենց այդ բառերը՝ կլ-

ռեցնեն իրեն, ասես անհարմար զգալով ու ամաչելով արտաբերել այն բառերը, որոնք ճշգրտորեն կկարագրեին լրագրողի դաժան թշնամիների մտադրությունները: Գեորգիի հավաստմամբ, անանուն տեղեկատուն ուղղակի ասել էր, որ այդ տեղեկությունն իրեն է փոխանցվել պետության ղեկավարին մոտ կանգնած հավաստի մի աղբյուրից, եւ իրեն թույլ են տվել, որպեսզի փոխանցի, թե ինչպես է կատարվելու այդ գործով մահափորձը: Անձանոթը, թեւս դժկամորեն, ինչը կարելի էր զգալ նրա ձայնի տոնից, ասել էր, որ նրան թունավորելու են:

Չնայած Գեորգիին չհաջողվեց այդ առիթով անտարբեր մնալ, թեւս ակնկալվում էր, որ իր կյանքում տեղի ունեցած երկու անհաջող մահափորձից հետո նա կարող էր եւ վարժված լինել դրան, եթե նման բաներին ընդհանրապես կարելի է վարժվել, հեռախոսագանգն ավելի շատ վախեցրել էր նրա կնոջը՝ Անաբելին, եւ նա պնդում էր, որ Գեորգին ուշադիր լինի, թե ուր է զնում եւ ում հետ է ուտում եւ խմում: Նրա համար ամենաապահով վայրերը, ինչպես նա էր կարծում, Բուշ Հաուսի ներքնահարկում տեղակայված ռեստորանն ու ակումբն էին: Գեորգին կնոջը դեմ չգնաց, քանի որ, ամեն դեպքում, դրանք նաեւ իր սիրած վայրերն էին, հատկապես ակումբը, որտեղ նա պարբերաբար այցելում էր ինչպես իր, այնպես էլ մյուս բաժինների լրագրող-գործընկերների հետ՝ մի բաժակ լավ պորտվեյն կամ զարեջուր խմելու:

Վաթեռլո կայարան հասնելու համար գնացքով մոտ քսան րոպե պահանջվեց, որն օրվա այդ ժամին մարդաշատ չէր. թռուցիկ հայացք նետելով մեքենայում գտնվող փոքրաթիվ ուղեւորների վրա, ասես հավելյալ ինքնավստահություն ձեռքբերելու համար, քանի որ նախորդ գիշերվա հեռախոսագանգից դեռ անհանգիստ էր, նա նստեց հարմարավետ ու փափուկ նստատեղին, բացեց թերթը եւ, ինչպես միշտ, նախ, աչքի անցկացրեց «Միջազգային լուրերի» բաժինը՝ ստուգելով, թե արդյո՞ք որեւէ տրոություն կգտնի իր հին հայրենիքի մասին: Բուլղարիայի վերաբերյալ նա ոչինչ չգտավ, սակայն շաբաթներ շարունակ բրիտանական լրագրերը գանազան պատմություններ, վերլուծություններ ու ֆելիետոններ էին տպագրում Պրահայի Գարնան տասնամյակի առնչությամբ, ավելի ստույգ՝ 1968 թվականի օգոստոսին դրա մարման հետ կապված: «Թայմս»-ի այդ օրվա համարում կար մի բան, եւ Գեորգին նկատեց, ինչպես շատ բաներ նախկինում, որ այն հիմնված էր շատ թույլ

պատմական փաստերի վրա, բայց կաշուն էր եւ գաղափարապէս երանգավորված եզրահանգումներ ուներ: Այնուամենայնիւ, եւ սա Գեորգիի խորն արմատավորված համոզմունքն էր, կարելի էր, որ մարդը պայքարի սովետական բոլշեւիզմի մութ հրեշի եւ նրա բոլոր ճյուղավորումների դէմ՝ հնարավոր բոլոր միջոցներով, բայց ամբողջ Արեւելյան Եվրոպայով մեկ:

Ընթերցելով այդ լրագրի կարելի էր մասը, մինչ գնացքը կհասներ կայարան, եւ պատահաբար տեսավ, որ ցուցահանդէս է բացվել Հէյվարդ պատկերասրահում՝ Թեմզայի Սաութբանկի վրա, եւ որոշեց տեսնել այն՝ նախքան աշխատավայր հասնելը: Դեռեւս բավական ժամանակ ուներ: Նա դուրս եկավ Վաթեռլո կանգառից արեւելյան ելքով, քայլեց Սեֆեմ փողոցով դեպի համերգային համալիր, իսկ հետո բրիտանական կինոինստիտուտի կողքի աստճաններով բարձրանալով՝ քայլեց դեպի պատկերասրահ: Սակայն ի գարմանս նրա՝ պարզվեց, որ ցուցահանդէսը կբացվի մեկ շաբաթ անց: Նա բացեց լրագիրն ու ստուգեց՝ տեղեկությունը ճիշտ էր: Նախորդ անգամ նրան չէր հաջողվել ներկա գտնվել այդ ցուցահանդէսին: Նա կրունկների վրա շրջվեց եւ աստիճաններով ետ իջավ դեպի Բրիտանական կինոինստիտուտ, նայեց նոր հրատարակություններն ու գնեց Տվետանա Թոդորովայի «Արձակի պոետիկան», ինստիտուտի սրճարանից մի բաժակ թեյ գնեց եւ նույն աստիճաններով բարձրացավ դեպի Վաթեռլո կամուրջն ու ավտոբուսի կանգառը: Այդ պահին նորից անձրեւ սկսեց, եւ Գեորգին որոշեց սպասել ավտոբուսին, թեւ Բուշ Հաուն հասնելու համար պետք է ընդամենը անցներ կամուրջը եւ մի քանի հարյուր մետր Սթրենդ-ով բարձրանար դեպի Սենթ-Մերի-Լը-Սթրենդ, որը գտնվում է BBC-ի հարավարեւելյան թեւի մուտքի դիմաց: Եվ այսպէս, եւ կանգառի պլաստիկ երդիկի տակ կանգնած երկու այլ մարդկանց հետ խոնկեց՝ որոշելով սպասել 68 համարի ավտոբուսին: Հենց որ ավտոբուսը դուրս եկավ շրջանցիկ ճանապարհից ու կամրջով շարժվեց դեպի կանգառ՝ Գեորգին իր աջ ազդրին մի թեթեւ հարված զգաց: Նա շուռ եկավ ու տեսավ թավ հոնքերով մի թիկնեղ, նրբաճաշակ հագնված տղամարդու, ով օտար առողանությամբ, անզլերեն ներողություն խնդրելով, կռացավ՝ վերցնելու մայթին ընկած հովանոցը: Նա բարձրացավ, եւ մեկ անգամ «ներողություն» խնդրեց եւ արագ անցնելով կամրջի մյուս կողմը, մի տաքսի կանգնեցրեց, ցատկեց դրա

մեջ ու անհետացավ՝ շարժվելով Վաթեռլո կայարանի ուղղությամբ:

3. Լոնդոնի Քլերքենվել շրջանի երրորդ հարկի բնակարանի լույսերն ամբողջ գիշեր վառվում էին: Տանտերը՝ ցածրահասակ, միջին տարիքի բուլղարացի մի ներգաղթյալ, ով Ավստրալիայից հասել էր Լոնդոն,- որտեղ եւ ճանապարհատրանսպորտային պատահարի հետեւանքով քսան տարի առաջ կորցրել էր ոտքը, եւ վարորդը նրան արքայական գումար էր փոխհատուցել ապահովագրական ընկերության միջոցով, ինչի շնորհիվ նա այդ գումարով գնել էր մեկսենյականոց փոքրիկ բնակարան Լոնդոնում,- կամաց-կամաց արթնանում էր ակոհուլային թմբիրից: Սա արտառոց բան չէր այդ փոքրիկ, շարքային ներգաղթյալի համար, ով բնակարանը գնելուց հետո իր մնացած խնայողություններն ավելացրեց BBC-ի միջազգային ծառայության բուլղարական բաժնում աշխատելով որպես մեքենագրող, եւ ով հաճախ աշխատանքն ավարտելուց հետո հայտնվում էր BBC-ի ակումբում՝ իր գործընկեր-լրագրողների ուրախ ընկերակցությամբ, որոնք տրվում էին խմիչքին եւ ամեն գիշեր հետաքրքիր պատմություններ պատմում: Քանի դեռ նրա դիմացի ցածր վաճառասեղանին ուրիշների կողմից վճարված խմիչքներ կային դրված, փոքրիկ բուլղարացին դեմ չէր, որ գինովցած գործընկերները կատակեին իր չափազանց անհաջող անվան շուրջ: Նրա անունը Թոդոր Ժիվկով էր, թեեւ նա, անշուշտ, որեւէ բարեկամական կապ չուներ Բուլղարիայի համանուն նախագահի հետ: Ընտանեկան այդ դժբախտ ժառանգության ու անեծքի պատճառով, որ նա կրելու էր ողջ կյանքի ընթացքում, բուլղարացի ներգաղթյալին կնքեցին Նախագահ մականունով:

Ինչպես եւ ամեն առավոտ, Նախագահը, նախ, մանրակրկիտ շփեց ծախ ազդրի կոճը՝ փորձելով մի քիչ կյանք տարածել դրա մեջ, հատուկ քսուքով պատեց այն, մի կտոր փափուկ կտորով փաթաթեց եւ քաշեց կոշտ փայտե պրոթեզը: Նա կաղալով մտավ լոգարան, սառը ջրով ցայեց դեմքը, թաց ձեռքերով ետ տարավ նոսր, շագանակագույն մազերը, մի քիչ ատամի մածուկ ճզմեց ցուցամատի վրա, բերանով անցկացրեց, մի կում ջուր խմեց եւ ամբողջը թքեց ճաքճաքած, կեղտոտ լվացարանի մեջ: Վերադառնալով խոհանոց՝ հայացքով գննեց սառնարանը, որի մեջ, բացի քիչ մնացած գարեջրից, մի շիշ հանքային ջրից, մի փոքր ջեմի ապակե տարայից ու կես բորբոսնած կիտրոնից, ուրիշ ոչինչ չկար:

Նա հանեց ջեմը, երկու կտոր հաց խցկեց տոստերի մեջ եւ դրանք իրար միացրեց: Ապա մոտեցավ դռանը, բացեց այն եւ դռան ուղեգորգի վրայից վերցրեց երկու լիտր թարմ կաթն ու Le Monde-ի Լախորդ օրվա համարը, որ նրան ամեն առավոտ հանձնում էին շենքի առաջին հարկի խանութից: Չոր բոված հացի կտորը ջեմով ծամելիս, ամեն մի պատահող սառը կաթով թաթախելով, բացեց լրագիրը: Նրա ուշադրությունն անմիջապես սեւեռվեց վերնագրի վրա՝ «Ձախողված մահափորձ բուլղարացի ընդդիմադրի դեմ»: Նախագահն ապշած կենտրոնացավ լուրերի այդ մասի վրա: «Համաձայն արտգործնախարարության եւ կառավարության կից աղբյուրների տրամադրած տեղեկատվության, անցյալ շաբաթ Փարիզի մետրոյի կայարանում անհաջող մահափորձ է կատարվել բուլղարացի ընդդիմադիր Վլադիմիր Կոստովի դեմ: Անհայտ անձը, դեռես չբացահայտված զենքից, թունավոր կրակոց է արձակել իր զոհի վրա, ինչի հետեւանքով, նրա հագին եղած հաստ վերարկուի հաշվին, տուժածի մաշկը միայն մակերեսային քերծվածք է ստացել, որի հետեւանքով վերջինս ջերմություն է ունեցել: Պարոն Կոստովին հետազոտող բժիշկները պարզել են, որ փամփուշտը փոքր զնդածե զնդիկ է, որը պարունակում է ռիցինի զգալի քանակությամբ մահացու թույն: Հետաքննության ընթացքում պարոն Կոստովը հայտարարել է, որ հարձակումն իրականացրել է անձանոթ մի մարդ, որի ձեռքին եղել է մի փոքրիկ պայուսակ: Հետաքննությունը շարունակվում է»: Նախագահը ցած դրեց լրագիրը, կաթի կիսադատարկ շիշը դրեց սառնարանի մեջ, վառեց ծխախոտը եւ, զգուշորեն փակելով բնակարանի մուտքի դուռը, շարժվեց դեպի BBC-ի շենք՝ մութ մտքերով պարուրված, որ սկսեցին ակտիվանալ այդ նորությունն ընթերցելուց հետո:

4. Հյուրանոցից դուրս գալով՝ նրբաճաշակ հագնված կարճահասակ տղամարդն՝ աջ ձեռքին հովանոց, Վաթեռլո կամրջից արագորեն քայլեց դեպի մոտակա կանգառը, որտեղից ավտոբուսները մեկնում են դեպի Վաթեռլո կայարան: Նա ստիպված չէր երկար սպասել: Կարմիր կիսադատարկ 68 համարի երկհարկանի ավտոբուսը կամրջի վրայով նրան տարավ մինչեւ Յորք փողոցի կանգառը, եւ թխադեմ, գիրուկ տղամարդը բարձրացավ կեղտոտ ու հոտած աստիճաններով, որոնք Յորք փողոցից Շելլ շենքի միջով անցնելով՝ տանում էին դեպի անցուղի եւ Վաթեռլո կայարանի հյուսիս-արեւմուտք: «Վ. Հ. Սմիթ» կայարանի գլ-

խավոր սպասարահի կենտրոնից ևա զևեց «Թայմս»-ի վերջին համարը, մտավ «Բուրգեր Զինգ» ռեստորան, պատվիրեց սեւ սուրճ ու մի բլիթ եւ իր գլխարկն ու հովանոցը տեղավորելով կողքի աթոռի վրա, ևստեց սեղանի մոտ, որտեղից լավ տեսանելի էր 1, 2, 3 եւ 4 ուղեւորահարթակներ ժամանող բոլոր ուղեւորների հոսքը: Նա գիտեր, որ Գեորգիի գնացքը հասել էր այդ կառամատույցներից մեկի մոտ, եւ եթե անգամ փոփոխություններ եղած լինեին, իր ևստած տեղից հստակ տեսնում էր հսկայական այն տախտակը, որի վրա ցուցվում էին գնացքների մեկնման ու ժամանման մասին տեղեկությունները: Իր դիտակետում հարմար տեղավորվելով՝ վերջապես բացեց լրագիրն ու ձեւացրեց, թե իբր կլանված կարդալիս ինչ-որ կորուստն գրավել է ուշադրությունը, թեւ սուր աչքը կարող էր հեշտությամբ նկատել, որ գիրուկ տղամարդը ևայում էր լրագրի էջերից այն կողմ եւ զննում մարդկանց հեղեղը, որ հոսում էր դեպի արեւելյան ու արեւմտյան կայարանների ելքերը:

Նա հանգիստ վերջացրեց կարկանդակը եւ, սուրճի վերջին կումն անելիս, տեսավ բարձրահասակ, ալեհեր այն տղամարդուն, որին, մարդկանց ամբոխի միջից, հանդիպել ու հետեւել էր՝ ուսումնասիրելով նրա վերջին օրերի տեղաշարժը: Նա հանգիստ ծալեց լրագիրը, խոթեց անձրեւանոցի ձախ գրպանը, գլխարկը դրեց, վերցրեց կողքի աթոռի վրա դրված հովանոցը եւ, մոտ երեսուն մետր տարածություն թողնելով, սկսեց կրկակոխ հետեւել Գեորգի Մարկովի ևուրբ կազմվածքին, ով, ինչպես միշտ, գլխաբաց էր՝ կրելով միայն թեթեւ, կապտամոխրագույն գլխարկով բաճկոն: Նրա «պոչին ևստեց» մինչեւ Հայվարդ պատկերասրահի մուտքը, որտեղ Գեորգին դռների առջեւ հանկարծ կանգ առավ ու սկսեց կարդալ ապակե պատին փակցված պատկերասրահի ծրագիրը: Կարճահասակ ու գիրուկ տղամարդը պետք է արագ որոշում կայացներ: Եթե մոտենար զոհին ու ձեւացներ, թե ինքը եւս հետաքրքրված է պատկերասրահի ծրագրով, ապա դա չափազանց վտանգավոր կլիներ, եւ կարող էր անտեղի իր վրա հրավիրել զոհի ուշադրությունը: Ահա թե ինչու ևա քայլեց պատկերասրահի մոտով եւ աստիճաններով բարձրացավ դեպի Վաթեռլո կամուրջն ու ավտոբուսի կանգառը: Գիտեր, որ դա միակ երթուղին է, եւ որ Գեորգին պետք է այդտեղից շարժվեր դեպի BBC-ի գրասենյակ: Ավտոբուսի կանգառում միայն երկու երիտասարդ էին՝ մի տղա ու մի աղջիկ, որոնք, իրարով տարված, չէին էլ նկատում իրենց շր-

Նիկոլա ԴՈՒՐԵՏԻՉ

ջապատող աշխարհը: Տուփանոն կանգ առավ ավտոբուսի կանգառի ծածկի տակ եւ որոշեց սպասել: Մեկ րոպե չանցած՝ Վաթեռլո կամրջի վերեւի շրջանցիկ ճանապարհից ուղղություն վերցնելով, ավտոբուսը մոտեցավ, եւ երիտասարդ զույգը նստեց: Այդ պահին կրկին լոնդոնյան բարակ անձրեւ մաղեց: Գեորգի Մարկովի այեհեր գլուխը վերջապես հայտնվեց Հայվարդ պատկերասրահից բարձրացող աստիճանների վերելում: Տուփանոյին թվաց, թե նա տատանվում էր, ասես կանգնած էր դիլեմայի առաջ՝ ոտքով անցնել կամ ուրջը, թե՛ սպասել ավտոբուսին, որը նրան երկու կանգառ կտաներ: Մի ձեռքով ինչ-որ գիրք էր բռնել, իսկ մյուսով՝ պլաստմասե բաժակով թեյ: Նա որոշեց սպասել ավտոբուսին: Մի կին ծածկի տակ նրանց միացավ: Հետո 68 համարի ավտոբուսը կանգառ հասավ: Տուփանոն հետեւից արագ մոտեցավ Մարկովին, գնդիկը կրակեց գոհի աջ ազդրի մեջ, վայր գցեց հովանոցը՝ ասես պատահմամբ ընկավ, դիպչելով գոհին, անմիջապես ներողություն խնդրեց, կռացավ, վերցրեց հովանոցը, կարճ քրթմնջաց՝ «ներեցե՛ք» եւ, արագ անցնելով կամրջի մյուս կողմը, նստեց մոտեցող տաքսին ու դիմեց վարորդին.

- Խորհրդարանի շենք, խնդրում եմ:

Երբ մեքենան շարժվեց դեպի շրջանաձեւ խաչմերուկ, ուր այն պետք է թեքվեր դեպի Յորք Ռոուդ, որից հետո՝ Վեսթմինիսթերյան կամուրջ, աչքի ծայրով Տուփանոն տեսավ 68 համարի ավտոբուսը, որը շարժվում էր հակառակ ուղղությամբ: Հասնելով Վեսթմինիսթերյան կամրջին՝ նա թեքվեց առաջ ու վարորդին ասաց.

-Պլանները փոխվեցին: Կարո՞ղ եք ինձ տանել «Սավո» հյուրանոց, հետո սպասել ինձ ու տանել Հիթրոու:

-Խնդիր չէ, պարո՛ն,- անտարբեր պատասխանեց վարորդը, սովորության համաձայն ավելացնելով,- իսկ ու՞ր եք գնում:

-Փարիզ,- ստեց Տուփանոն եւ ուրախությամբ նայեց Լոնդոնի՝ անձրեւով լվացված փողոցներին, որ մի տեսակ ավելի թարմ ու անբիծ էին թվում. նա մի պահ միտք արեց, եւ ակնարկային ժպիտ խաղաց նրա դեմքին:

5. Երբ Նախագահը բաժին հասավ, Գեորգին արդեն սեղանի մոտ նստած՝ ինչ-որ բան էր գրում: Երիտասարդ, բաժնի նորաթուխ անդամ Գոցե Սիմեոնովը թարգմանում էր BBC-ի հայտնի մեկնաբան Ալեքսանդր Գոլբերգի ամենօրյա մեկնաբանությունները, իսկ Լաւա Վելյովսկան

պատրաստվում էր մեկնել ստուդիա՝ ծայնագրելու «Այսօր» հաղորդումը: Անծրեանոցն ու ճամպուուկը սեղանի վրա գցելով՝ Թողորը երիտասարդ լրագրողին ասաց.

- Հիմա ես գնում եմ ճաշարան մի բաժակ թեյ խմելու, իսկ հետո քեզ համար կմքենագրեմ: Իսկ ուրիշ ինչ-որ մեկը բան կուզի՞:

- Իսկողում եմ, ինձ համար մի բաժակ դարջիլինգ* /բարձրորակ թեյ, որ աճում է Հնդկաստանում/ կբերես: Ես ինձ այնքան էլ լավ չեմ զգում... Կարծես թե ջերմում եմ,-կարճ կապեց Գեորգին եւ վերադարձավ իր տքստին:

- Դե, եթե ամեն դեպքում իջնում ես, ինձ համար մի հատ կիթ-կաթ շոկոլադ ու մի հատ էլ էրլ գրեյ շոկոլադ կվերցնես,- ավելացրեց Լանան:

- Գո՞ց:

- Ո՛չ, ոչինչ պետք չէ՛, շնորհակալություն:

Վերելակով իջնելիս՝ Նախագահը ետ հրեց ճոճվող դռները եւ, մտնելով BBC-ի ռեստորան, նկատեց Մարտին Եսենսկիին՝ խորվաթ լրագրողին, ում ճանաչում էր երկար ժամանակ, եւ ում շատ էր հավանում, քանի որ վերջինս գծում չէր եւ ակումբում խմիչքների համար հաճախ ինքն էր վճարում: Սակայն Թողորին հատկապես դուր էր գալիս այն, որ նա մարդկանց միջեւ տարբերություն չէր դնում, մի հատկանիշ, որը հաճախ ակներեւ էր նրա անգլիացի գործընկերների մեջ, եւ նույն կերպ էր հարաբերվում ինչպես լրագրողների, այնպես էլ խմբագիրների, մեքենագրողների, հավաքարարների եւ ռեստորանի անձնակազմի հետ: Ահա թե ինչու էր Թողորին դուր գալիս ընկերություն անել նրա հետ եւ չէր վարանում խայծել նրան՝ «արգելված» երգեր երգելով, որոնք նա տարիներ առաջ սովորել էր ավստրալաբնակ խորվաթներից:

-Աստված օրհնի՛, Թողոր,- ողջունեց Մարտինը:

-Աստված օրհնի՛ ու թո՛ղ օրհնյալ լինեն խորվաթները,- պատասխանեց նա՝ դեմքի չարածճի ժպիտով:

-Ինչպե՞ս են մեր եղբայր բուլղարները,- հակադարձեց Մարտինը՝ մատ թափ տալով նրա վրա:

-Ոմանք լավ, ոմանք՝ ոչ այնքան: Այսօր Լոնդոնում ավելի լավ է, քան այլուր: Լսել՞ եք նորություններով, որ Կոստովին փորձել են Փարիզում սպանել,- շարունակեց կադ բուլղարացին՝ իր բուլղարա-խորվաթական աղավաղված տարբերակով:

Նիկոլա ԴՈՒՐԵՏԻՉ

-Ո՛հ, չեմ լսել: Ո՞վ: **ԿԴԵ՞ն:**

- Դե, իհարկե: Ուրիշ էլ ո՞վ: Բայց լավ չէին կազմակերպել: Մարդը դեռ ողջ է:

-Չէի ասի, թե նրանց գործերը վատ են ընթանում: Նրանք ցայսօր սպանել են միլիոնավոր մարդկանց,- դառնորեն պատասխանեց Մարտինը, վաճառասեղանից վերցրեց թեյն ու թխվածքաբլիթների փաթեթը՝ հայացքը սահեցնելով շիկահեր գանձապահ Ֆլոյի վրայով, ում նույնիսկ ամենալավ ժամանակ չէր հաջողվում իր դեմքից ջնջել զգվանքի հավերժական ծամաճռությունը, որ գնալով զարգանում էր՝ ինչպես իր գիշերային հերթափոխը, որը սկսվում էր ժամը 3-ին եւ ավարտվում հաջորդ օրվա առավոտյան ժամը 5-ին:

-Ողջուն, Ֆլո: Ինչքան է վնասը կազմում,- հարցրեց՝ փորձելով առույգացնել նրան: Չհաջողվեց:

-Հիսունյոթ պենս,- դժկամորեն գոմոաց նա:

Նա հաշվեց մանրադրամն ու վճարեց, ապա դարձավ Թողորին.

- Ավելի ուշ հանդիպե՞նք ակումբում: Չանգե՞մ: Կապի մեջ:

-Այո, եւ օրհնվե՛ս դու,- դերասանորեն խոնարհվեց Նախագահը, վեր կացավ, սկուտեղը մետաղյա վաճառասեղանի երկայնքով սահեցրեց դեպի գանձապահը եւ, նայելով շիկահեր կեղծամի տակ թաքնված թթված դեմքին, սպասեց իր դատավճռին:

Երբ նա բաժին վերադարձավ, Գեորգին այլեւ այլտեղ չէր: Գոցեն ասաց, որ նա գնացել է զուգարան, քանի որ իրեն լավ չէր զգում: Պատվերները հանձնելուց հետո նա տղամարդկանց զուգարան գնաց: Գեորգին հենվել էր լվացարանին եւ ակնդետ հայացքով նայում էր հայելու մեջ սեփական արտացոլանքին: Նա Թողորին ասաց, որ իրեն լավ չի զգում, կարծում է, որ ջերմություն ունի եւ որ այժմ ազդրը ջղածվում է: Նա ցած քաշեց տաբատն ու հարցրեց, թե արդյո՞ք նա կարող է զննել ազդրի ետեւի հատվածը, պատմելով, թե ինչպես էր մեկ ժամ առաջ անձանոթն իր անձրեւանոցով հարվածել իրեն՝ Վաթեռլո կամրջի վրա գտնվող ավտոբուսի կանգառում: Թողորը կարմրած տեղ նկատեց եւ Գեորգին ասաց, որ կարծես ինչ-որ խոց է գոյացել: Հորդորելով նրան, որ սպասի՝ Թողորը վերադարձավ բաժին, իր գործընկերներին պատմեց կատարվածը եւ մաքուր թաշկինակ խնդրեց, որպեսզի Գեորգիի համար ինչ-որ թրջոց պատրաստի: Այդ պահին Գոցե Սիմեոնովը դարա-

կից ինչ-որ քսուք հանեց ու մեկնեց Թողորին՝ ասելով, որ պետք է մի քիչ վերքի վրա քսի, քանի որ դա կթուլացնի բորբոքումը: Թողորն անմիջապես վերադարձավ զուգարան եւ թափանցիկ քսուքը քսեց Գեորգիի վերքին:

Նրանք միասին վերադարձան բաժին եւ, քսուքի պարկուճը վերադարձնելով կրտսեր գործընկեր Գոցեին, Թողորը սկսեց մեքենագրել այն, ինչ նրան թելադրում էին: Գրեթե տասը ռուպե անց Գեորգին տեղից վեր կացավ ու ասաց, որ իրեն իսկապես վատ է զգում եւ ի վիճակի չէ աշխատել: Բաժնի պետն առաջարկեց նրան գնալ BBC-ի հիվանդանոց, սակայն իմանալով, որ այնտեղ նրան միայն ասպիրին կտան եւ բաժին կուղարկեն, Գեորգին պնդեց, որպեսզի տուն գնա: Գոցեն առաջարկեց, որ ինչ-որ մեկը գնա նրա հետ, հավելելով, որ ինքը տաքսի կկանչի: Հաշվի առնելով Գեորգիի հեղինակությունը՝ նրանց ղեկավարը չմերժեց առաջարկությունը, ընդհակառակը՝ ինքն առաջարկեց Թողորին՝ ուղեկցել Գեորգիին, քանի որ հաղորդման համար նրան հաղորդավարներ էին պետք, իսկ իրենք մի կերպ գլուխ կբերեին մեքենագրության գործերը: Այդպես էլ եղավ: Հենց սեպտեմբերի 7-ին, ուղիղ ժամը 16:10 -ին լոնդոնյան մի սեւ տաքսի երկու տղամարդու վերցրեց Բուշ Հաուսի հարավարեւելյան մուտքի դիմացից եւ Վաթեռլո կամրջով քշեց դեպի Լոնդոնի հարավային արվարձանները: Անձրեւն անգթորեն շարունակում էր թափվել:

6.Չորս օր անց, սեպտեմբերի 11-ին, երբ ես հասա աշխատավայր, Բուշ Հաուսի հարավարեւելյան թեփ չորրորդ հարկը եռուզեռի մեջ էր անձանոթ մարդկանցով: Բաժնի իմ գործընկեր Մարտին Եսենսկին ասաց, որ նրանք Սքոթլանդ Յարդից ժամանած հետախույզներն են եւ հետաքննում են Գեորգի Մարկովի մահվան հետ կապված մանրամասները, եւ որ նրանք ցուցմունքներ են վերցնում բոլոր նրանցից, ովքեր նրան ճանաչում էին, կամ որեւէ առնչություն էին ունեցել այդ ճակատագրական օրը: Նույն օրը մամուլում հայտնվեցին այդ պատահարի հետ կապված առաջին, բավականին աղավաղված լուրերը: Ակնհայտ էր միայն, որ Գեորգի Մարկովը տուն հասնելուց անմիջապես հետո, նույն օրը տեղափոխվել էր հիվանդանոց, որտեղ բժիշկներին չէր հաջողվել իջեցնել նրա ջերմությունն ու թեթեացնել այն տենղը, որ քայքայում էր նրա մարմինը, եւ որ հիվանդանոց ընդունվելուց մի քանի օր անց նա

Նիկոլա ԴՈՒՐԵՏԻՉ

մահացել էր արյան թունավորումից: Իրական պատճառը պարզ կդառնա դիախերձումից հետո:

Մենք երկուսս՝ իմ գործընկեր Եսենսկին ու ես, BBC-ի ակումբում մի շիշ գարեջրի դիմաց նստած,- այո, դուք անմիջապես կռահեցիք,- հենց անհաջող անունով այդ բուլղարացի մեքենագրողից, ինչի պատճառով էլ ստացել էր Նախագահ մականունը, այդ ամենի մասին մանրամասն տեղեկացանք: Եվ այսպես, ես իմացա, որ այն օրը, երբ նա վատացել ու աշխատանքից դուրս էր եկել գործընկերոջ ուղեկցությամբ, Գեորգին Թողոր Ժիվկովին պատմել էր Վաթենյո կամրջի վրա, ավտոբուսի կանգառում նրբաճաշակ հագնված, ձիթապտղի մաշկի գույն ունեցող անձանոթի հետ անսովոր հանդիպման պատմությունը, եւ թե ինչպես էր աջ ազրին հարված ստացել: Եվ Թողորը հիշում էր, որ այդ առավոտ *Le Monde*-ում կարդացել էր մի լուր Ֆրանսիայում մեկ այլ բուլղարացի ընդդիմադրի անհաջող սպանության փորձի մասին եւ, իհարկե, այդ ամենը պատմել էր Սքոթլանդ Յարդի տեսուչներին:

Թեեւ Նախագահը երդվում էր, որ այդ մասին երբեք ոչ մի լրագրողի հետ չի խոսել, բայց հենց հաջորդ օրը բոլոր թերթերը հրապարակեցին հոդվածներ, որոնք ներառում էին ոչ միայն մահաբեր գենթի վերաբերյալ անսովոր տեսություններ, այլ նաեւ սարսափազդու, մահացու հովանոցի գրաֆիկական պատկերները: Այդ ամբողջ պատմությունն ասես վերցված լիներ Ֆլեմինգի վեպերից մեկի՝ Տեյմս Բոնդի մասին էջերից: Այդ դեպքից գրեթե մեկ ամիս անց, Բլեքփոլում, որտեղ ես մասնակցում էի լեյբորիստական կուսակցության տարեկան ազգային համաժողովին, բացելով լրագիրը կարդացի, որ BBC-ի բուլղարական բաժնի երիտասարդ լրագրող Գոցե Սիմեոնովին Հյուսիսային Լոնդոնի իր տանը մահացած են գտել. ահագնազ հնչեց, եւ զլխումս բազում հարցեր սկսեցին ինձ տանջել, որոնց պատասխանները մինչ օրս չեմ գտել:

Սիմեոնովին, ըստ երեւույթին, հայտնաբերել էին իր երեք սենյակաւոց տան առաջին հարկ տանող աստիճանների հատակին ընկած: Նրա քթի ոսկորը կոտրված էր, ինչը ենթադրաբար առաջացել էր աստիճաններից գլորվելու եւ շնչահեղձ լինելու հետեւանքով: Նույնիսկ այս տեսությունը որոշ չափով անհավանական էր թվում: Ինչպե՞ս էր հնարավոր, որ երիտասարդ ու արագաշարժ երեսուներեքամյա երիտասարդն այնպես ընկներ աստիճաններից, որ կոտրվեր քթի ոսկորն ու խեղդվեր սե-

փական արյամբ՝ առանց որեւէ վնասվածքի, ևույնիսկ՝ կապտուկի:

Այնուամենայնիվ, ինչը հատկապես զրավեց իմ ուշադրությունը եւ լուրջ կասկածներ սերմանեց իմ մեջ, այն փաստն էր, որ Գեորգի Մարկովի մահվան վերաբերյալ Սքոթլենդ Յարդի հետաքննության փաստաթղթերում բացարձակապես ոչ մի տեղ չէր նշվում այն հայտնի քսուքի մասին, որը Գոցե Սիմեոնովը տվել էր Նախագահին, որպեսզի նա քսեր Գեորգիի աջ ազդրի վնասվածքին, որը, ենթադրաբար, առաջացել էր մահաբեր հովանոցից հասցված հարվածից: Ես անգամ անծամբ թողորին հարցրի այդ մասին, սակայն նա ևույնպես ոչ մի պատասխան չուներ: Նա ենթադրում էր, որ Սքոթլենդ Յարդի քննիչները Սիմեոնովին այդ մասին պարզապես չէին հարցրել: Մասնավորապես, Գեորգի Մարկովի երկրային մնացորդների դիախերձման ժամանակ նրա աջ ազդրի հատվածում հայտնաբերվել էր մի փոքրիկ գնդիկ՝ երկու սևամեջ խոռոչներով, որը, իբր, մահացու թույն՝ ռիցին էր պարունակում եւ որը, ըստ պաշտոնական հաղորդագրության, արյան թունավորման ու մահվան պատճառ էր հանդիսացել:

Սակայն այս իրադարձությունների ավելի թերահավատ վկաներից ոմանք առաջ քաշեցին մի շարք հարցեր, որոնց Սքոթլենդ Յարդը, ևույնիսկ բավարար չափով, չկարողացավ պատասխանել: Մահացու հովանոցի փաստացի տեսությունը բավական անհավանական էր հնչում, քանի որ մինչ այդ երբեք, ևույնիսկ Փարիզի մահափորձի դեպքում, անձրեանոցը չէր հիշատակվել: Ռումբը, այսինքն՝ փոքրիկ գնդածու գնդիկը, որը հայտնաբերվել էր թե՛ Կոստովի, եւ թե՛ Մարկովի մոտ, այնքան փոքր էր, որ այս տեխնոլոգիան թույլ էր տալիս ստեղծել այնպիսի փոքր ու ճշգրիտ խոռոչներ, որոնց մեջ կարելի էր թույն ներարկել եւ որն այնտեղ կմնար մինչեւ թիրախային զոհը կբռնվեր, այն ժամանակ հայտնի չէր արեւմուտքում: Սիեւնույն ժամանակ, Արեւմտյան աշխարհի գաղտնի ծառայություններին քաջ հայտնի էր, որ ռիցինը հեշտությամբ կարելի է քսել զոհի մաշկի վրա՝ օգտագործելով բավարար քանակությամբ թույն պարունակող քսուք:

Երբ ես սկսեցի բարձրաձայնել իմ տեսությունը, թողորը փորձեց Սիմեոնովի սեղանի գզրոցներում փնտրել խորհրդավոր քսուքի պարկուճը, բայց այն անհետացել էր: Արդյո՞ք Գոցե Սիմեոնովն իրականում նա էր, ում մենք գիտեինք: Իսկ եթե ոչ, ապա ու՞մ համար էր աշխատում:

Նիկոլա ԴՈՒՐԵՏԻՉ

Հնարավոր էր, որ Վաթեռլո կամրջի առեղծվածային տղամարդն, ընդգծված առողջանությամբ եւ իբր մահաբեր անձրեւանոցով, միայն կարմիր ծովատառեխ էր, որը մոլորեցրեց հետաքննությանը, մինչդեռ Գեորգի Մարկովի իրական մարդասպանը Գոցե Սիմեոնովն էր եւ, իհարկե, բուլղարական բաժնի ոչ դիպուկ անունով, չկասկածվող այդ մեքենագրողը: Եւ եթե դա իրականում այդպես էր, ապա, փաստորեն, ո՞վ էր գրողի ու լրագրողի սպանության պատվիրատուն: Եվ արդյո՞ք պատվիրատուն, ցանկանալով վերացնել բոլոր ապացույցները, սպանել էր Սիմեոնովին՝ փորձելով նրա մահը ներկայացնել իբրեւ աստիճաններից պատահաբար վայր ընկնելու հետեւանք:

Սրանք բոլորը հարցեր են, որ մինչ օրս տանջում են ինձ, այնուհանդերձ, որոնք, Լոնդոն կատարած իմ հազվադեպ այցելությունների ժամանակ, չեմ քննարկում BBC-ի տարեց եւ արդեն թռչակի անցած՝ անհաջող անվամբ մեքենագրողի հետ, հարցեր, որոնց պատասխանները, հավանաբար, երբեք ի հայտ չեն գա, ինչպես բազում այլ անպատասխան մնացած հարցեր՝ մարդկության գոյի առեղծվածներից ամենամեծի՝ մահվան առեղծվածի վերաբերյալ:

ՊԱՐՈՆ ԲՈՂՈՒԻՆԻ ՀԱՄԱՐՁՈՒՄԸ

Կեսօրվա ժամը ուղիղ մեկն անց քառասուն րոպեին, 1785թ. սեպտեմբերի 8-ի ամպամած, բայց եւ տապ մի օր, պարոն Բոլղոլինը Չեսթր քաղաքից ոչ հեռու իր Լուևարդի օդապարիկով բարձրացավ օդ: Ահա այսպես էին մատենագիրները հիշատակել այդ նշանակալից իրադարձությունը, եւս մեկը մարդկային ոգու սխրանքների երկար շարքում:

Անգլիացի ազնվական Չարլզ Բոլղոլինը, կասկածելի ծագմամբ ու անհանգիստ ոգով, սակայն, անշուշտ, բավարար ֆինանսական միջոցներով, որը ժառանգել էր իր մայրական կողմի աշխատասեր ու տնտեսող նախնիներից, որոնցից ժառանգել էր նաեւ իր անունը, վաղ պատանեկությունից տարվում էր մի շարք կասկածելի նախագծերով, մի զբաղմունք, որ շատերը վերագրում էին նրա անհանգիստ ոգուն, ինչը նա ժառանգել էր հորից` Տորջ Բոլղոլինից, արկածախնդիր ու հեղձ այն տղամարդուց, ով երիտասարդ տարիներին ավելի հայտնի էր որպես Յուրաջ Բալվինսկի - պողպատե եւ կրակ կույ տվող մարդ, ով հայտնվեց կղզում 18-րդ դարի կեսերին` դերասանների, համերգավարների ու միմուսների խմբերի հետ` Հին մայրցամաքի հեռավոր երկրներից` կղզու բնակիչներին քիչ հայտնի, որը գտնվում է կայսերական ու թագավորական Ագրամ քաղաքի մերձակայքում: Ապշահարվելով առանձնապես ոչ գեղեցիկ, իր ծնողների միևնույն ու հիվանդ զավակի` Էդվինա Բոնիեմ-Սմիթի տղամարդկային արտաքինով եւ, առաջին հերթին, ֆիզիկական ուժով, Յուրաջ Բալվինսկին շուտով վերջ տվեց իր թափառական կյանքին, երբ, համաձայն Բոնիեմ-Սմիթ ընտանեկան պատմության արձանագրության, Էդվինայի հայրը` Տոնը, նրան պարզ ու ուղիղ ընտրության առաջ կանգնեցրեց` անհապաղ ամուսնանալ հիդ Էդվինայի հետ եւ ժառանգել ընտանիքի ողջ ունեցվածքը, կամ հայտնվել անգլիական բանտում: Եվ այսպես, Յուրաջ Բալվինսկին դարձավ Տորջ Բոլղոլին, համակերպվելով նաեւ այն ցավալի մտքի հետ, որ նա այլեւս երբեք իր հայրենի Ագրամ քաղաքը չի տեսնելու: Այս խոր ցավը որոշ չափով մեղմացավ փոքրիկ Չարլզ Կառլ Բոլղոլինի ծնունդով, ում մոտ շատ շուտով, ի դժգոհություն իր մոր ընտանիքի, առաջացնում է մարմնով ու ոգով ան-

Նիկոլա ԴՈՒՐԵՏԻՉ

հանգիստ լինելու նախատրամադրվածություն, ինչը նա, անտարակույս, ժառանգել էր հորից:

Չարլզ Կառլ Բոլդուինի վերջին «խելագարությունը», նրա մոր կարծիքով՝ օդապարիկներով թռչելն էր, եւ կեղծ գիտական հետազոտությունները՝ թռիչքի, ամպերի ձեւավորման, օդային հոսանքների վրա արեւի ճառագայթների ազդեցության եւ նմանատիպ անմիտ անհեթեթությունների հետ կապված, որ քչերն էին հասկանում, եւ որոնք, Էդվինսա Բոլդուինի կարծիքով, ի վերջո, ոչ մեկին պետք չեն: Աստվածավախ լինելով՝ Էդվինսան հաճախ նշում էր. «Եթե Աստված կամենար, որ մարդը թռչեր, նրան թելեր կտար»: Իր բարեպաշտ խառնվածքով՝ Էդվինսան հաճախ հանդիմանում ու սպառնում էր կամակոր որդուն՝ ասելով, որ կգա օրը, երբ նա Ամենակարողին պատասխան կտա իր անհեթեթությունների ու մեղքերի համար: Եվ այսպես, այդ նշանակալից օրը՝ սեպտեմբերի 8-ը մոտեցավ, մի օր, երբ Չարլզ Բոլդուինը որոշեց կյանքի կոչել իր տեսական գրառումները գիտական փորձով եւ նետովել եթերային տարածության լազուր բարձունքները: Թեեւ նա չէր ցանկանում որեւէ մեկին խոստովանել՝ ոչ իրեն, ոչ ուրիշներին եւ ոչ էլ, առավել եւս, մորը, լրացուցիչ եւ անդիմադրելի խթան էր հանդիսանում այն փաստը, որ սա մի տեղ էր, որտեղ իր հայրը երբեք ոտք չէր դրել, եթե միայն բացառելու լինեւք նրա միանգամայն անպատասխանատու ու վտանգավոր խիզախումը՝ Բեթուիս-Ի-Կոտեյի կիրճով մետաղալարի վրայով քայլելը, որը ձգվում էր հնարավոր մահացու եւ զառիթափ կիրճի մի կողմից դեպի հակառակ կողմը:

«Օդագնացությունը,- գրել է Չարլզ Բոլդուինն իր օրագրում ուղեորվելուց անմիջապես առաջ,- իր ամենակատարյալ ձեռով լիովին կարելի է ընկալել որպես արվեստի մեջ հաճույքի բացահայտում, որպես մարդկային հանճարի, ջանասիրության, խիզախումի, համառության եւ թափափուկության հաղթանակ»: Սա գրչված էր պարոն Բոլդուինի օրագրում: Իսկ ինչ վերաբերում է այն ամենին, ինչ տեղի ունեցավ նրա վերջին ձեռնարման ժամանակ, ես դա փորձել եմ վերականգնել այն ժամանակի թերթերի հոդվածների եւ երկար ու տքնաջան հետազոտությունների արդյունքում ձեռք բերած այլ գրառումների օգնությամբ:

Որոշ ժամանակ այս ու այն կողմ ճոճվելով՝ օդապարիկն անհետացավ ամպերի մեջ, որպեսզի նորից հայտնվի ժամը երեքն անց քսանութրոպե՝ Չեսթրից ուղիղ 12 մղոն հեռավորության վրա, Ֆրոդշեմի մտա-

կայքում: Հետո օդապարիկը գնալով սկսեց կորցնել բարձրությունը՝ շարունակելով իր անկայուն թռիչքը եւ վայրէջք կատարեց Ռիքստոնմոսում՝ Ուորինգթոնից հինգ մղոն դեպի հյուսիս-արեւելք եւ Չեսթրից քսանհինգ մղոն հեռավորության վրա:

Թեեւ այս կարճ պատմվածքում հնարավոր չէ ներառել արշավի ժամանակ արձանագրված բոլոր դիտարկումները, սակայն ես, այնուամենայնիվ, առաջին հերթին՝ հանուն հստակության, որոշեցի մեջքերել առավել նշանակալիցներից ու արտասովորներից մի քանիսը, որոնք, ի վերջո, այս արտառոց պատմության հիմքն են հանդիսանում:

Պարոն Բոլդուինը վերընթացությունը համեմատում է զամբյուղի հատակի տակ ուժեղ ճնշման զգացումի եւ դեպի վեր՝ ուղեւորի ոտքերը հասնող ձգողականության հետ: Երկրից վեր մի բարձրության վրա, որը պարոն Բոլդուինին թվում էր մոտ յոթ մղոն, թեեւ օդաչափը ցույց տվեց, որ ընդամենը մեկուկես մղոն էր, նա նշմարեց Չեսթրի ու նրա շրջակա գյուղակների գեղեցիկ ու գրավիչ տեսարանները: Պի գետը կարմրավուն երանգ ուներ, իսկ քաղաքը՝ մանրանկարչության մի տեսակ կիսաթափանցիկ կապտավուն շղարշով էր պարուրված: Հարթավայրերը զբաղեցնում էին անծայրածիր տարածություններ. անգամ ամենաբարձր շենքերը չէին ընդհատում այս կատարյալ ողորկ հորիզոնը, եւ թռչնի թռիչքակետից ամբողջ քաղաքը նման էր վիթխարի աշխարհագրական քարտեզի: Իր առաջին թռիչքից անմիջապես հետո, եւ հաշվի առնելով այն հանգամանքը, որ տարածքը բավականաչափ հարուստ է ջրային զանգվածներով եւ գտնվում է ափամերձ գոտում, նա նկատեց, որ օդապարիկը դեպի ծովը սահելու արտասովոր ու վտանգավոր ձգողականություն ունի: Սակայն հենց մտավ նոր օդային հոսանքի մեջ, այդ սպառնալիքը չեզոքացավ: Պարոն Բոլդուինը նկատել էր այդ բարձր օդային հոսանքը, երբ օդապարիկը բարձրացավ՝ լուսանցիկ ամպերի բարակ շերտի միջով, որոնք լողում էին անվտանգ ուղղությամբ, այսինքն՝ դեպի ցամաք:

Երբ փուչիկը բարձրացավ, այս երեւոյթներից մի քանիսը փոխվեցին: Գոլորշու ամենացածր շերտը, որ սկզբում ամպ էր թվում, կատարյալ սպիտակ էր՝ նման անջատված քուլաների, որոնք կուտակվում էին, երբ օդապարիկն ավելի ու ավելի էր բարձրանում: Ի վերջո, ամպի սպիտակ քուլաները միացան ու ձեւավորեցին «բամբակի ծով», որը ժամանակ առ ժամանակ ցրվում էր օդային հոսանքներից: Այդ սպիտակ շեր-

տի վերետում, դեպի արեւելք եւ ավելի բարձր հեռավորության վրա, որ դժվար էր սահմանել, եւ տեսավ փոթորկաբեր ամպերի հսկայական մի զանգված: Ամեն մի, ներառյալ անգամ ամենափոքրը, մասնիկն այդ զանգվածի բաղկացած էր հաստ շերտերից, որոնք գալարվում էին տարօրինակ ձեւերով: Առանց ակնհայտ պատճառի, սակայն, Չարլզ Բուդուինս իր գրառման մեջ այս կետում շեղվում է, մի բան, որ մինչ օրս շփոթության է մատնել գիտնականներին ու փորձագետներին, քանի որ նրանց չի հաջողվում հիմնավորել դրա բացատրությունը, բացառությամբ, որ դա, էստ երեւոյթին, քաջության ամրապնդման փորձ էր եղել, կամ՝ վանել ինչ-որ հանկարծակի ու անսպասելի կանխագագացում, եւ խազագագացման ալիքի կանխման մի փորձ՝ գրեթե երկյուղի հավասար: Պարոն Բուդուինսը կշռում էր հետեւյալը.

«Սեփական կարողությունների ու հմտությունների շնորհիվ սկանդելով բնակեցված մայրցամաքները շրջապատող ջրերը՝ միանգամայն բնական էր, որ մարդը ցանկանալու էր սկանդել ու իշխել իր շնչած օդը: Բազում դարեր ի վեր մարդու հնարագիտությունն ու բանականությունը թուլացել են ամպերի տակ սավառնելու անհաջող փորձերից: Իկարուսի պատմությունը վկայում է, թե որքան ճակատագրական կարող են լինել նման փորձերը: Սակայն քաղաքակրթության անիվն այլեւս չի կարող կանգնեցվել: Մարդկությանը վիճակված է ձեռքերը երկար ձգելու, հասնելու անհասանելիին, անտեսանելիին, եւ նրան, ինչն այսօր դեռ աներեւակայելի է թվում: Այդպես էլ պետք է լինի: Նահանջի տեղ չկա: Եվ սա, անշուշտ, մեր անե՛ծքն է»:

Ճարունակելով՝ պարոն Բուդուինսը անդրադառնում է կոնկրետ դիտարկումներին, նույնքան արագ, որքանով որ եւ շեղվեց դրանցից, եւ իր գրառումներում եւս գրչում է ամպային զանգվածների միջով լողացող օդապարիկի ստվերի հետաքրքիր նկարագրությունը:

«Օդապարիկի ստվերը սկզբում փոքր էր ու ձվաձեւ, սակայն կարճ ժամանակ անց այն մեծացավ արեւի սկավառակի չափ եւ դեռ մեծանում էր: Ես նկատեցի, որ որոշակի հեռավորության վրա ստվերը օղակված էր ճաճանչապասկով, կամ՝ զարմանալի վառ գույնի ծիածանաթաղանթով: Հակառակ իմ սպասումների, ջերմաստիճանը չէր իջել, այլ՝ գետնի ջերմաստիճանի համեմատությամբ բարձրացել էր: Արեւի ճառագայթներն ավելի կիզիչ էին դառնում, երբ օդապարիկն անշարժ դիրքում էր գտնվում: Անգամ զգալի բարձր դիրքից եւ կարողանում էի լսել թնդա-

նորի կրակոցը, մինչդեռ ընդամենը 30 յարդ բարձրությունից այդ կրակոցը խլանում էր: Նույնիսկ դրանից ավելի մեծ բարձրության վրա ես դատարկեցի մեկ լիտրանոց շոով ջուրը, բայց քանի որ օդը բավարար դիմադրություն չէր հաղորդում հեղուկին, որպեսզի ջուրը կաթիլներով ցրվեր, այն թափվում էր մեծ գնդիկներով: Ընդհանուր առմամբ, թվում է, թե թռիչքի ժամանակ օդապարիկը գտնվում էր ջրի ազդեցության տակ (ինչպես նշվում էր օդապարիկների հետ կապված նախորդ փորձերի ժամանակ): Թռիչքի մի փուլում օդապարիկը շարունակ սավառնում էր ջրի մակերեսույթն ի վեր` անշեղորեն շարժվելով ծովի ուղղությամբ: Վտանգ կար, որ ես այլևս ամուր հող չէի տեսնի: Օդապարիկի բերանը բաց էր, եւ երկու թռչող ընթացքում ես ընկա ավելի ցածր բարձրության վրա գտնվող օդային հոսանքների մեջ, որ փչում էին ծովի ու երկրի ներքին շրջանների ընդերքից: Օդապարիկը շարունակում էր ընկնել, եւ վայրէջք կատարեց Ռինսլիում գտնվող Բելլեր անմարդաբնակ մի ազարակում` Չեսթրից 12 մղոն հեռավորության վրա: Մոտ 30 ֆունտ խճավազ արծակելուց հետո օդապարիկը նորից թռավ, եւ ես մի շարք, համեմատաբար ավելի բարդ, խուսավարումներ կատարեցի:

Օդապարիկը շարունակում էր ճանապարհորդել ցամաքով: չեռո հասա ամենաբարձր դիրքին: Ես նկատեցի, որ շնչառությունս բավականաչափ կանոնավոր էր, թեւե ինձ հետ վերցրած այժի մորթիներից մի քանիսը պայթել կամ փքվել էին: Ես կրկին անգամ օդապարիկի ստվերի շուրջ նկատեցի այդ ծիածանաթաղանթը: Այնուամենայնիվ, այնժամ տեսնում էի մեկ այլ ստվեր, ասես մոտակայքում մեկ ուրիշ օդապարիկ լիներ` փոքր-ինչ տարբեր ու ձգված: Եվ լույսը հանկարծ դարձավ շատ ավելի վառ, ճնշող` գրեթե շառագույնի նմանվելով: Աղմուկը, որ սկզբից նման էր հեռավոր ամպի գոռոցի, գնալով ավելի էր սաստկանում եւ գրեթե անտանելի դառնում: Սա չի կարող ցնորք, պատրանք լինել... Սա լավ բան չի կանխագուշակում... Օ՛, Աստված իմ`:

Այսպես ես ավարտվում Չարլզ Կառլ Բոլդուինի գրառումները, ով 1785 թվականի սեպտեմբերի 8-ին Լուևարդի օդապարիկով սավառնեց Չեսթր քաղաքի մերձակայքում: Ավելի ճիշտ կլինի ասել, որ սրանք վերջին ընթերնելի բառերն են, քանի որ մնացած էջերը կարծես հրո ճարակ էին դարձել` կլանելով բոլոր ծանոթագրությունները, որոնք, հնարավոր է, գրառվել էին ավելի ուշ:

Օդապարիկը վայրէջք էր կատարել ուղիղ երեքն անց հիսուներեք

Նիկոլա ԴՈՒՐԵՏԻՉ

րուպեին: Ամեն ինչ անձեռնմխելի էր թվում, միայն պարոն Բոլդուինն էր անհետ բացակայում: Անհետացել էր ևսել այժի կաշին: Դիակի որոնումները,- ոմանք կարծում էին, թե դուրս է ընկել օդապարիկի սակառից,- արդյունք չտվեցին:

Չեսթրի եպիսկոպոսը հայտնեց, թե ցանկացած կենդանի էակ, ով կհանդգնի փորձել Ամենակարողի ողորմությունը, վաղ թե ուշ արդարացիորեն Աստծո ցասմանը կարժանանա, ինչին ի պատասխան Էդվինա Բոլդուինը միայն զլիտվ արեց ու լաց եղավ, մինչդեռ ժողովուրդը պարոն Բոլդուինին հռչակեց սուրբ, ով 1785 թվականի սեպտեմբերի 8-ին իր օդապարիկով բարձրացավ երկինք: Մյուս կողմից, իշխանությունները, եթե պարոն Բոլդուինը պատահմամբ երկիր վերադառնար, այդ հանդուգն օդաչուին կտուգանեին 2 շիլլինգ 13 պենսի՝ Նորին Մեծություն Տորջ III թագավորի՝ քաղաքացիական անվտանգության օրենքը խախտելու համար:

Էդվինա Բոլդուինը՝ Չարլզ Կառլ Բոլդուինի մայրը, ում վիճակված էր մահկանացուն կնքել ճակատագրական օրվանից կարճ ժամանակ անց՝ հավատալով, որ շուտով կտեսնի իր որդուն, ուներ սեփական տեսությունը: Մահվան մահճում նա երդվեց, որ այլեւս չի հանդուրժի իր որդու այդօրինակ անհնազանդությունն ու խելագարությունը:

Իր հետազոտության ընթացքում այս տողերի հեղինակը հայտնաբերեց եւս մի տեղեկություն, որը, գուցե, ուղղակիորեն կապված չէ այս գործի հետ, բայց, անգամ եթե դա զուգադիպություն է, բավականին ուշագրավ է այս պատմության մեջ հիշատակվելու համար: Չարլզ Կառլ Բոլդուինի ճակատագրական թռիչքից երկու ամիս անց «Չագրեբ Ագրամեր» թերթը մի ծանոթագրություն հրապարակեց մթնոլորտային անսովոր մի ֆենոմենի մասին. աշնանային մի գեղեցիկ օր հրե գնդակի տեսքով մի բան սավառնել էր Սավա գետի վերելում, հետո սլացել էր քաղաքի վրայով եւ անհետացել Չագրոջի ուղղությամբ: Թերթը ևսել մեջբերել էր ականատեսների վկայությունները, սակայն փաստարկները բավարար չէղան հասկանալու, թե ինչ էր իրենից ներկայացնում այդ երեւույթը:

Ինչ վերաբերում է պարոն Բոլդուինի գրառումներին, թեեւ դրանք ենթակա են գիտական վերլուծության, նախեսառաջ, աշխարհի օբյեկտիվ ու ճշմարիտ գաղտնիքներին համադրվելու կարգով, ճակատագրի կամոք դարձան մեր այս պատմության շարժառիթը, այլ կերպ ասած՝ մի-

ՄԱՀՎԱՆ ԵՎ ԱՆՀԵՏԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

անգամայն սուբյեկտիվ հաշվետվության դեր կատարեց, որը, վերջնական վերլուծության արդյունքում, եփած ճաշի տեղ կանցնի, հետեւաբար, կլինի գրառումների հեղինակի նախատեսած պրագմատիզմի ճիշտ հակառակը: Սի խոսքով, դրանք դարձան եւս մեկ առեղծվածի աղբյուր, որոնք հակված են միստիֆիկացիայով լի այս աշխարհում լինել արսիումներ, բայց եւ միտված են լինելու հավերժական ճշմարտություններ՝ ստերով լի աշխարհում:

ՍՈՒՐԲ ԾՆՆՂՅԱՆ ՀԵՔԻԱԹԸ

Սովորաբար կնոջս հետ Սուրբ Ծննդյան տոներն անց էինք կացնում մեր սեփական տանը՝ մտերմիկ ու ջերմ մթնոլորտում՝ զարդարված տունաճառով ու սուրբծննդյան երգերով, որոնց հնչյունները լսելի են յուրաքանչյուր անկյունում՝ տարածվելով Marantz hi-fi համակարգից: Սակայն հենց այդ տարի՝ 1991 թվին, որոշ չափով հաշվի առնելով այն, ինչ կատարվում էր իմ թշվառ հայրենիքում, ևսե՛ն՝ ծերացող ու վատառողջ ծնողների հանգամանքը, մենք որոշեցինք տոներն անցկացնել նրանց հետ՝ Ուելսի Կարմարթեն փոքրիկ գյուղում: Համենայն դեպս, ես մտածում էի, որ այդպես ենք անելու. այնուհանդերձ, պարզվեց, որ կնոջս ամբողջ ընտանիքը պատրաստվում էր հավաքվել նրա մորաքրոջ մոտ՝ Բրիսամմանում, ուելսյան փոքրիկ հանքարդյունաբերական մի գյուղում, Կարմարթենից մոտ երեսուն կիլոմետր դեպի արեւելք՝ Բրեկոն Բեյկոնս ազգային զբոսայգու հարակից շրջանում:

Թեև պլանների անսպասելի այս շրջադարձից ինչ-որ չափով ապշած էի, այնուամենայնիվ, ես դեմ չէի: Ընդհակառակը, երջանիկ էի, որ գնալու էինք գյուղ՝ կնոջս մորաքրոջ Նենսիի եւ հորեղբայր Գրիֆիի տունը, մի տուն, որն իր ծղոտե տանիքով, հաստ ու անհարթ պատերով եւ ցածր առաստաղով այնքան էր հիշեցնում իմ նախնիների տունը հայրենի Սլավոնական հարթավայրում, որն այժմ այնքան հեռու է եւ ավերված նրանց նոճակներից, ովքեր սովոր են խլել այն, ինչն իրենց չի պատկանում: Եվ այսպես, ես անհամբեր սպասում էի Սուրբ Ծննդյան նախօրեին ու ջերմ օջախի շուրջ հավաքույթին՝ հարավային Ուելսի սրտում, այդ սիրելի մարդկանց հետ վայելելու մի բաժակ մոշի գինի, որոնք փոխառինել էին իմ հեռավոր խորվաթական ընտանիքին:

Երբ կինս, նրա հայրը՝ Դիֆրիսզը, մայրը՝ Բարբարան եւ ես մի մեքենայով, իսկ կնոջս եղբայրները՝ Դելվրիսն ու Հայվելը երկրորդով ժամանեցինք Բրիսամման, մեզ դիմավորեցին կնոջս զարմիկը՝ Ադրիանը, նրա կինը՝ Դելիթսն ու նրանց հեռավոր զարմիկը՝ Սիմոնեդն եւ նրա երիտասարդ ամուսինը՝ Գարեթը: Երեկոն անցավ հարազատների զվարթ ծիծաղի ու բարեհաճ խայթոցների ջերմ մթնոլորտում, իսկ հետո ինչ-որ

մեկն առաջարկեց, որ մինչև կեսգիշեր մեզնից յուրաքանչյուրը պատմի մի պատմություն, լինի դա իրական, թե մտացածին, որը կապված կլինի Սուրբ Ծննդյան հետ: Հաջորդիվ կներկայացնեմ, թե ինչ պատմեցի ես այդ երեկո՝ 1991-ին, Ուելսի Բրիսամման գյուղում: Միտումնավոր չեմ գործածելու «պատմություն» բառը, քանի որ այն հասկացվում է, ինչպես շատերն են ընկալում՝ որպես մտացածին, երեւակայական, հետեւաբար՝ որպես արհեստական պատմություն, թեւ գոյություն ունի «կյանքի պատմություն»՝ սինթազմա (բառացի՝ ինչ-որ միավորում՝ փոխկապակցված բան)։ չնայած հայտնի փաստ է, որ կյանքից քաղված այդ իրադարձությունները, այլ կերպ ասած՝ իրական պատմությունները, երբեմն ավելի նման են հեքիաթների, առավել սրամիտ են, սակայն՝ նաեւ ավելի ցավոտ ու սարսափելի, քան ցանկացած մտացածին պատմություն: Ահա թե ինչ պատմեցի 1991 թվականի Սուրբ Ծննդյան նախօրեին՝ ուելսյան իմ երկրորդ ընտանիքին.

«Այս դեպքը տեղի է ունեցել ուղիղ հիսուն տարի առաջ եւ երեւակայության արդյունք չէ, այլ՝ կենդանի, բայց ցավալի ճշմարտություն: 1941 թվի դեկտեմբերին Սուրբ Ծննդյան տոնակատարության նախապատրաստություններն ամբողջ թափով ընթանում էին, թեւ մինչ Սուրբ Ծնունդը դեռ երկու շաբաթ կար: Փայլեի «Մարջին Դոմ» մենաստանի միանձնուհիները, որ չորս տասնամյակ խնամել էին հիվանդներին ու տկարներին, տեղացի երեխաների համար տարրական դասարանների դասեր վարելով եւ օգնություն տրամադրելով նրանց, ովքեր իրենց օգնության կարիքն ունեին, անկախ նրանց հավատքից կամ ազգային պատկանելությունից, զրեթե միշտ զբաղված էին: Երբ չէին դասավանդում, այդ ժամանակ նրանք հաց էին թխում պետական մանկատան լքված երեխաների համար եւ հոգ էին տանում իրենց անշուք մենաստանի դուռը թակող ամեն մի աղքատի ու մուրացկանի համար: 1941 թվականին, 2-րդ համաշխարհային պատերազմի ժամանակ, մենաստանում բնակվում էին քույր Յուլիա Իվանիշեւիչը՝ քառասունութամյա խորվաթուհին, քույր Մարիա Բերիմանա Լեյդենիքսը՝ ավստրիացի միանձնուհին, ով յոթանասունվեց տարեկանում նրանցից ամենատարեցն էր, քույր Կրիզինա Բոյանցը՝ հիսունվեցամյա սլովեն միանձնուհին, ինչպես նաեւ երեսունչորսամյա սլովենացի քույր Անտոնիա Ֆարիանը եւ նրանցից ամենակրտսերը՝ քսանինամյա քույր Բերնադետան, ով հունգարական ծագումով խորվաթուհի էր: Մենաստանում մինչ այդ տարին

շատ համեստ կյանքով էին ապրում, և միշտ էլ դժվար էր ծայրը ծայրին հասցնել, բայց պատերազմի սկզբից ի վեր ամեն ինչ էլ ավելի դժվար ու շատ ավելի անորոշ դարձավ: Սակայն ժողովուրդը հարգում էր Աստվածային Սիրո Դուստրերին պատկանող քույրերի այդ միաբանությունը, ովքեր խոնարհ կյանք էին վարում՝ երբեք շատ բան չխնդրելով, բայց միշտ պատրաստակամ օգնության ձեռք մեկնելու ծայրահեղ կարիքի մեջ գտնվողներին: Բայց, ինչպես միշտ, կային այնպիսիք, ովքեր իրենց նախանձի ու թշվառության պատճառով այդպես չէին մտածում: Նման մարդիկ միշտ կգտնեն ուրիշներին չարիք պատճառելու միջոց, և պատերազմը միշտ դրա համար լավագույն հնարավորությունն է:

Դեկտեմբերի 11-ի առավոտյան ձյան հաստ շերտ էր նստել, ինչը Ռուսիայի լեռների համար անսպասելի չէր տարվա այդ ժամանակաշրջանում: Գիշերվա ընթացքում մոտ կես մետր ձյուն էր տեղացել, և «Մարջին Դոմ»-ն ամբողջովին ձնապատ էր՝ կտրվելով գյուղի մյուս հատվածներից, բացառությամբ նրանց համար, ովքեր պատրաստ էին կրվել ու պայքարել ձնակույտերի միջով, որոնք տեղ-տեղ կարող էին մի ամբողջ մարդ կոպ տալ: Վաղ առավոտից արդեն լսելի էին կրակոցների ձայներ, և օրեցօր դրանք ավելի ու ավելի էին մոտենում Փալեյին ու «Մարջին Դոմ»-ին: Այնուամենայնիվ, քույրերը կատարում էին իրենց ամենօրյա գործերը՝ փորձելով ծայրահեղ մտահոգ չթվալ այն ամենի հանդեպ, ինչ վերջին ժամանակները կատարվում էր նրանց շուրջ: Նրանցից մեկը հաց էր հունցում մենաստանի համար, մյուսը գործում էր բրդյա շարՖեր ու ձեռնոցներ՝ որք երեխաների համար, երրորդը փայտ էր կտտրում մենաստանի համար, իսկ չորրորդը խնայողաբար ճաշ էր պատրաստում՝ մենաստանի քույրերի համար: Բայց երբ չետնիկներն (ծայրահեղ ազգայնական սերբեր) այդ օրը երեկոյան շրջապատեցին «Մարջին Դոմ» մենաստանն ու սկսեցին կրակել պատուհանների վրա, քույրերը հասկացան, որ դա կատակ չէ, և երբ նրանցից մեկը՝ մորուքավոր ու լողկալի, գլխին՝ մորթյա գլխարկ և գոտկատեղին՝ դաշույն, սկսեց հարվածել մենաստանի դռներին ու բղավել՝ «Բացեք դուռը, գրողի տարածներ», նրանց մենաստան թողնելուց զատ այլ ելք չուներին:

Մորուքավորներն անմիջապես ձեռքի տակ ընկածը թալանեցին, բայց քանի որ այս խեղճ ու խոնարհ քույրերից գողանալու առանձնապես բան չկար, նա, ով առաջինն էր մոտեցել դուռը թակելու, հրամայեց, որ քույրերը դուրս գան բակ, և կարգադրեց հրկիզել մենաստանը: Հր-

դեռ դեռ նոր էր սկսել բռնկվել, երբ չետնիկները ստիպեցին խղճուկ եւ ոչ պատշաճ կերպով հագնված միանձնուհիներին քայլել ձնակույտերի վրայով, անցնել վիհերի միջով, որ դժվարանցանելի էին անգամ ամռանը: Նրանք գիշերը քշելով տարան քույրերին դեպի արեւելք:

«Որդի՛, ու՛ր եք տանում մեզ այս փոթորկի միջով», - հարցրեց ամենաավագը՝ քույր Մարիան:

«Ձայնդ կտրի՛ր, ուստաշի (խորվաթական ծայրահեղ ազգայնական շարժման անդամ) պոռնիկ, ու մարշդ նվագիր, եթե չես ուզում, որ հենց հիմա փամփուշտը ճակատդ մխվի», - փնթփնթաց նրանցից մեկն ու հարվածեց ձեռ կնոջ ողերին: Քույրերը դեպի Քրեյվ Վոդ ճանապարհի մյուս մասն անցկացրին լռության ու սարսափի մթնոլորտում՝ տորրելով խոր ձյունն ու ձգտելով խուսափել չետնիկների հրացաններից, որոնք սպառնալից կախվում էին նրանց գլխավերեւում ամեն կողմից, երբ հանկարծ մեկը սայթաքում կամ խրվում էր ձյան մեջ: Միանձնուհիները վարժվել էին նրանց հայիոյանքներին ու վիրավորանքներին: Տարեց քրոջ՝ Մարիայի վիճակն ամենավատն էր, թեպետ կրտսեր Բերնադետան ու Աստոնիան փորձում էին օգնել, ինչքան կարող էին՝ թեւանցուկ տանելով նրան: Սակայն Ռումիկիայի լեռնային զառիթափ քարքարոտ արահետներով անցնելիս՝ ձյունն ավելի ու ավելի անանցանելի էր դառնում, եւ յոթանասունվեցամյա կնոջ համար էլ ավելի դժվարանում էր մյուսների հետ քայլելը: Նա սկսեց շնչահեղձ լինել, ճակատը պատվել էր քրտինքի կաթիլներով, մինչ նրա ներսում սաստիկ տենդ էր մոլեգնում: Միայն ժամանակի խնդիր էր, թե երբ ձեռ կինը կփչեր վերջին շունչն ու հոգին կավանդեր, որպեսզի Արարիչը նրա հոգին տնօրիներ:

Տեսնելով, որ ձեռ կինը գնալով ավելի էր դանդաղեցնում իրենց ընթացքը, եւ քանի որ ցանկանում էին մինչեւ օրվա վերջը հասնել ճանապարհի առաջին կանգառը, նրանց առաջնորդ մորուքավոր չետնիկը, որի հրամանին, թվում էր, հետեւում էին մյուսները, որոշեց ձեճված ու ուժասպառ տարեց կնոջը թողնել Սյետլիսայում: Այստեղ նրա մարդիկ կարող էին մի փոքր հանգստանալ, ուշքի գալ, հարցաքննել քույրերին, իսկ հետո հաջորդ օրը՝ լուսաբացին, շարունակել ճանապարհը մինչեւ Գորաժդե. այնտեղ առկա էր զորանոցի անվտանգությունը, ինչպես նրանց էր հայտնի, իրենց տաք կերակուր եւ ռակիջայի (մրգային ալկոհոլային խմիչք) նոր պաշար պետք է հրամցնեին: Նրանք կարճ ժամանակով կանգ առան Քրեյվ Վոդում՝ մի քիչ ջուր խմելու, ծխախոտ ծխե-

յու, իսկ քույրերը՝ շունչ առնելու պատրվակով: Դրանից հետո ճամփան շարունակեցին դեպի Սյետլիևա, որտեղ նրանց դիմավորեցին Յովան Շայնովիչի տանը՝ ջերմ ընտանեկան մթնոլորտում, եւ ևույնիսկ ուտելիք հյուրասիրեցին:

«Մենք այս գիշերը կանցկացնենք հարդանոցում, իսկ վաղը կշարժվենք», - ասաց չետնիկների առաջնորդը, որին տանտերն անվանում էր «դուքս»: «Ես կթողնեմ պառավին այստեղ... որպեսզի նա մեզ չդանդադեցնի... Այս վիճակով նա հազիվ թե երկար ձգի», - եզրափակեց մորուքավոր առաջնորդը:

«Պարզապես հրաման տվեք, եւ նա օրվա լույսը չի տեսնի», - ավելացրեց հրոսակախմբի մի այլ մորուքավոր անդամ՝ հավելելով՝ «Ում դանակս հարվածի, հաց ու ջուր պետք չի լինի»: Նրանք բոլորը քմծիծաղ տվին, միայն քույրերի համար դա ծիծաղելի չէր: Ամբողջ գիշեր մորուքավոր մարդիկ հերթով հարցաքննում էին միանձնուհիներին. մինչ ոմանք քնում էին, մյուսները հարցաքննում էին նրանց, ապտակում ու խոշտանգում: Եվ այսպես շարունակվեց մինչեւ լուսաբաց: Միանձնուհիները աչք չփակեցին:

Առավոտյան նրանք դժկամությամբ հրաժեշտ տվին քույր Մարիային, թեւեւ գիտակցում էին, որ մնացած տաժանելի ճանապարհը անկասկած կսպաներ նրան: Այսպես, նա զոնե գոյատևելու հնարավորություն կունենար: Անքուն գիշեր անցկացնելով, մինչեւ ոսկորները սառած ու սոված, լուսաբացին ճամփա ընկան՝ լուռ աղոթքը շրթներին: Նրանցից ամենակրտսերի՝ Բեռնադետաի մոտ դիմադրողականությունն աստիճանաբար ավելանում էր եւ, չնայած հոգևատանջ ու հուսահատ էր, նա առաջվանից ավելի մեծ եռանդով էր ձյան միջով քայլում՝ հատելով դժվարանցանելի սարերը:

«Մի դրան տեսե՛ք, ոնց է քայլում, ասես ճայիկ լինի», - ծաղրանքով ասաց ճարպոտ, կարմրագլուխ չետնիկը բարձրահասակ, կիսար ընկերոջը, ով կանգ էր առել, հանել մորթե գլխարկը եւ սրբում էր քրտնած ճակատը:

«Հըմ, իսկ ինչու՞ նրան չես կոտրում», - հարցրեց նա՝ շունչ առնելով:

«Մի՛ անհանգստացիր, հենց որ հասնենք Գորածոյ», եւ նրան կկոտրեմ: Նրան ու այ էն մյուսին: Մնացածներն էլ էնքան վատը չեն»: «Գուցե փորձես, կարող ես նաեւ հարձակվել», - քրթմնջաց անատամ կարմրահերն ու շարունակեց քայլել ձյան միջով:

Հաջորդ օրվա կեսօրին մոտ «դուքսը» որոշեց, որ իր մարդիկ ու պատանդները նախքան արահետով իջնելը, որը տանում էր դեպի Գորաժդե, պետք է ընդմիջում անեն մարգագետնի ծառածածկ եզրին: Նա շատ լավ հասկանում էր, որ մեծ ռիսկի դիմել պետք չէ՝ մնալով տափաստանում, բայց այսպես, թիկունքում ունենալով խիտ անտառներ, եթե անգամ թշնամին անսպասելի մոտենար, նրանք դեռ կարող էին փախչել ու հասնել միջև Ռումիկիայի ապահով ժայռերը, որ նրանք այնքան լավ էին ճանաչում: Երբ շրջանածու ևստեցին ու ծխախոտ վառեցին, իսկ միանձնուհիները եղեւնու տակ, սառած թռչունների պես կզկտել էին, այդ պահին նրանց կողքից մի եղևիկի ձագ դուրս թռավ: Անկոչ հյուրերից ապշած՝ կենդանին սառեց ու հոտոտեց օդը: Բարձրահասակ, փոցխի պես նիհար չետնիկն արագ վերցրեց հրացանն ու կրակեց: Կրակոցից ձյունը կողքի ծառի ճյուղից գահավիժեց, իսկ գետնին ընկած ձագը սատկեց: Մարգագետինը դորդաց լոար չետնիկի կրակոցից ու հայիռյանքից. «Ուստաշի պոռնիկներ»:

Դեկտեմբերի 15-ի առավոտյան ժամը տասին մոտ նրանք մտան Գորաժդե եւ տեղակայվեցին գորանոցում, որտեղ նրանց դիմավորեց հրամանատարը՝ չետնիկ մայր Յեզդիմիր Դանգիչն անձամբ, մարդ, ում, ոչ այլ ոք, քան ինքը՝ գեներալ-լեյտենանտ Միխայլովիչն էր հանձնարարել, որպեսզի նա կազմակերպի չետնիկների շարժումն արեւելյան Բոսնիայում: Նրանք այդ չորս տանջահար ու ուժասպառ պատանդներին փակի տակ առան երկրորդ հարկի սենյակներից մեկում: Չնայած ծանր փորձություններին, միանձնուհիները երջանիկ էին, որ վերջապես տաք տեղ են գտել եւ գլխավերելում տանիք կար: Այն հասարակ մի սենյակ էր՝ դատարկ, կեղտոտ պատերով, գորշ հատակով ու չորս մետաղյա, բանակային երկհարկանի մահճակալներով: Դրանցից յուրաքանչյուրի վրա կար մի կոպիտ զինվորական վերմակ: Անկյունում մոխրագույն, փայտե հենարանն էր՝ կապույտ ու սպիտակ լվացարանակոնքով, որի տակ դրված էր ջրի մետաղյա սափորը: Սենյակի արեւելյան պատին երկու մեծ պատուհաններ կային, կար նաեւ մի դուռ, որը դուրս էր գալիս դեպի պատշգամբ՝ կախված գորանոցի բակի վերելում: Պատշգամբի դուռը կողպված էր, բայց այնքան խաբխուլ էր, որ ցանկացած մեկը կարող էր մի փոքր ճնշում գործադրելով կտրել: Զույրերն անմիջապես լվացվեցին սառը ջրով, եռանդով շփելով իրենց ցրտահարված վերջույթները, եւ ամեն մեկը պառկեց առանձին մահճակալի վրա, որպեսզի հնարավոր

լիներ զոնե մի փոքր վերականգնել ուժերը: Նրանց համար ավելի քան պարզ էր, որ քնել չի հաջողվի, քանի որ նույնիսկ փակ պատուհաններից լսելի էր չետնիկների հարբած զգվոտոցը, որոնք օրվա ընթացքում գնալով ավելի մոլեգին ու աղմկոտ էին դառնում:

Հրամանատարական աշխատասենյակում, որ տեղակայված էր մի-անձնուհիների սենյակով նույն միջանցքի վերջում, հսկայական, կոպիտ տաշած սեղանի ետևում նստած էր մայրո Դանգիչը՝ մորուքավոր տղամարդու դեմդեմաց, որին իր մարդիկ «դուքս» էին անվանում: Սեղանի մեջտեղում, հասարակ մետաղյա սկուտեղի վրա, դրված էին մի շիշ ռակիջա ու մի քանի բաժակ: Սենյակի անկյունում, հրե բոցից շիկացած՝ թուրքական վիթխարի մի վառարան էր դրված, որը թեթև ջերմություն էր արձակում: Ձեռքը մեկնելով դեպի շիշն ու լցնելով ռակիջան երկու բաժակների մեջ՝ մայրո Յեզդիմիրը շրջվեց՝ խոսելու «դքսի» հետ:

«Ինչպե՞ս անցավ»:

«Դե, մենք ոչ մի ուստաշու չհանդիպեցինք: Այրեցինք Պալեի մենաստանը, եւ նրանց մեզ հետ որպես պատանդ բերեցինք: Նրանց միջից ամենատարեցին թողինք Սյետլիսայում՝ Յովան Շայնովիչի մոտ: Նա ասում էր, որ հասարակ ժողովրդի մեջ մենք բազում հետևորդներ ունենք, եւ որ շուտով մեզ շատերն են միանալու: Վերադարձին մենք որեւէ թշնամու չհանդիպեցինք»:

«Իհարկե: Ես ամսի սկզբներին իտալացիները ստիպել են ուստաշիներին լքել Ֆոչան եւ հանձնել մեզ, իսկ պարտիզանների հետ ունենք ներքին պայմանավորվածություն՝ ավելի քան երկու ամիս իրար վրա հարձակում չգործել: Հիմա այս իրավիճակը պետք է օգտագործենք մեր օգտին եւ հնարավորինս շատ մուսուլմաններ ու խորվաթներ վտարենք Ես շրջաններից: Իսկ նրանք, ովքեր չեն գնա... նրանց հետ հարկավոր է այլ կերպ վարվել: Հասկանալի՞ է: Կենաց», - ասաց մայրորդ՝ բարձրացնելով բաժակն ու դատարկելով միջի պարունակությունը:

«Աստված՝ վկա, եղպես էլ կանենք», - ասաց «դուքսը» եւ բաժակը դրեց սեղանին, մինչդեռ մայրորդ նորից ձեռքը տարավ դեպի շիշը:

«Իսկ մենք ի՞նչ անենք նրանց հետ, որոնց էստեղ ենք բերել», - շարունակեց «դուքսը» մինչևեւ հաջորդ բաժակը կոնծելը:

«Մենք նրանցից ուրիշ ձեւ կազատվենք, - հեզվեց մայրորդ՝ նախկին տոնով շարունակելով. - Ես գիշեր ես մեկնելու եմ Ֆոչա՝ Էստեղ որոշ բաներ կան կազմակերպելու: Դուք նրանց հետ արեք ինչ ուզում եք: Պար-

գապես վստահ լինեմ, որ երբ ես վերադառնամ, նրանք այլևս էստեղ չեն լինի»:

«Հասկացա», - ասաց «դուքսը»՝ զրույցը եզրափակելով, հետո վեր կացավ տեղից եւ, աջ ձեռքի հակառակ կողմով բեղերն ուղղելով, դուրս եկավ միջանցք: Անցնելով միանձնուհիների սենյակի կողքով՝ նա չկարողացավ իրեն զսպել ու չկանգնել՝ հույս ունենալով գաղտնի լսել, թե ինչ է կատարվում մոխրագույն, կողպված դռան հետեւում: Այն ամենը, ինչ նա կարողացավ լսել՝ համր, ծանր լռությունն էր: Չորանոցի բակում, սակայն, նրան դիմավորեցին կատարյալ հարբած ու սինլքոր չետնիկների աղաղակները, որոնք զորանոցի տարածքում իրենց ապահով զգալով ու գործելով գայլերի ոհմակի պես, ազատվել էին ամեն տեսակ վախերից, մինչ ռակիջան եռացնում էր նրանց արյունն ու սնուցում մոլեգնած երեւակայությունը, որ նախորդ երկու օրերի ընթացքում պատուհասել էր չորս անօգնական կույսերի պատճառով, որոնց երբեք տղամարդու ձեռք չէր դիպել, եւ որոնք այժմ գտնվում են զորանոցի երկրորդ հարկի սենյակում՝ կողպեքի ու բանալու փակի տակ: Ահա թե ինչու, տեսնելով նրանց, կարմրավուն, ճարպոտ չետնիկը բարձրացավ «դքսի» մոտ եւ ռակիջայից թմբած լեզվով, բառերը կոպ տալով բարբաջեց.

-Նրանց տվեք մեզ, դուքս, ընդամենը մեկ կամ երկու ժամով: Ուստաշի պոռնիկները կսկսեն երգել ուրիշ ձայնով: Ընդամենը մեկ կամ երկու ժամ:

-Իմ հրամանն էն է, որ մենք պետք է դրանցից ազատվենք մինչեւ լուսաբաց: Մինչեւ լուսաբաց ինչ էլ որ լինի, դա իմ գործը չէ, - ասաց «դուքսը» եւ թեքվեց դեպի զորանոցի ելքը:

Այն, ինչ հաջորդեց, դժվար է բառերով արտահայտել... բոլոր իրական չարիքների նման: Ասես դրա համար բառեր ստեղծված չեն:

Հարբած չետնիկները, ճարպոտ կարմրահերի ու նրա ճոզած ուղեկցի գլխավորությամբ, բարձրացան երկրորդ հարկ եւ ներխուժեցին բանտարկված միանձնուհիների սենյակ, փորձելով վերցնել նրանց մոտ մնացած այն մի քանի իրերը, որ մորուքավոր ավազակը չէր հասցրել նրանցից խլել: Ասես դա կանխազգալով՝ չորս քույրերը պատշգամբում սպասում էին իրենց խոշտանգողներին: Երբ սրանք կտորեցին դուռը եւ կատաղած շների պես սենյակ ներխուժեցին, քույրերը պատրաստ սպասում էին, եւ իրար ձեռք բռնած՝ ցատկեցին պատշգամբից եւ ընկան զորանոցի կենտրոնակայանի քարապատ ուղյակին: Սանդուղքներ-

Նիկոլա ԴՈՒՐԵՏԻՉ

րով զայրացած ցած վազելով՝ մորուքավոր լլկիչները գտան միանձնուհիների արյունոտ, բայց դեռ կենդանի մարմինները:

Հարբած ու ճարպոտ շիկամորուք չեսնիկն իր ողջ իմպոտենտ զայրոյթն ուղղեց դեպի աջ ձեռքը, որով դուրս քաշեց դաշույնը, որ պսպղում էր Գորաժդեի վրա իջած վերջալույսին:

-Մա՞հ եք կամենում, ուստաշի պոռնիկներ: Ուրեմն, շնորհավոր՛ր Սուրբ Ծնունդ, քույրեր,- մոնչաց նա եւ դաշույնը քաշեց Բերնադետայի սպիտակ կոկորդին: Նիհար-փոցիս չեսնիկը լույսն արեց Աստուհայի եւ մյուս միանձնուհիների հետ:

Երեկոյան նրանց դիակները նետեցին Դրինա գետի սառը ջրերի մեջ, ջրեր, որ, ըստ ականատեսների ցուցմունքների, արևագունել էին ուր ինչպես մուսուլմանների ու խորվաթների թափած արյամբ»:

Ծանր, տհաճ լուրջությունը, որ տարածվել էր սենյակում իմ լռելուց հետո, վերջապես խախտեց Դելիթը, ով կամաց, գրեթե երկչոտորեն, ասես վախենալով հնարավոր պատասխանից, հարցրեց.

- Իսկ ինչ-որ մեկը գիտի՞, թե ինչ կատարվեց ամենատարեց միանձնուհու հետ, նրան՝ ում թողել էին... ինչպե՞ս էր այդ գյուղի անունը:

Մի կում մոշի գիկի խմելուց հետո ես շարունակեցի.

- Գիտեն, իհարկե, տեղյակ են: Ամեն ինչ հայտնի է, սակայն ոմանք կնախընտրեին, որ ամեն բան պարզապես մոռացվեր: Եւ այսպես.

«Օրերն անցնում էին, իսկ քույր Մարիան թուլանալու փոխարեն օրըստօրե ավելի ու ավելի էր կազդուրվում: Նրա ջերմությունն արդեն երկրորդ օրն իջել էր, եւ յոթանասունվեցամյա ծեր կնոջ մարմինը սկսել էր ապաքինվել: Դա տեսնելով, տանտեր Յովան Շափիտովիչը լուր ուղարկեց Գորաժդե՝ հայտնելով, որ ծեր կինը լիովին ապաքինվել է եւ նրա հետ ինչ պիտի անել: Մի քանի օր անց Գորաժդեից մի չեսնիկ ժամանեց՝ պատասխանով: Նրանք ծեր կնոջը սահնակի մեջ դնելով ասացին, որ նրան տանում են Գորաժդե, որտեղ սպասում են մյուս քույրերը: Երբ Սուրբ Ծննդյան նախօրեին Յովանը գյուղ վերադարձավ, նրա հարեաններից մեկը հարցրեց, թե ինչ եղավ միանձնուհու հետ, որին նա տարել էր Գորաժդե: «Նա միացավ մյուս քույրերին», - պատասխանել էր Յովանը:

Նա չէր ստել:

Թեպետեւ հետաքրքրասեր գյուղացին ճանաչել էր քույր Մարիայի տերողորմյան, որը, լուր մեղադրանքի պես, կախված էր անաստված Յովանի վզից»:

ՄԱՀՎԱՆ ԵՎ ԱՆՀԵՏԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

-Գիտե՞ս, դու, անկասկած, հեքիաթ ես ընտրել Սուրբ Ծննդին պատմելու համար,-տունդարծի ճանապարհին ցատումնալից տոնով սաստեց կինս:

-Դե, դա իմ գաղափարը չէր, չէ՞: Եվ այն ամենը, ինչ պատմեցի, իրականում տեղի է ունեցել,- պաշտպանվելով՝ պատասխանեցի ես ու ավելացրի.- իմիջիայրոց, դեպքը կարող էր առավել սարսափելի լինել, բայց այն նաեւ ուսանելի է: Չեմ հասկանում ինչու՞մն է ինդիրը:

- Խնդիրն այն է, որ Գարեթը Ուելսի գվարդիայից է եւ մի քանի ամսից մեկնելու է Խորվաթիա՝ որպես ՄԱԿ-ի պաշտպանական ուժերի առաքելության անդամ:

- Շատ ավելի լավ,- վճռական տոնով ասացի ես:- Թող նա իմանա՝ ուր է գնում, ում կարող է այնտեղ վստահել եւ ումից է պետք խուսափել:

Տուն վերադառնալու ճանապարհի մնացած մասն անցկացրինք լռության մեջ, մեզնից յուրաքանչյուրը տարված էր իր մտքերով,1991 թվականի Սուրբ Ծննդյան օրը:

ՉՈՒԳԱՆԵՌ ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Նա ասես տաք անկողնուց դուրս գալու ցանկություն չուներ: Թեև իր օգնականն արդեն վաղուց արդուկել ու պատրաստել էր նրա համազգեստը, փայլեցրել կոշիկներն ու կրակ վառել զորանոցի մի անկյունում տնկված սեւ թուջե վառարանի մեջ, որից վերջին կես ժամվա ընթացքում համակենտրոն շրջանակներով ջերմություն էր արձակվում, բրիտանական բանակի ամենաերիտասարդ գնդապետը 1945թ. մայիսի 13-ի անձրեւոտ ու ցրտաշունչ այդ առավոտ դուրս գալու տրամադրություն չուներ: «Վեր կա՛ց, Թերի: Դու նորից ես պատժվելու», - կրկնում էր ընկերոջ ձայնը նրա ենթագիտակցության խավարից, ինչպես մանկության տարիներին Վինչեստերի քոլեջում, երբ խնամակալ Դանիել Սարովսկին բացում էր նրանց սենյակի դուռն ու բղավում. «Պատանիներ՛, վեր կացե՛ք ու փայլե՛ք»: Գնդապետ Թերին ատում էր ցուրտը, նա ատում էր այն զգացմունքները, որոնք հիշողություններ էին արթնացնում իր մեջ՝ կապված իր պատանեկության թշվառ օրերի հետ, նա անգոսնում էր իր խնամակալին եւ նրա ամենառավոտյա արթնացման կոկորդային կոչերը, որ փշրում էին նրա քունն ու ստիպում մտնել առօրյա կյանքի գորշ, անձրեւոտ իրականության մեջ, նա ատում էր նրա հրամաններն ու մղումները, երբ նա, ոչխարների պես կիսամերկ ու թշվառ, քշում էր նրանց ցուրտ ու խոնավ լոգարան՝ երեսներն ու ատամները լվանալու, ճիշտ այնպես, ինչպես այժմ էր ատում այն հրամանները, որ արդեն պատրաստի ուղարկվում էին իրեն գլխամասերում նստածների կողմից, ովքեր պատկերացում չունեն այդ դաշտում տիրող իրական վիճակի մասին. նա տանել չէր կարողանում այդ ամբողջ աղմուկն ու թոհուբոհը: Ավելին, այս պատերազմը, որում նա հայտնվել էր՝ Ավստրիայի հարավում, ուր նրա 5-րդ կորպուսը պետք է պատասխանատվություն ստանձներ տասնյակ հազարավոր ռազմագերիների ու եւս վաթսուն հազար մարդկանց համար, որ, ամենայն հավանականությամբ, գալիս էին Հարավսլավիայից. դա ոչ այլ ինչ էր, քան՝ ժխոր ու քառս, համենայն դեպս, գնդապետն ինքն էր այդպես ասում: Բայց, ինչպես իր մանկության տարիներին, այնպես էլ հիմա, Թերի Լոուելը այլընտրանք չուներ, նա

անընդհատ կրկնում էր այն մանտրան, որը վերջին ժամանակներում բազմիցս մրմնջացել էր՝ ասես իր անզորության ու անվճռականության համար ինչ-որ արդարացումներ փնտրելով: Ահա թե ինչու ևս դժկամությամբ, դանդաղ վեր կացավ ու սողոսկեց գինվորական համազգեստի մեջ, որն արդուկելուց հետո դեռ տաք էր, հագավ երկարաճիտք կոշիկները, թաց թաշկինակով քունը ացքերից սրբեց ու քայլեց դեպի անձնակազմի համար նախատեսված ճաշարանը՝ նախաճաշելու:

«Գունե փչացած լեի Սարովսկին այստեղ չէ»,- մտածեց հրամանատարը՝ քթի տակ ժպտալով: Դրսում ամպամած, ցրտաշունչ օր էր, ինչպես սովորաբար լինում է Եվրոպայի այս տարածաշրջանում:

«Ունց որ մեզ մոտ»,- խորհեց ևս՝ զգուշորեն խուսափելով սառցե անձրեւից առաջացած ջրափոսերից, որ անխնա թափվում էր ամբողջ գիշեր: Գնդապետ Թերի Լոուելը այդ տխուր, մշուշոտ օրվա պես խոժոռ ու մռայլ էր:

* * *

Ուրբաթ, 13 ապրիլի, 1945թ.

Իմ անունը Զվոնիմիր Գերբլ է, եւ ես 1944 թվականից ի վեր Օսյեկում տեղակայված առաջին ուստաշի ջոկատին կից 1-ին Ազգային գվարդիայի փոխլեյտենանտն եմ: Ես տասնինը տարեկան եմ եւ հավաքագրվել եմ նախորդ Սուրբ Ծննդից մի քանի օր առաջ: Այս օրագիրը գրել եմ այն օրից, երբ խորվաթական բանակը սկսում էր նահանջել Օսյեկից: Ես ծնվել եմ Օսյեկ քաղաքի Վոդենիչկա փողոցում, որտեղ մինչ օրս ապրում են ծնողներս ու քույրս: Չնայած ես ցանկություն չունեի հեռանալու Օսյեկից, բայց այլ ելք չունեի - ես զինվոր եմ, ու եթե մնայի իմ հայրենի քաղաքում, այն բանից հետո, երբ հրաման արձակեցին, որ մենք նահանջենք, սա կնշանակեր, որ ես դասալիք եմ, իսկ մենք գիտենք, թե ինչ է սպասվում դասալիքներին պատերազմի այս քառսում: Եվ այսպես, ընտանիքիս հրաժեշտ տալով, այդ ուրբաթ օրը՝ կեսօրին, Ազգային գվարդիայի ընկերներիս հետ Չեպինսկայա փողոցում գենք վերցրի եւ շարժվեցի դեպի արեւմուտք: Գիշերվա ընթացքում մեր գվարդիան անցավ Չեպինի, Չեպինսկի Մարտիչի, Պոզանովցի եւ Բուդիսչիի միջով՝ ընդհանուր առմամբ հատելով մոտ քառասուն կիլոմետր:

Նիկոլա ԴՈՒՐԵՏԻՉ

Շաբաթ, 14 ապրիլի, 1945թ.

Պողոորաց հասնելուց կարճ ժամանակ անց երկու հաուրփցից կրակ բացվեց հակառակորդի ստորաբաժանումների վրա՝ խաչմերուկի եւ Ջակովո տանող ճանապարհի ուղղությամբ: Կռիվը կարճ տևեց: Մենք միանգամից շարժվեցինք դեպի Նաշիցե տանող ճանապարհով: Նաշիցեի միջով անցնելիս՝ առավոտյան տասնմեկի մոտ, մեր ուղղությամբ օդից ծանր գրոհներ ձեռնարկեցին: Սպառազինության զգալի կորուստներ ունեցանք, եւ կորցրինք մեր ձիերից մի քանիսը: Ես ստիպված էի կրակել իմ ծանր վիրավոր զամբիկի՝ Լիզայի վրա: Գվարդիան աստիճանաբար հավաքվեց Ֆերիչանցի տանող ճանապարհի մոտ, որտեղ մենք վերախմբավորվեցինք: Այսօր մենք ավելի քան քսան կիլոմետր ճանապարհ անցանք: Տղամարդիկ հոգևած ու բարոյալքված են:

Կիրակի, 15 ապրիլի, 1945թ.

Ֆերիչանցիում, դպրոցի մոտ մենք հերթական անգամ ստիպված եղանք, թշնամու հարձակումների պատճառով, մարտական խնդրի կատարումն ապահովող միջոցառումներ իրականացնել: Այդ ժամանակ ես նկատեցի, որ Օսյելից իմ դպրոցական ընկեր՝ երկրորդ լեյտենանտ Լայչիկա Հորվատիչը կորել է: Ենթադրում եմ, որ նա զոհվել է Նաշիցեի վրա երեկ տեղի ունեցած ավիահարվածների ժամանակ: Նա հիանալի տղա էր: Միշտ պատրաստ ծիծաղելու: Գերազանց լողորդ. մանկության տարիներին մենք հաճախ էինք տրվում Դրավա գետի ջրերին, որոնք մեզ տանում էին հոսանքն ի վար, այն բանից հետո, երբ ցատկում էինք փայտե մոյթից, որի մերձակայքում քաղաքի լաստանավերն էին կառանված, եւ լողալով հասնում էինք մինչեւ Թիավարության ակումբ, այնուհետեւ պատնեշի երկայնքով քայլում էինք մինչեւ Կոժարա: Նա ապրում էր Սունչանա (նշանակում է արեւոտ) փողոցում: Ու հիմա նա անհետացել է պատերազմի խավարի մեջ, եւ նրա երիտասարդ աչքերն այլեւս արեւի լույս չեն տեսնի: Մենք միեւնույն ժամանակ գորակոչվեցինք, մի քանի ամիս առաջ: Անիձվի՛ այս պատերազմը: Ինտենսիվ փոխհրաձգությունների պատճառով այդ օրը մենք ընդամենը երկու կիլոմետր անցանք:

* * *

-Պարո՛ն գնդապետ,- անուրջների մեջ ընկղմված՝ նա ցնցվեց կապիտան Ստյուարտի ծակող ձայնից, որի ձեռքում ինչ-որ թուղթ կար:- Սա հենց նոր ստացանք շտաբից:

Գնդապետ Թերի Լոուելը վայր դրեց թեյի բաժակն ու հոգևած աչքերով վեր նայեց: Նա գիտեր, որ գերագույն գլխավոր հրամանատարի հեռագիրը կարող էր միայն մարտական առաջադրանք նշանակել, իսկ նա ի վիճակի չէր այդ նողկալի մայիսի 13-ին իր առջեւ դրված նոր խնդիրները հաղթահարել: Լոնդոնում նստածների համար հեշտ է փիլիսոփայելը, բայց այստեղ՝ դաշտում, նա առերեսվում էր բուն իրավիճակի հետ, որը պետք է ինչ-որ կերպ հանգուցալուծվի: Նրանք չէին գիտակցում այն փաստը, որ նա պետք է որոշեր հարյուր հազարավոր մարդկանց, ռազմագերիների եւ փախստական քաղաքացիական անձանց ճակատագրերը, նա հուսահատ խորհում էր, երբ կապիտանից, հեռագրի հետ մեկտեղ, վերցրեց դեղնամոխրագույն թուղթը, որի վրա կարմիրով գրված էր՝ ՀՈՒՅԺ ԳԱՂՏՆԻ: Գնդապետն ավելի մոտեցավ ճաշարանի մեջտեղի առաստաղից կախված մետաղագույն թույլ լամպին ու սկսեց կարդալ.

«Պատերազմական գոտիներում գտնվող բոլոր հրամանատարներին: Համաձայն Հաագայի կոնվենցիայի 20-րդ հոդվածի, որտեղ նշվում է, որ «բոլոր ռազմագերիների հայրենադարձությունը պետք է իրականացվի խաղաղության կնքումից հետո առնվազն շատ սեղմ ժամկետներում», գորամիավորումների բոլոր այն անդամները, որոնք կհայտնաբերվեն հարավսլավական ծագմամբ ու ծառայած կլինեն Գերմանիայի զինված ուժերում, պետք է անհապաղ զինաթափ արվեն եւ հանձնվեն հարավսլավական ստորաբաժանումներին:

Դաշնակից ուժերի բարձրագույն հրամանատարության գլխավոր քարտուղար, գեներալ Ռոբերտսոն»:

Թերի Լոուելը ծալեց այդ հույժ զաղտնի հաղորդագրությունը, դրեց դիմացի սեղանին եւ, առանց դեղնամոխրագույն թղթից հայացքը բարձրացնելու, հոգնաբեկ հարցրեց.

-Կապիտան Ստյուարտ, ծանո՞թ եք նամակի բովանդակությանը:

-Ծանո՞թ եմ, պարոն գնդապետ:

-Իսկ դուք որպես լիազորված խորհրդատու, ի՞նչ եք կարծում... Ազատ խոսե՛ք, պոչ մի խաղացրեք:

Նիկոլա ԴՈՒՐԵՏԻՉ

-Ըր'... կարգադրությունը... բավականին անհասկանալի է... եւ դա մեր վիճակը չի թեթեւացնի:

-Ի՞նչ նկատի ունեք: Ավելի հստակ ասե՛ք:

- Գեներալը նշում է Հաագայի կոնվենցիան, բայց չի հիշատակում ժնեի կոնվենցիան: Ավելին, նա հիշատակում է հարավսլավացի ռազմագերիներին: Սոտ երեսուն հազար փախստականներից, որոնք արդեն հանձնվել են մեզ, եւ վաթսուն հազարը, որ դեռ պետք է ժամանեն Հարավսլավիայից, մեծամասնությունը սլովեններ ու խորվաթներ են: Խորվաթները քառասուններեք թվականին ստորագրել են ժնեի կոնվենցիան, ինչը կնշանակի, որ նրանք ճանաչվում են որպես ինքնիշխան պետություն՝ իրենց սեփական գործառնաբերով, որոնք դուրս են գերմանական ուժերի հրամանատարությունից: Բացի այդ, գեներալը միայն զինված ուժեր է նշում: Իսկ ի՞նչ ենք անելու քաղաքացիական փախստականների հետ: Ինչպե՞ս է պետք նրանց վերաբերվել: Մարդկանց այս ամբողջի մեջ մենք չենք կարող պարզել, թե նրանցից որն է քաղաքացիական, որը՝ զինվորական: Մենք ռեսուրսներ չունենք: Մենք ուղղակի հնարավորություն չունենք բոլորին ապահովելու:

-Լավ, մենք պետք է ինչ-որ բան մտածենք,- խոչոտ ձայնով եզրափակեց հրամանատարը, հեռագիրը դրեց վերելի ձախ գրպանը, խնամքով կոճկեց այն ու անհետացավ մառախլապատ արշալույսի մեջ, որ ամրացել էր գորշ ամպերի տակ՝ անձրեւի նոր տարափ սպառնալով:

* * *

Երկուշաբթի, 16 ապրիլի, 1945թ.

Վաղ առավոտյան մեր գվարդիան հեռացավ Ֆերիչանցից եւ շարժվեց դեպի Չաչինցի: Կարծես ինձ չի հաջողվում մտքիցս հանել անհետ կորած Լայշիկային: Նա իրո՞ք մահացավ Նաշիցեում, թե՞ որոշեց ոչնչի դիմել... ազատվել իր համազգեստից ու վերադառնալ Օայեկ, դժոխք, իսկ դրա հետեւանքները... Չէի գարմանա, եթե վերջին ենթադրությունս ճիշտ լիներ: Նա միշտ մի քիչ խենթ, անզուսպ բնավորություն ուներ: Բայց դրա համար չեմ կարող մեղադրել նրան: Մենք բոլորս փորձում ենք գոյատևել, ինչպես կարող ենք: Ինչքան ճակատագիրը մեզ թույլ կտա:

Մենք շարունակեցինք ճանապարհը Պողոթալսկա Սլատինայի ուղ-

դուքյամբ՝ անցնելով Միկուշ եւ Նովա Բուկովիցա գյուղերի միջով: Այդ օրը մենք ընդհանուր առմամբ անցանք երեսունվեց կիլոմետր: Սլատի-նա հասնելուն պես՝ մենք ստեղծեցինք Նոր պաշտպանական մարտա-կան կայաններ: Ամբողջ երկու օր այստեղ մնացինք: Բոլորս ողջունե-ցինք կարճատե դադարի այս հնարավորությունը: Այս կարճատե դա-դարի ժամանակ կրկին հիշեցի Լայչիկա Հորվատիչին: Եթե այս ամենը չլիներ՝ պատերազմի այս խելագարությունը, հավանաբար մենք այժմ ձկնորսության կպատրաստվեինք: Մենք կգնայինք Դրավա գետի մյուս ափը, մեր սիրելի վայրը՝ ամբարտակը: Կամ դեպի Հին Դրավա: Մենք կարթածողերը կապում էինք մեր հեծանիվների վերեւի ծողից՝ դեկից կախված մեր թիթեղատուփերով: Նա վերցնում էր խարակածկան ցանցն ու մենք գնում էինք դեպի Ստորին քաղաքի գետանցը: Արեւը զարթնում ու պղինձ էր շաղ տալիս գետի մակերեսային: Եվ ջրերի վրա անդորր էր իջնում: Միայն լաստանավի տակ գետի խշշոցն ու լաստա-նավի ռնգային երգն էր լսելի դառնում: Իսկ ջրի բույրը: Թափանցիկ ու թեթեւ: Ու երբ լաստանավը վերջապես կանգ էր առնում գետի մյուս կող-մում գտնվող փայտե կառամատույցի մոտ, մենք զբոսնում էինք ճոճվող կամրջանավակով մինչեւ ամբարտակ եւ ճամփան շարունակում մեր հե-ծանիվներով, այդ ժամանակ գյուղացիները կաթ, ձու, հավ, պանիր, միրգ ու բանջարեղեն առած, լուսադեմին լաստանավ նստելով, շարժ-վում էին դեպի Ստորին քաղաքի շուկա:

Տե՛ր Աստված, եթե միայն այդ ամենից ինչ-որ բան հիմա լիներ: Մենք օրերով սոված ենք մնում... անընդհատ շարժման մեջ... անընդհատ կռիվ տալով: Իսկ հետո, երբ վերջապես կարող ես կանգ առնել մի փոքր շունչ առնելու, այդ ժամանակ նման մտքերով ես տանջվում...

* * *

-Ժամանակն է, պարո՛ն գնդապետ,- ասաց սերժանտ Ուլյամսը:- Մյուսներն արդեն հավաքվել են ամրոցի մոտ:

Գնդապետ Թերի Լոուելը, ասես զառամյալ մի ծերուկ, մի կերպ վեր կացավ տեղից եւ դուրս եկավ ճաշարանից, որտեղ նրան արդեն սպա-սում էր ծառայողական «Ջիպ» մակնիշի ավտոմեքենան:

Մտնելով Բլայբուրգ ամրոցի գեղեցիկ, բարրոկո սրահը՝ զարդար-

վաճ գորելեններով եւ նախկին ազնվականների ու ֆեոդալների հսկայական դիմանկարներով, նա տեսավ, որ սենյակի կեստրոնում, երկար սեղանի շուրջ, որի վրա կախված էր ծանր, ճոխ ջահը, մյուս բոլոր հարակից շրջանների ռազմական հրամանատարներն ու այլ սպաներ արդեն զբաղեցրել էին իրենց տեղերը: Ներկաների մեջ նա ճանաչեց գեներալներ Շոտլանդին, Ռոբինսոն ու Նայթին եւ ութերորդ գրահատանկային դիվիզիայի ռազմական հետախուզության աշխատակից՝ Էսթոնի Քրոսմանին, որի հետ դեռեւս ուսանողական տարիներից էր ծանոթ:

Նա նստեց Քրոսմանի կողքին՝ մեծ, սպիտակ սալիկապատ վառարանի մոտ, որը դեռ անցած գիշեր վառած փայտից թոյլ ջերմություն էր արձակում, եւ ընկավ հիմար ընկճախտային թմբիրի մեջ, գրեթե անզայացած այն ամենի հանդեպ, ինչն իր շուրջն էր կատարվում:

-Պարոնայք,- սկսեց գեներալ Շոտլանդը, երբ բոլորը զբաղեցրին իրենց տեղերը:-Ինչպես գիտեք, մենք բախվել ենք բարդ լոգիստիկ-ռազմական, ինչպես նաեւ քաղաքական իրավիճակի հետ: Գերմանական ստորաբաժանումներից բացի, որոնք արդեն հանձնվել են, մեծ թվով հարավսլավացիներ են մոտենում մեր գոտուն, նրանք, ովքեր կովել են նացիստների կողմից եւ ովքեր փախչելով Տիտոյի պարտիզաններից, ցանկանում են հանձնվել Ղաշնակից ուժերին: Ինչպես արդեն ասացի, խնդիրը բարդ է եւ բազմակողմանի: Առաջին. մենք բախվում ենք լոգիստիկ խնդրի՝ կապված այդքան մեծ թվով մարդկանց բնակեցման եւ սննդի ապահովման հետ: Երկրորդ. Տիտոն, ով մեր դաշնակիցն է, պահանջում է, որպեսզի մենք իրեն հանձնենք բոլոր գերի ընկած թշնամիներին: Այսպիսին է պաշտոնական դիրքորոշումը Ղաշնակից ուժերի շտաբում: Ես արդեն տեսական ժամանակ կապի մեջ եմ ռազմաքաղաքական հրամանատարության հետ եւ բացահայտ դիրքորոշումն այն է, որ գերմանացիների կողմից բոլոր կռվողներին, նախեւառաջ, պետք է արգելել, որպեսզի նրանք մտնեն մեր գոտի, այսինքն՝ Ավստրիա, եւ երկրորդ, բոլորին, ովքեր արդեն իսկ հասել են Բլայբուրգ, պետք է հանձնել Տիտոյի ուժերին: Ես այսօր առավոտյան շտաբից հրաման եմ ստացել, որ մենք չպետք է թոյլ տանք նրանք՝ մեզ հանձնվել: Անհրաժեշտության դեպքում պետք է ուժ կիրառվի:

Գեներալ Շոտլանդը մի պահ դադար տվեց՝ ձեռքը մեկնելով ջրի բաժակին: Անսպասելի լռությունից ընդոստնելով՝ գնդապետ Լոուելն արթ-

նացավ ու բացեց աչքերը: Այդ վայրկյանին նա լսեց կողքին նստած գնդապետ Զրոսմանի մեղմ բարիտոնը.

-Գնդապետ, ինչպես նշեցիք, խնդիրը բարդ է ու բազմակողմանի: Նախ, միայն Խորվաթիայի անկախ պետությանը պատկանող զինված ուժերը չէ, որ ցանկանում են մեզ հանձնվել: Բլայբուրգի դաշտում կա նաև խաղաղ բնակիչների, կանանց ու երեխաների մի մեծ զանգված: Մի ողջ ժողովուրդ շարժման մեջ է: Որոշ նախնական հաշվարկների համաձայն, ներառյալ այստեղ իսկ գտնվողները, եւ ովքեր դեռ ժամանելու են, խոսքը մեկ միլիոնից ավել մարդկանց մասին է: Ես չեմ խորանա խնդրի լոգիստիկ երեւոյթների մեջ, սակայն ռազմական ու քաղաքական տեսանկյունից պետք է ընդգծել, որ խորվաթական որոշ ստորաբաժանումների կապիտուլյացիան արդեն ճանաչված է: Գուցե դա սխալ էր, բայց եղածը եղած է եւ ոչինչ արդեն ետ չես բերի: Մենք շարունակելու ենք նրանց ասել, որ նրանք պետք է հանձնվեն պարտիզաններին՝ քաջ գիտակցելով, թե ինչ ճակատագրի նրանք կարող են արժանանալ Տիտոյի ուժերի կողմից. նրանք չեն ցանկանում հանձնվել տիտոյականներին: Երբ նրանք նոր էին սկսել հանձնվել մեզ, բրիտանական տեսակետը նրանց օգտին էր, նաև մասամբ՝ ջարդերի հանդեպ ավանդական բրիտանական հակակրակներով պայմանավորված, որ նրանց սպասվում է պարտիզանների ձեռքերով, եւ որոշ չափով՝ Տիտոյի հանդեպ բացասական վերաբերմունքի պատճառով, երբ պարզվեց, որ նրա զորքերը ներխուժել են մեր գոտիներ՝ Իտալիայում ու Ալպտրիայում:

-Արդյո՞ք այն, ինչ դուք հենց նոր ասացիք, նշանակում է, որ Տիտոյի նկատմամբ վերաբերմունքը փոխվել է:

-Կարելի է այդպես ասել: Գերագույն հրամանատարությունը ակնհայտորեն Տիտոյին ավելի փոքր խնդիր է համարում, քան փախստականների ու ռազմագերիների այս զանգվածին ապահովելը: Մենք պարզապես չենք կարող նրանց կերակրել: Ես զինվորական եմ եւ պարտավոր եմ կարգադրությունները լսել: Գնդապետ Ռոբերտսոնի հղման մեջ հստակ ասվում է, որ բոլոր նրանք, ովքեր հանձնվել են, եւ որոնք ազգությամբ հարավսլավացի են ու ծառայել են Գերմանիայի զինված ուժերում, պետք է զինաթափվեն եւ Հաագայի կոնվենցիայի համաձայն՝ արտահանձնվեն հարավսլավական ուժերին:

-Ես մտավախություն ունեմ, որ սա նույնպես որոշակի խնդիրներ է

Նիկոլա ԴՈՒՐԵՏԻՉ

առաջացնելու,- դժկամությամբ ավելացրեց զնդապետ Լոուելը:- Գնդապետ Ռոբերտսոնը նշում է Հաագայի կոնվենցիան, սակայն չի հիշատակում ժնեի կոնվենցիան: Հետո նա խոսում է հարավսլավացի զինվորների մասին: Խորվաթիան դեռևս 1943 թվականին է ստորագրել է ժնեի կոնվենցիան եւ այսպիսով ճանաչվել է որպես ինքնիշխան պետություն: Հետևաբար NDH-ը (Nezavisna Država Hrvatska՝ Խորվաթիայի Անկախ Պետության խորվաթական հապավումն է), որպես այդպիսին, ունի իր ուժերը, որոնք գերմանական զինված ուժերի մաս չեն կազմում: Բացի այդ, ինչպես է հնարավոր հաստատել, որ ուստաշիները եւ տեղի ազգայնական ուժերի անդամները, ինչպես նաեւ խորվաթ քաղաքացիական անձինք ազգությամբ հարավսլավացիներ են:

-Ցավովն եմ: Իմ կարգադրությունները հստակ են: Մենք չենք կարող շարունակել նրանց այստեղ պահել: Մենք նրանց բոլորին պետք է հանձնենք Տիտոյի պարտիզաններին: Նա կարող է վիժվածք լինել, որը մեզ համար դժվարություններ է ստեղծում Իտալիայի հյուսիսում ու Ալպտրիայի հարավում, սակայն գլխավոր հրամանատարության դիրքորոշումն այն է, որ նա դեռևս մեր դաշնակիցն է համարվում, եւ որ նրան պետք է վերաբերենք որպես այդպիսին: Ուստիեւ անհրաժեշտ է, որ բոլոր փախստական խորվաթներին ու սլովեններին արտահանձնենք Տիտոյին: Թող նա էլ պարծենալու բան ունենա: Ես դա թողնում եմ ձեզ, որպեսզի դուք մտածեք, թե ինչպես է պետք դա անել: Ինչ վերաբերում է չետնիկներին, նրանց պարագան մի քիչ այլ է, նրանց մենք կտեղափոխենք Իտալիա:

* * *

Հինգշաբթի, 26 ապրիլի, 1945թ.

Ամբողջ օրն անձրեւում էր: Կլոշտարից մեր գումարտակը շարունակեց գլխավոր ճանապարհով առաջ շարժվել՝ մութն ընկնելուց առաջ կանգ առնելով մի խաչմերուկի մոտ, մի փոքր հանգստանալու: Գյուղական նեղ արահետների պատճառով մենք ստիպված էինք ետ դառնալ, եւ մեր ձիերին բարձած ողջ ծանր հրետանին պետք է դեպի Պիտոմաչա ետ ուղարկվեր: Այնտեղից մենք շարունակեցինք զրեթե անհասանելի, ցեխոտ ճանապարհով դեպի Սեդլարիցա գյուղ: Գումարտակն ամբողջ առավոտ մաքառեց Բիլա Գորայի միջով՝ նեղիկ արահետներն

անցնելու համար: Այդ ամբողջ ճանապարհին մեզ օգնության հասան տեղաբնակ գյուղացիները՝ իրենց եզներն ավելացնելով մեր ձիաքարշ սայլերին: Գիշերն ընկնելուն պես մենք հասանք Վելիկա Պիսանիցա: Մենք հաղթահարեցինք 33 կիլոմետր ճանապարհ: Մեր հոգևածությունը գրեթե շոշափելի էր:

* * *

Շաբաթ, 28 ապրիլի, 1945թ.

Նախորդ օրը հրետանին Դրյանովացի եւ Գրժեւիցայի միջով հետ քաշվեց՝ Սալի Գրժեւանց՝ պաշտպանական մարտական հեռակետ ստեղծելու նպատակով:

Ինձ կարգադրել էին գնալ անտառի խորքում տեղակայված դիտաշտարակը, որտեղից տեսանելի էր Գրժեւիցա գետը, եւ որը մի դիրք էր, որտեղից պարզ տեսարան էր բացվում ողջ հովտի ու հարեւան Վելիկա Բարնա գյուղի վրա: Գումարտակի սպաներից մնացել եմ միայն ես, ով հրամաններ է տալիս ու համակարգում է հաուբիցների կրակոցները: Ուրբաթ ու շաբաթ գիշերը հակառակորդը մի քանի անգամ հարձակման անցավ Վելիկա Բարնայի ուղղությամբ: Ակնհայտ էր, որ նրանք նպատակ էին հետապնդում անցնել գետն ու առաջ շարժվել դեպի Վելիկի եւ Սալի Գրժեւանց գյուղեր: Մինչեւ օրվա վերջ մենք ընդհանուր առմամբ հակառակորդի 22 զրոհ ետ մղեցինք, որից հետո հարձակումները դադարեցին, եւ հակառակորդը նահանջեց: Վաղ առավոտյան մենք կորցրինք միակ հեռախոսային կապը հրետանային դիրքերի հետ: Ստիպված էինք էվակուացնել դիտաշտարակը, եւ մենք չորսով արագ հեռացանք մեր դիրքերից ու նորից միացանք հրետանուն, որը շարունակում էր ետ նահանջել: Հրետանային ուժերը Վելիկի Գրժեւանցի մոտ կրկին միացան կենտրոնական գումարտակին, եւ մենք մեր ընթացքը Դրյանովացով ու Մեւերիսով շարունակեցինք մինչեւ Բելովար, ուր հասանք միայն ուշ երեկոյան: Քաղաքացիական փախստականների հոսքը գնալով ստվարանում էր: Ե՞րբ է այս ամենն ավարտվելու: Այդ օրը 26 կիլոմետր անցանք:

* * *

Գնդապետ Լոուելը գնդապետ Քրոսմանի հետ միասին դուրս եկան տաքուկ ու մի տեսակ խեղդուկ սենյակից: Քարե աստիճաններով իջնելով՝ նրանք կանգ առան մուտքի մոտ: Դրսում կրկին տեղատարափ անձրեւ էր: Թերի Լոուելը ձեռքը տարավ դեպի բաճկոնի վերելի ձախ գրպանը, որտեղից ծխախոտի տուփի հետ մեկտեղ հանեց խնամքով ծալված հեռագիրը, որը որոշ ժամանակ առաջ ստացել էր կենտրոնակայանից: Նա իր գործընկերոջը ծխախոտ առաջարկեց եւ հեռագիրը մեկնեց նրան: Նա նույնպես ծխախոտ վառեց:

-Տե՛ս, Թոնի, ու ինձ ասա՝ ինչ ես մտածում:

Գնդապետ Քրոսմանն արագ աչքի անցկացրեց հեռագրի տեքստը, ներս քաշեց ծխախոտի ծուխն ու մռայլ տոնով պոռթկաց.

-Խայտառակ ամո՛թ:

Նրանք շարունակեցին անձրելի տարափի միջով քայլել դեպի կայանված մեքենաները՝ խոլյս տալով ջրափոսերից: Քար լռության մեջ մի քանի քայլ անելով՝ գնդապետ Քրոսմանը հակիրճ ավելացրեց.

-Չէի ուզի քո դրության մեջ հայտնվել:

-Գիտեմ: Անիծյա՛լ պետական գործիչներ: Նրանք չեն մտածում մարդկային կյանքերի մասին: Նրանք կարգադրում են, իսկ մենք ստիպված ենք մեր կաշվից դուրս գալով՝ այդ ամենն անել:

Քրոսմանը պարզապես թոթվեց ուսերն ու չոր ավելացրեց.

-Կտեսնվենք, ծերուկ,- եւ թոմփաց իր «Տիպի» մեջ՝ վարորդի կողքի նստատեղին. մեքենան վայրկենապես սլացավ:

Գնդապետ Թերի Լոուելը մի որոշ ժամանակ սեւեռուն հայացքով նայում էր հեռացող «Տիպի» կողմը, հետո թաց ծխախոտի ծուխը մի երկուերեք անգամ ներս քաշեց, որից հետո այն նետեց կողքի ջրափոսի մեջ ու շարժվեց իր մեքենայի կողմը: Անձրեւը սաստկացավ, գնդապետն էլ ավելի մռայլվեց:

* * *

Երեքշաբթի, 01 մայիսի, 1945թ.

Բելովարում կարճատեւ դադարից հետո հրաման եկավ, որ մենք պետք է շարունակենք ետ նահանջել: Ամբողջ գիշեր քայլելուց հետո մենք հասանք ժարնո: Մեզ կարգադրեցին, որ այնտեղ սպասենք նոր

հրահանգների: Այնտեղ անսպասելի հանդիպեցինք փախստականների նոր բազմության: Շատերն իրենց հետ սնունդ էին վերցրել, օգնում էին նաև գյուղացիները, որոնց գյուղերի միջով մենք անցնում էինք: Բայց տեսնես ինչ է լինելու, երբ սնունդը վերջանա... այդ ժամանակ ո՞վ է նրանց կերակրելու: Երեւի հույս ունեն, որ իրենց բոլոր խնդիրները կվերանան, երբ հասնեն Ավստրիայի սահմանին: Ժաբնո հասնելուն պես մեր սանհանգույցը գերծանրաբեռնվեց: Փախստականների միջից մի երիտասարդ կին փորձում էր ծննդաբերել: Վրաններից մեկում հապճեպ մի ծննդասենյակ սարքեցին եւ, փառք Աստծո, ամեն բան բարեհաջող ընթացավ: Նա մի որդի լույս աշխարհ բերեց: Աստված իմ, ինչպես է կյանքը ընդդիմանում մահվանը: Ինչպես է բնությունը հրաժարվում հանձնվել ու ամեն ինչ կարգավորում է մեզ համար անհայտ ինչ-որ օրենքներով: Մինչ ոմանք մահանում են մարտի դաշտում, կանայք արու զավակներ են լույս աշխարհ բերում: Բայց ինչպիսի՞ ապագա է ճակատագիրը սահմանել այս փոքրիկի համար: Նրանք մտադիր են նրան անվանել Նիկոլա՝ ի պատիվ ճանապարհորդների, ծովագնացների ու թափառաշրջիկների հովանավոր սրբի: Շատ տեղին է: Հրաման եկավ, որ վաղն առավոտյան պետք է շարժվենք դեպի Կրիվենա գյուղի դիրքերը:

Ուրբաթ, 04 մայիսի, 1945թ.

Գումարտակի դիրքը մնաց անփոփոխ: Ամբողջ օրվա ընթացքում մենք ոչ մի կրակոց չարձակեցինք:

Չորեքշաբթի, 09 մայիսի, 1945թ.

Վերջին մի քանի օրն անցկացրինք մի դիրքից մյուսը շարժվելով: Սկզբում մենք մարտական կայաններ ստեղծեցինք Կրիժեցիցի դեպի հյուսիս-արեւմուտք ընկած բարձունքի վրա, որտեղից պարզ տեսարան էր բացվում դեպի տեղի երկաթուղային կայարանը: Գումարտակի մյուս ստորաբաժանումները ճամբար էին հիմնել Կրիժեցի-Օրեհովաց ճանապարհից հյուսիս ընկած մի շինության մոտ: Մենք պարբերաբար հրետանային կրակ էինք բացում: Մեր նոր դիրքերից պարզ երեւում էր Չագրեբից եկող մի լոկոմոտիվ, որը հատուկ գութանով ոչնչացնում էր փայտակոճերը: Չագրեբի ուղղությամբ այլևս ոչ մի երթուղություն չկար: Կեսօրից հետո մենք թողեցինք մեր մարտական դիրքերն ու շա-

Նիկոլա ԴՈՒՐԵՏԻՉ

րունակեցինք նահանջել դեպի արեւմուտք: Անցնելով Կալնիկ լեռը՝ հաջորդ օրն առավոտյան հասանք Նովի Մարոֆ եւ ընթացանք դեպի Վարաժդին: Ռադոբոջ գյուղում մենք ստիպված էինք զինված ուժ կիրառել՝ ճնշելու հրետանային ստորաբաժանման խուժան զինվորներին, որոնք ահաբեկում էին ծեր կնոջը՝ փորձելով թալանել նրա խրճիթը: Ես վախենում եմ, որ նման միջադեպերը զնայով ավելի հաճախակի են կրկնվելու, քանի որ մեր սևնդի պաշարներն աստիճանաբար նվազում էին: Ռադոբոջ գյուղից մենք շարժվեցինք դեպի գլխավոր ճանապարհը եւ կեսօրից հետո հասանք Կրապինա: Նախկինում նշված ստորաբաժանման խուլիգան զինվորները փորձեցին ինձ սպանել «պարտիզանների հետ համագործակցելու» համար, բայց հետո ամեն ինչ խաղաղ ճանապարհով հարթվեց:

Գումարտակը կանգ առավ Կրապինայից արեւմուտք գտնվող դաշտում՝ խիստ անհրաժեշտ հանգստի համար: Խորվաթական բոլոր ստորաբաժանումների ու քաղաքացիական անձանց համընդհանուր նահանջն ընթանում է ամբողջ թափով: Դա մեր կատարած ամենաերկար երթն էր, որի ընթացքում մենք անցանք մոտ 70 կիլոմետր:

Հինգշաբթի, 10 մայիսի, 1945թ.

Առավոտյան գումարտակը շարունակեց նահանջել արեւմուտք՝ դեպի ժուրմանեց ու Սվետի Պոկ, որտեղ մենք անցանք Սլովենիայի սահմանն ու շարժվեցինք դեպի Ռոզաշկի Սլատինա: Զանգվածային տեղաշարժի մարդկանց հոսքը օրըստօրե ավելանում է: Սա դառնում է հուսահատ մարդկանց ամբոխի աստվածաշնչյան մի տեսարան:

Կիրակի, 13 մայիսի, 1945թ.

Ամբողջ օրը հորդառատ անձրեւ է տեղացել եւ ճանապարհները լցված են ջրերով: Առաջընթացը դանդաղ է: Նախորդ օրը մենք հասել էինք Յեյե, սակայն կանգ չէինք առել եւ շարունակել էինք ճանապարհը մինչեւ Վելենջ, որտեղ հասանք ուշ երեկոյան: Լուր եկավ, որ մեզ կատարողի բախումներ են սպասվելու՝ դեպի արեւմուտք միջանցքներ բացելու նպատակով:

Այս առավոտ մեզ հաջողվեց հասնել Սլովեն Գրադեց: Գումարտակը տեղադրեց իր վերջին մարտական կայանը: Մեզ հրահանգեցին կրակել

հյուսիսային բլրի վրայով եւ մեզնից դեպի հյուսիս գտնվող Դրավա գետի հովտի ուղղությամբ, որտեղից առաջ էին շարժվում պարտիզանական հրոսակախմբերը: Նույն օրը, որոշ ժամանակ անց մենք շարունակեցինք նահանջել եւ կանգ առանք Դրավոգրադի մատույցներում: Ավստրիայի սահմանին մնացել է ընդամենը մի քանի կիլոմետր: Դանակով հագիվ թե հնարավոր լինի կտրել փախստականների լարվածությունը: Օրվա երկրորդ կեսին հրամանատար, կապիտան Մատյաշեւիչը եւ առաջին լեյտենանտ Լովրիչը լքեցին գումարտակը: Ես հայտնվեցի աննախանձելի իրավիճակում: Պետք էր շտապ որոշում կայացնել: Որպես միակ մնացած սպա՝ ես հավաքեցի գումարտակի զինվորականներին, որոնք համաձայնել էին հետեւել ինձ եւ, Ավստրիայի Լավամուղ գյուղի միջով անցնելով, հանձնվել անգլիացիներին: Մինչ այդ մենք կապեցինք ծիաքարչ սայլերը, շարքից հանեցինք հաուբիցներն ու ռազամամթերքը, եւ վերցրինք միայն մեր անձնական զենքերը:

* * *

Մտնելով փայտե տաղավարը, որտեղ տեղակայված էր գլխավոր շտաբը, նա բախվեց Սերժանտ Ուլիյամսին, ով խաղում էր սրահի մեծ սեղանին դրված անսարք ռադիոընդունիչով:

-Սերժանտ, կապիտան Սոյուարտին տեսե՞լ եք:

-Նա կարճ ժամանակով ճաշարան գնաց, հիմա կվերադառնա, պարոն գնդապետ:

-Հենց վերադառնա, ասա նրան՝ թող գա ու ինձ տեսի,- ասաց գնդապետ Լոուելը, մի պահ կանգ առավ՝ ասես մտորելով, իսկ հետո ավելացրեց.- Էն տնական տանձի կոնյակից դեռ պահած ունե՞ս:

Սերժանտը խեթ հայացքով նայեց գնդապետին, բացեց իր սեղանի ներքեւի գզրոցն ու հանեց տնական տանձի կոնյակի շիշը: Նա ակամայից, բայց անխոս, այն առաջարկեց հրամանատարին: Իր տետից փակելով գրասենյակի դուռը՝ գնդապետ Թերի Լոուելը հյուսված սկուտեղից վերցրեց բանակային ճաշարանի մետաղյա բաժակը, նստեց սեղանի մոտ, լցրեց անուշաբույր կոնյակն ու մի մեծ կում արեց: Նա զգաց, որ ջերմության ալիքը թափանցեց իր ներսն ու ստամոքսից բարձրացավ դեպի կրծքավանդակն ու գլուխը: Նա եւս մի կում արեց, հետո մյուսն ու հաջորդը, հետո էլի ու էլի: Երբ նա տեղից վեր կացավ, որ նորից բա-

Նիկոլա ԴՈՒՐԵՏԻՉ

ժակն ավելացնի, կապիտան Ստյուարտը ներս մտավ:

-Պարոն գնդապետ, ուզում էիք ինձ հանդիպել:

-Նստե՛ք, կապիտան: Կիսմե՛ք:

-Ոչ, շնորհակալություն: Ինձ համար մի քիչ շուտ է:

-Երբ դու այնպիսի զգվելի իրակիճակում ես հայտնվում, որում ես եմ, ապա երբե՛ք շուտ չէ:

Նա մի կում էլ խմեց ու հայացքը հարեց դիմացի անորոշ մի կետի: Կապիտան Ստյուարտը լուռ մնաց ու սպասեց: Վերջապես հրամանատարը արթնացավ իր թմբիրից ու փորձեց ինչ-որ բան ասել, սակայն ալկոհոլով հագեցած լեզուն հրաժարվեց խոսել: Նա նորից փորձեց.

-Այսօր առավոտյան ժողովում որոշվեց... մենք բոլորին պետք է հանձնենք պարտիզաններին... հարկ եղած դեպքում՝ բռնի ուժով: Նրանք, ովքեր արդեն հանձնվել են, նրանց բոլորին կղնեք սայլերի մեջ եւ կուղարկեք Վիլաչ:

-Քաղաքացիներին՞ն էլ... կանանց ու երեխաներին:

-Բոլորին: Ես թքած ունեմ... սա հրաման է... նրանք բոլորը գրողի տարած սլովեններ են, հարավսլավացիներ, ռուսներ, խորվաթներ, լեհեր... բոլորին...

Այդ պահին Դանիել Սարովսկու պատկերը հայտնվեց իր երեակայական աշխարհում՝ պահապանն իր մանկության օրերի՝ կոպիտ դեմքով, քիչ բարձր այտոսկրերով ու կարմրավուն այտերով, որ սենյակ մտնելով բղավում էր՝ «Վեր կացեք ու փայլեք, պարմանիներ»: Գնդապետ Լոուելը չէր կարողանում հասկանալ, թե որտեղից էր հայտնվել այդ տեսիլքը եւ ինչու հենց այդ պահին: Նա այդ ամենը կապեց իր ներսում ավելացող ջերմության հետ, որն առաջանում էր թափանցիկ հեղուկից, որ սերժանտի շշից թափվում էր ճաշարանի գավաթի մեջ, գավաթից՝ գնդապետի բերանն ու աղիքները՝ ողողելով նրա ներսի թանձր խավարը, որը, սակայն, ամեն մի կում անելու հետ աճում էր, դառնում ավելի խիտ, ավելի թանձր:

-Ի՞նչ անենք, եթե հրաժարվեն կառք նստել:

-Ուժ գործադրեք... ինչ-որ բան մտածեք... խաբեք նրանց... ասեք, որ իրենց հտալիա եք տանում... մենք գնացքը ուրիշ երթուղով կուղղորդենք դեպի Վիլաչ... դեպի հարավ... եւ այն կղիմավորեն պարտիզանները... սրանք իմ հրամաններն են... ես էլ ի վիճակի չեմ, գրո՛ղը տանի:

* * *

Երկուշաբթի, 14 մայիսի, 1945թ.

Ավստրիայի սահման տանող ողջ ճանապարհին մենք անցնում էինք հուսահատ, սովալյուկ ու ուժասպառ մարդկանց շարքերի մոտով՝ սրբնթաց աճապարելով դեպի անհայտություն, քանի դեռ այն հնարավորինս հեռու էր Տիտոյից ու իր պարտիզաններից: Մենք դժվարությամբ անցանք մեր ճանապարհը այս դժբախտ մարդկանց ամբոխի միջով, եւ վերջապես վաղ միջօրեին մեզ հաջողվեց հասնել Լավամունդ: Այնտեղ մենք հանդիպեցինք մարդկանց ավելի հոծ բազմության, որոնք ճամբար էին տեղադրել բաց տարածքներում: Տեղի բնակիչները նրանց համար ջուր եւ ուտելիք էին բերում, այնքան, որքան հնարավոր էր խնայել պատերազմական ժամանակներում՝ այս դժբախտ մարդկանց օգնելու համար: Նրանք մեզ ուղեկցեցին Նոյհաուսի եւ Վիդեռնդորֆի միջով, այնուհետեւ՝ Բլայբուրգ, որտեղ հասանք միայն ուշ երեկոյան: Ես իմ մարդկանց կարգադրեցի այս փոքրիկ քաղաքի դաշտերից մեկում մի ճամբար հիմնել, խոստանալով, որ հաջորդ օրը ես կփնտրեմ խորվաթացի մի ավագ սպա, կամ բրիտանական բանակի մի ներկայացուցիչ: Այժմ, երբ արդեն գտնվում ենք Ավստրիայում, մենք բոլորս կարող ենք մի փոքր հանգստանալ՝ առանց զիջերվա ընթացքում պարտիզանական հրոսակախմբերի հարձակման վտանգին ենթարկվելու: Ավստրիայի սահմանը հատելիս ես նկատեցի, որ մարդկանց դեմքին հանգստություն իջավ: Բայցեւայնպես, ոչ ոք չի համարձակվում մտածել, թե ինչ կլինի, եթե պարենի պաշարները սպառվեն: Անգամ եթե շատ խնայենք, այն մեզ կբավարարի երկու, առավելագույնը՝ երեք օր:

Աստված մեզ պահապան:

Երեքշաբթի, 15 մայիսի, 1945թ.

Այսօր առավոտյան ես միանգամայն պատահաբար հանդիպեցի ծանոթներիցս մեկին՝ Դոյչ-Մազելսկի անվամբ մի սպայի, ով ինձ ասաց, որ, որպես ցամաքային կապի սպա, երեկ նա մասնակցել էր բրիտանական ռազմական ներկայացուցիչների հետ հանդիպմանը, որոնց հետ քննարկել էն մեր ուժերը անզլիացիներին հանձնելու բանակցությունների հնարավորությունները: Նա ասում էր, որ անզլիացիները շատ ջերմ էին, եւ որ պայմանավորվածություն է ձեռք բերվել, որ խորվաթա-

կան ուժերի ներկայացուցիչները այսօր հանդիպեն բրիտանացի հրամանատարի հետ՝ ավարտին հասցնելու կապիտուլյացիայի պայմանները: Ես այս տեղեկությունը փոխանցեցի իմ մարդկանց, ինչը նրանց շրջանում համընդհանուր ոգեւորություն առաջացրեց: Ոմանք նույնիսկ սկսեցին մաքրել իրենց համազգեստները, փայլեցնել իրենց գոտիներն ու կոշիկները: Որքան քիչ բան է հարկավոր մարդուն մոռանալու այն բոլոր տառապանքներն ու դժվարությունները, որոնց միջոց կա անցել է՝ տեսնելու հույսի անգամ ամենափոքր կայծը: Նույն օրը, ավելի ուշ, մենք առանց պայմանի կապիտուլյացիայի հրաման ստացանք՝ հանձնել մեր զենքերը բրիտանացիներին, ապա մեզ կարգադրեցին Խորվաթիայի դրոշը հանել եւ ձողի վրա սպիտակ դրոշ բարձրացնել: Ես դարձյալ հավաքեցի իմ մարդկանց եւ բացատրեցի, որ բոլոր սպաների երդումն այլևս անվավեր է համարվում, եւ որ այլեւս չեմ կարող նրանց հրաման տալ: Ես նրանց ասացի, որ այս պահից ի վեր յուրաքանչյուրը պետք է իր ճանապարհը գտնի եւ իր սեփական որոշումը կայացնի: Ինձ համար անասելի դժվար էր նրանց հայտնել, որ բրիտանացիները որոշել են մարդկանց մեծ մասին վերադարձնել Սլովենիա եւ հանձնել պարտիզաններին: Սակայն ինձ չհաջողվեց թաքցնել այս նորությունը, քանի որ այն ամառային կրակի պես տարածվել էր ամբողջ ճամբարում: Հավաքվածներին համակած ողջ երջանկությունն ու խանդավառությունը, որ զարթնել էր, երբ մենք հատել էինք Ավստրիայի սահմանը, այժմ հանկարծ վերածվել էր խուճապի: Նրանցից ոմանք վերջ տվին իրենց կյանքին: Ես տեսա իմ հասակակից մի երիտասարդի, ով կրակեց իր գլխին, հավանաբար իր հրացանի վերջին փամփուշտով: Ոմանք կտրեցին իրենց դաստակները... նրանք հնարավոր ամեն բան անում էին՝ պարտիզանների ձեռքը չընկնելու համար: Մոսկալի՛ տեսարաններ: Անգամ անհավատալի է, որ անգլիացիները պատրաստ են պարտիզանների մոտ մեզ կալանքի տակ պահել: Ի սեր Աստծո, նրանք պետք է որ իմանային, թե ինչ է լինելու այս խեղճ մարդկանց հետ: Իմ մարդկանցից ոմանք որոշեցին փորձել դեպի Ավստրիայի խորքերը գնալ... վերացնել իրենց համազգեստը, գտնել քաղաքացիական հագուստ եւ մերվել Ավստրիայի բնակչության հետ: Նրանցից ոմանք, ովքեր ինձ նման Օսյեկից ու սլավոնական այլ քաղաքներից են, վարժ խոսում են գերմաներեն: Մյուսները համաձայնել են հանձնվել պարտիզաններին... շարքա-

յին զինվորներ, որոնք հավաքագրվել են պատերազմի հենց վերջում, նրանք ոչ մի հանցանք չեն գործել եւ, կարծես թե, հավատում են, որ վախի պատճառ չունեն: Ես դեռ չգիտեմ, թե ինչ եմ անելու: Ես պետք է մնամ այստեղ, մինչեւ իմ մարդիկ կկատարեն իրենց ընտրությունը, որից հետո ես կկայացնեմ իմ որոշումը:

Չորեքշաբթի, 16 մայիսի, 1945թ.

Այս գիշեր մի խումբ մարդիկ անհետացան մեր ճամբարից: Բրիտանացի պահակները նրանց համար խնդիրներ չստեղծեցին, ընդհակառակը, ձեռացրել էին, թե չեն նկատում եւ թողել էին նրանց, որ հեռանան: Մի ուրիշ խումբ ստեցին բեռնատարները, որոնցով բրիտանական ուժերը պետք է նրանց տեղափոխեին Լավամունդ, որից հետո հանձնեին պարտիզաններին: Մեզանից ոմանք կորոշեն, թե ինչ անել վաղը: Սա, միգուցե, այս օրագրի վերջին գրառումներից է:

Հինգշաբթի, 17 մայիսի, 1945թ.

Ես եւս մեկ անգամ փորձեցի գտնել խորվաթ բարձրաստիճան սպաներից որեւէ մեկին՝ ռազմագերիների վերաբերյալ բրիտանացիների բանակցությունների ու մտադրությունների մասին ավելի շատ մանրամասներ բացահայտելու համար, բայց՝ ապարդյուն: Մասնավորապես, այսօր մենք լսեցինք, որ կեսօրին մոտ գնացքը պատրաստ կլինի, որը մարդկանց մի մասին կտեղափոխի Վիլաչ, իսկ հետո՝ Իտալիա: Երբ պատրաստվում էի միանալ այդ խմբին, եւ պատահաբար տեսա բրիտանացի մի շարք զինվորների, որոնք շտաբի գորանցի մոտ հաց ու ջուր էին բաժանում մեր մարդկանց: Նրանց մեջ մի կապիտան կար: Ես չգիտեմ նրա անունը, բայց նա շատ ականջ ծակող ձայն ուներ: Երբ ես մոտեցա իմ չափաբաժինը ստանալու, նա ինձ մի կողմ տարավ ու կոտրատված գերմաներենով սկսեց ինձ բացատրել, որ ես իմ մարդկանց փոխանցեմ, որ Վիլաչ մեկնող ավտոշարասյունների գաղափարը լավը չէ, որ գնացքը կհանձնվի պարտիզաններին, եւ որ երկաթուղային կայարանի մոտ անտառաշատ վայրեր կան, որ դյուրահաս են, հատկապես, երբ բրիտանացի զինվորները գնացք ստեղծուց առաջ «ստուգում» են իրականացնելու:

Ես ան տեղեկությունը սպանիչ էր: Նախ, ես չգիտեի՝ կարո՞ղ էի վս-

Նիկոլա ԴՈՒՐԵՏԻՉ

տահել նրան: Սակայն նրա դեմքի արտահայտությունն ինձ համոզեց, որ նա պատվավոր մարդ է... Ես նրա խոսքերը փոխանցեցի իմ մարդկանց եւ ասացի, որ կփորձեմ հասնել անտառ: Բրիտանացի կապիտալի հետ իմ կարճատեւ զրույցի ընթացքում ես կշեցի այս օրագրի մասին եւ խնդրեցի, որ նախքան գնացք նստելը նրան հանձնեմ այս օրագիրը: Նա համաձայնեց վերցնել այն: Այսպիսով, սա իմ վերջին խոսքն է: Այս գիշեր ես կփորձեմ իմ մարդկանցից մի քանիսի հետ փախուստի դիմել: Աստված մեզ օգնական:

Հետզոռություն

1980-ականներին BBC-ում ես հանդիպեցի Նայջել Ստյուարտին: Սի օր, մոտ վաթսուևամյա մի ճաղատ տղամարդ, որի քթից պարզ երևում էին թեթեւ ալկոհոլիզմի ակնհայտ նշաններ, ակումբում ինձ մոտեցավ: Նա իրեն բնորոշ զիլ ձայնով ներկայացավ որպես Նայջել՝ լրատվական բաժնի խմբագիր եւ, անմիջապես երկու գավաթ զարեջուր պատվիրելով, հավելեց, որ կցանկանար ինձ հետ իմ նախագծերից մեկի մասին խոսել: Սկզբում ես փոքր-ինչ զգույշ ու զուսպ էի, բայց ինչքան մութն ընկնում էր, այնքան նրա պատմությունն ինձ էլ ավելի էր զրավում: Նա ասաց, որ լսել է տարօրինակ անհետացումների եւ մարդկանց անբացատրելի մահերի մասին իմ ռադիոհաղորդման նախագծի մասին, հավելելով, որ ունի մի պատմություն, որն ինձ, անկասկած, դուր կգար եւ ըստ իմ հայեցողության՝ ես պիտի որոշեի, թե հետագայում այդ պատմության հետ ինչ պետք է անեմ: Սի քանի ժամվա ընթացքում, երբ մենք խմում ու զրուցում էինք, ես պարզեցի, որ պատերազմի ժամանակ նա եղել է հարավային Ավստրիայի տարածաշրջանում՝ գնդապետ Թերի Լոուելի աղյուտանտը: Սիայն ավելի ուշ, երկու լիտր զարեջուր դատարկելուց հետո, նա խոստովանեց, որ եղել է, ինչպես ինքն էր ասում՝ «անհիծված Բլայբուրգում»:

Պատմությունը, որ կարդացիք, մի փոքր վերածեւված տարբերակն է այն իրողության, որն այդ մի քանի ժամվա ընթացքում տեսնագին ինձ պատմում էր Նայջել Ստյուարտը, ով, ինչպես ավելի ուշ պարզ դարձավ, ոչ թե լրատվության բաժնի խմբագիրն էր, այլ՝ BBC-ի վերահսկիչներից

մեկը Կավերշամում գտնվող արտասահմանյան ռադիոհաղորդումների մոնիթորինգի կենտրոնի, եւ բրիտանական բանակի նախկին կապիտանը, ով հայտնվել էր Հարավային Ավստրիայում՝ պատերազմի հորձանուտի մեջտեղում, եւ ով իր նկարագրած դրվագից կարճ ժամանակ անց, իր իսկ խոսքերով, Բլայբուրգում տեղի ունեցածի մասին շինծու գեկույց ներկայացնելու շնորհիվ ստացել էր պաշտոնի առաջխաղացում ապահովող մայորի կոչում, որից հետո զորացրվել էր բանակից:

Նա մեր զրույցը եզրափակեց հետեւյալ խոսքերով. «Բլայբուրգի մասին, բարեկամս, դեռ երկար ժամանակ ոչ ոք իրական ճշմարտությունը չի՛ իմանա»: Ես միայն կարող եմ ասել, որ ստեղծված իրավիճակներում մեր սպաներից ոմանք ծայրահեղ խայտառակ վարք դրսևորեցին: Սի խոսքով՝ խայտառակ ամո՞թ: Իր մաշված կաշվե պատյանից նա հանեց Ա-5 չափսի՝ բավականին պատառոտված մի նոթատետր եւ ինձ առաջարկեց: «Տեսե՞ք՝ կարո՞ղ եք այն որեւէ կերպ օգտագործել: Սա խորվաթական բանակի մի երիտասարդ լեյտենանտի օրագիրն է, ով այն փոխանցեց ինձ՝ նախքան Բլայբուրգի դժոխքից փախչելու փորձ կատարելը: Նրա անունը Չվոնիմիր Գերբլ էր: Պատերազմից հետո ես փորձեցի Կարմիր Խաչի եւ այլ կազմակերպությունների միջոցով գտնել նրան, բայց՝ ապարդյուն: Միայն թե այնտեղ շատերն անհետացան... Եվ մինչ օրս ոչ ոք պատասխան չի տվել: Ինչպես ասացի... ամոթ է... խայտառակ ամոթ»:

ՍԱՀՎԱՆ ՈՒ ԱՆՀԵՏԱՑՍԱՆ ԺԱՍԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

1997 թվականի սեպտեմբերի 6-ի մռայլ ու անձրեւոտ մի օր, առավոտյան ժամը տասին մոտ, հեռախոսը զանգեց: Ես իջա իմ աշխատասենյակից եւ դժկամությամբ վերցրի լսափողը, քանի որ սովորաբար դա կշանակում էր, որ իմ գործընկեր լրագրողներից մեկը հիվանդացել է, եւ որ ինչ-որ մեկը պետք է նրան փոխարինի, բայց այդ մռայլ, փոթորկոտ օրը ես բնավ ցանկություն չունեի լրատվական բաժնի գնալու: Այնուամենայնիվ, շուտով պարզ դարձավ, որ իմ կանխազգացումներն անհիմ էին: Ընդհակառակը, խոժոռությունս անմիջապես վերածվեց բուռն հետաքրքրության, եւ իմ մեջ հանկարծ արթնացավ, այսպես կոչված՝ «լրագրողական բնագործ»: Չանգը ստացվել էր Լոնդոնի Իսլինգթոնի շրջանի Հոլլուեյ չափահաս կանանց բանտի վարչությունից: Ազդեցիկ տղամարդու ձայնը, որի հնչերանգը, ինձ թվաց, խուճապի զգալի չափաբաժին էր պարունակում, ինձ հաղորդեց, որ «իրենք շտապ թարգմանչի կարիք ունեն բունիացի կին բանտարկյալներից մեկի համար»: Չայնը շարունակեց բացատրել, թե ինչպես են նրանք իմ համարը ձեռք բերել Գերագույն դատարանից, որտեղ BBC-ի մեր մի քանի լրագրողներ գրանցված էին որպես պաշտոնական թարգմանիչներ, ավելի քիչ հայտնի, կամ ինչպես անգլիացիներն են ասում՝ Էկզոտիկ լեզուների իմացությամբ, առանձին դեպքերում, ըստ անհրաժեշտության, աշխատելու համար: «Իհարկե, դուք կվճարվե՞ք», - եզրափակել էր տղամարդու ձայնը: Շեշտելով, որ Լոնդոնի մյուս ծայրը հասնելու համար ինձնից որոշ ժամանակ կպահանջվի, ես շտապ պատրաստվեցի, արագ նախաճաշեցի, միջանցքի սեղանի վրայից վերցրի թղթապանակս՝ նոթատետր, գրիչ, մատիտ ու մի փոքր ձայնագրիչ սարք դրա մեջ դնելով, հագա անձրեւաւոցս եւ մռայլ ու անձրեւոտ լոնդոնյան այդ առավոտ ճամփա ընկա:

Գնացքին սպասելիս՝ ես փորձում էի կռահել, թե ինչ գործ կարող էր լինել, քանի որ գծի մյուս կողմում գտնվող տղամարդու ձայնն այնքան էլ հստակ չէր, մանավանդ բանտարկյալի մասին հիշատակելիս: Քանի որ բանտը չափահաս կանանց համար էր, եւ տղամարդու ձայնն ասում էր,

որ գործը կապված է Բոսնիայից մի կնոջ հետ, հնարավորությունների շրջանակը որոշ չափով նեղացավ: Ես իսկույն մի դեպք հիշեցի, որը բավական երկար ժամանակ տարածում էր գտել լոնդոնյան թերթերում, եւ որը ամիսներ շարունակ քաղաքական ու բարոյական տարաբնույթ հանրային աղմուկ-աղաղակ էր բարձրացրել, եւ որի շուրջ բազմաթիվ սրեր էին խաչվել:

Նաղա Սուլջիչը Լոնդոնի Գերագույն դատարանի կողմից դատապարտվել էր քսան տարվա ազատազրկման՝ «1992-1993 թվականներին արեւելյան Բոսնիայում բոսնիացի ու խորվաթ կանանց բանտարկելու եւ բռնաբարելու մեջ կասկածվող Ստյուարդ Սթոունի /ծածկանունը՝ Սվետոզար Ստանիմիրովիչ/ դաժան սպանության համար», ով այդ հանցագործությունների համար դեռեւս Բոսնիայում դատապարտված էր եղել 30 տարվա ազատազրկման, սակայն նրան հաջողվել էր Սարաեւոյի բանտից փախչել 1997 թվականի սկզբներին՝ հենց դատավարությունից հետո եւ, ինչպես հետագայում կհաստատվեր, կեղծ փաստաթղթեր ձեռքբերելով՝ կարողացել էր հասնել մինչեւ Լոնդոն:

Թեւ բոլոր թերթերը բավականին ծավալուն պատմություններ էին հրապարակում այդ ամբողջ գործի հետ կապված, Լոնդոնի «Թայմս» ամենաանդրդվելիս էր, որի լրագրող Էն-Իվ Պրուդենսը ամեն շաբաթ հոդվածներ էր գրում «ահասարսուտ սպանության», «Բոսնիայից Լոնդոնի փողոցներ տեղափոխված ատելության», «այն կնոջ մասին, ով իր դատավարության ողջ ընթացքում բացարձակապես չէր զղջացել»՝ հաճախ բացահայտ կերպով անցնելով սպանված տղամարդու կողմը, դրանով իսկ առաջացնելով կանանց իրավունքների պաշտպանության գծով մի շարք հասարակական կազմակերպությունների զայրույթը, ինչպես նաեւ նրանց, ովքեր անողորմաբար ու հրապարակայնորեն պահանջում էին բրիտանական քրեական համակարգի բարեփոխումը, եւ ովքեր դատապարտում էին կյանքի անմարդկային պայմանները հին ու գերձանրաբեռնված կալանավայրերում, ինչպիսին է հատկապես Հոլոուեյը: Ես հիշեցի այլ հոդվածներ եւս: Եվ այսպես, այդ հոդվածներից մեկում գրված էր, որ երբ ոստիկանությունը ժամանել էր հանցագործության վայրը, մեղադրյալն առանց որեւէ բառ ասելու հանձնվել էր եւ դեպքի վայրում ներկա գտնվող խուզարկուին հանգիստ հանձնել էր սպանության համար օգտագործած զենքը՝ ինը միլիմետրանոց «Բերրե-

տա»-ն: Հիշում եմ, որ իմ ուշադրությունը սեւեռվել էր հատկապես այն փաստի վրա, որ մեղադրյալն իր գոհի վրա արձակել էր բոլոր ութ փամփուշտները, մեկը՝ ճակատին, երկուսը՝ կրծքին, իսկ մնացածը՝ տուժածի աճուկային հատվածին:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ մեղադրյալը հանցագործության վայրից բերման էր ենթարկվել զենքը ձեռքին, որ նա չէր հերքել իր մեղքը, ընդհակառակը, ամբողջ դատաքննության ընթացքում որպես պաշտպանություն ընտրել էր լռությունը, զարմանալի չէր, որ Գերագույն դատարանը, ընդամենը մեկ ամիս հետաքննություն անցկացնելուց եւ քննիչ հանձնաժողովի որոշումը կայացնելու համար, ընդամենը կես ժամ ընդմիջումից հետո վերադարձավ դատավճռով՝ քսան տարվա ազատազրկում՝ առանց բողոքարկման իրավունքի:

Այս մտքերով տարված՝ ես մոտեցա կարմիր աղյուսե շենքին, որի դիմաց կանգնած մոտ տասը կին եւ երկու-երեք տղամարդ, որոնք ցրտից գետինն էին դոփում՝ փորձելով տաքանալ նաեւ պլաստիկ թերմոսից գավաթների մեջ լցված թեյով, պարզած պաստառներով բղավում էին սովորական դարձած անհետաքրքիր կարգախոսներ, որոնց բուն իմաստն այլեւ ոչ ոք չէր լսում, առավել եւս իրենք: Պորտաֆոնի միջոցով հերթապահներին այցիս նպատակը բացատրելուց հետո անցա կանաչ, մետաղական դռների միջով, որոնք իմ ետեւից ավտոմատորեն թրմփոցով փակվեցին: Հմուտ ցուցարարների անիմաստ մանտրան նուսիսկ այստեղ էր լսելի: Ապակեպատ ու զարմանալիորեն լավ լուսավորված բանտի շենքը մտնելուց հետո միայն փողոցի ծանր երթեւեկության աղմուկն ու ցուցարարների խոսափողը փոխարինվեց ընդարձակ միջանցքի հարմարավետ լռությամբ: Եվ մի տարօրինակ հոտ - հոտերի թափանցիկ ու թեթեւ խառնուրդ՝ կանացի մարմնի եւ ախտահանիչ միջոցների, որը սովորաբար օգտագործվում է հատակը ախտահանելու համար: Երբ իմ աջ կողմում գտնվող կանաչ դուռը բացվեց, գեղեցկատես ու փխրուն, բանտային մոխրագույն համազգեստով մի շիկահեր՝ փնջած վարսերով, հայտնվեց եւ, երկնագույն աչքերով նայելով ինձ, չոր ու պաշտոնական ասաց. «Հետեւե՛ք ինձ, խնդրեմ»:

Նմանատիպ կանաչ դռան ետեւում պլաստմասե ցուցանակով, որի վրա ուղղակի գրված էր «ժամապահ», մեզ դիմավորեց հաստափոր, ակնոցակիր մի ճաղատ տղամարդ՝ մուգ կապույտ գծավոր կոստյումով եւ

խոնավ ձեռքսեղմումով: Ընդունված ներածություններն ասելուց հետո եւ ինձ առաջարկելով խոսել սեղանի մյուս կողմում, նա հարցրեց, թե արդյո՞ք՝ թեյ, սուրճ, հյութ կկամենամ, իսկ հետո նա մեկեն պաշտոնական կեցվածք ընդունեց:

-Հասկանում եք... սա շատ... նուրբ հարց է,- կակազում էր նա, եւ տեսանելի քրտինքի կաթիլներ սկսեցին գոյանալ նրա ճակատին ու քթի տակ: Բաճկոնի գրպանից հանեց թաշկինակն ու սրբեց քրտնած ափերն ու ճակատը: Այդ մարդն ակնհայտորեն դժվար իրավիճակում էր հայտնվել, եւ իմ ներսում կար մի տարօրինակ զգացում, որը նման էր կարեկցանքի: Նրան մի փոքր ժամանակ տալու համար, որպեսզի մտքերն ի մի բերի ու քաջություն հավաքի, ասելու այն, ինչ պետք է ասեր, ես կապուտաչյա սիրունիկ շիկահերից, որը շարունակում էր ճեմել մուտքի մոտ, մի բաժակ թեյ խնդրեցի՝ կաթով ու շաքարով:

Ժամապահի դեմքին թեթևություն նշմարվեց: Հենց որ շիկահերը հեռացավ, նա շարունակեց՝ այժմ արդեն ավելի վստահ:

-Խոսքը գնում է NS 15739 համարի կին բանտարկյալի մասին: Հավանաբար դուք կհիշեք՝ նա այն բոսնիացին է, ում մասին ՉԼՍ-ները միայն վերջերս բազմաթիվ անգամ գրել են՝ Նադա Սուչիչը, ով սպանության մեղադրանքով դատապարտված է քսան տարվա ազատազրկման...

- Ես այդ գործին ծանոթ եմ,- հանգիստ ձայնով զգուշորեն միջամտեցի ես, մի քիչ ցինիկաբար ավելացնելով.- Բոսնիայից մի խորվաթ, ով սպանել էր սերբ Սվետոզար Ստանիմիրովիչին, մի մարդու, ով ռազմական հանցագործությունների համար դատապարտված էր Բոսնիայում, ով կեղծ փաստաթղթերի օգնությամբ փախել է այս երկիր: Եթե հիշողությունս ինձ չի դավաճանում, այն ժամանակ բրիտանական մամուլը թեթեակի էր հիշատակում սպանվածի ռազմական հանցագործ լինելու փաստը, ավելի շատ կենտրոնանալով այն բանի վրա, թե ինչպես են նրան գնդակահարել սեփական տան դիմաց, եւ ինչպես է ամբողջ գործն ընթացել՝ ապացուցելու, որ Բոսնիայից բալկանյան ցեղերի միջև բռնությունն ու ատելությունը գաղթել են Լոնդոնի փողոցներ:

Ազդվելով իմ ասածներից, մոլորվելով, թե ինչ պատասխան է տալու, նա պահն օգտագործեց եւ կրկին թաշկինակով սրբեց ճակատը: Այդ պահին շիկահերը սկուտեղը ձեռքին, որի վրա դրված էր երկու սափոր՝ մեկը թեյի, մյուսը կաթի, մի քանի բաժակ ու երկու պնակ՝ մեկը շաքա-

Նիկոլա ԴՈՒՐԵՏԻՉ

րավագի խորանարդներով, մյուսը թեյի ինչ-որ տեսակի թխվածքաբլիթներով, ևորից սենյակ մտավ: Նա սկուտեղը դրեց պատի մոտ գտնվող դատարկ սեղանի վրա և սկսեց թեյը լցնել: Ժամապահը շարունակում էր կակազել.

- Հասկանում եք... կալանավորին այս առավոտ... գտել են իր խցում: Դատելով... դե... ինչ եմ ուզում ասել... ըստ նախնական ծառայողական հետաքննության... կարծես թե... ինքնասպանություն է: Այնտեղ հայտնաբերվել է... ինքնասպանության մասին մի գրություն: Ձեզ կանչել ենք, որ... ըրը... որպեսզի թարգմանեք այդ գրությունը: Իհարկե, այս բոլոր տեղեկությունները խիստ գաղտնի են և չպետք է այս պատերից դուրս գան,- ասաց ժամապահը, ում ինքնավստահությունը տղամարդու վճռականության հետ մեկտեղ վերադարձել էր, և ով կրկին իր տարերքի մեջ էր:

Ես գլխով արեցի, ցույց տալով, որ հասկացել եմ իրավիճակի նրբությունը, թեյս վերջացրի ու հարցրի, թե որտեղ կարող եմ աշխատել նրա նշած տեքստի վրա: Նա ինձ առաջարկեց կողքի սենյակը:

-Այն այս պահին լրիվ դատարկ է, այն ժամանակ առ ժամանակ ծառայում է որպես ասուպիսների սենյակ... Այնտեղ նաեւ համակարգիչ կա, և թեյի մեծ պաշար, որի մասին կհոգա Տեյնը, ինչպես նաեւ այն ամենի համար, ինչի կարիքը կլինի: Գործն ավարտելուն պես այստեղ կթողնեք սկավառակի միակ օրինակը, իսկ Տեյնը կնշի ձեր տվյալները, որպեսզի մենք կարողանանք վճարել ձեզ:

Եվս մեկ անգամ նրան տեղեկացրի, որ լիովին հասկացել եմ թռուցիկ ավելացնելով, որ նա չանհանգստանա, եթե լսի, թե ինչպես եմ բարձրաձայն թարգմանում:

-Սա արդեն ինձ մոտ սովորություն է դարձել... ահա թե ինչպես եմ աշխատում BBC-ում... Ես բարձրաձայն թարգմանում եմ, իսկ իմ օգնականը տպում է տեքստը... Դա ամեն ինչ հեշտացնում է:

Նա սրան դեմ չէր:

Այդ պահին, այդ անչափելի ակնթարթում, իմ գործողությունների ամբողջ ընթացքը, իմ որոշումը զուտ բնագոյային էր, բացարձակապես անբացատրելի ու ռացիոնալ: Իմ ձայնագրիչի վրա կալանավորվածի ինքնասպանության գրառման թարգմանությունը ձայնագրելու ակնթարթային այդ որոշումը և այդպե՛րպ այն մոռացությունից փրկելն այդ պա-

հին միանգամայն անտրամաբանական էր. դա միայն կանխազգացում էր, թերեւս մասամբ հիմնված ժամապահի խոսքերի ու դրսեւորած վարքագծի վրա, սակայն, այնուամենայնիվ, դա լոկ մի կանխազգուշացում էր, որ անգամ այստեղ կարող էին փորձել թաղել ամբողջ գործը, որի դեպքում Նադա Սուլջիչի նամակի բովանդակությունը՝ ոմն Սվետոզար Ստանիմիրովիչի սպանության համար, քսան տարվա ազատազրկման դատապարտված բոսնիացի բանտարկյալի այդ գրությունը կարող էր ընդմիջտ կոծկվել, կորսվել ժամանակի հորձանուտում, ժամանակ, որ միտված չէր դեպի այդ թշվառ, տանջալիլ կինը, ոչ էլ՝ նրա երկիրը, ոչ էլ բոլոր նրանց, ովքեր չէին ցանկանում, որ նրանք տառապեն, եւ նրանք բոլորը, ովքեր պատասխանատու էին այդքան ցավի, քառսի ու սարսափի համար, իրենց կյանքերն էին բրենդավորել՝ ոմանց համար մահ վճռելով, որ այդքան հեշտությամբ մոռացվի:

Ինչպես ասացի, իմ գործողությունները միանգամայն բնագոյային էին, գուցե լրագրողական, կամ պարզապես մարդկային մղումներից ելնելով, սակայն դրանք լիովին արդարացված էին, քանի որ բանտի դեկավարությունն իսկապես փորձ էր անում թաղել ամբողջ գործը: Պաշտոնական քննության ավարտից հետո «պարզ դարձավ, որ բոսնիացի փախստական, NS 15739 համարով բանտարկյալ Նադա Սուլջիչը կախվելու միջոցով ինքնասպան էր եղել՝ թողնելով ինքնասպանության վերաբերյալ կարճ մի գրություն, որտեղ ասվում էր լոկ այն մասին, որ եւ այլեւս այս կերպ շարունակել չի կարող, եւ որ «ներողություն է խնդրում այն մարդկանից, ում ցավ էր պատճառել եւ ում նկատմամբ անարդար էր եղել»:

Այնուամենայնիվ, մի քանի էջից բաղկացած նամակը, որ եւ թարգմանեցի, միանգամայն այլ բան էր արձանագրում: Այդ նամակի թարգմանությունը մինչ օրս եւ պահպանում եմ փոքրիկ ձայնագրիչի ժապավենի վրա, որն ինձ հետ տարել էի Հոլոուեյի բանտից, 1997 թ. սեպտեմբերի 6-ին՝ առանց ժամապահի իմացության: Այդ ձայներիզն ունի հետեւյալ մակագրումը. ՄԱՀՎԱՆ ՈՒ ԱՆՀԵՏԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ 06/09/97: Հետեւյալն այդ ձայնագրության ուղիղ վերձանումն է.

«Ինձ համար անասելի դժվար է գրել այս ամենը, իմ ցավը, սակայն այժմ դա այլեւս նշանակություն չունի: Ամեն ինչ վաղուց դադարել է նշանակություն ունենալ, քանի որ եւ ու իմ հարազատն արդեն տեսական

Նիկոլա ԴՈՒՐԵՏԻՉ

Ժամանակ է, ինչ դադարել ենք գոյություն ունենալ: Եվ այն ամենն, ինչի մասին կընտրեմ եմ այստեղ, լոկ մի մասն է այն զրառումների շարքից, այն սարսափների շարքից, որոնք սկիզբ առան այն օրը, երբ այդ անցանկալի, անկոչ գազանները բռնի կերպով մտան մեր տուն: Այդ ամենն, ինչպես կընտրեմ, ընդամենը մեկ էջ է մահվան ու անհետացման մասին այս ժամանակագրությունում, որը մենք գրել ենք տարիներով, դարերով, սակայն բոլորն անտարբեր են, ոչ ոք մեզ չի լսում:

Եվ հենց այստեղ է, որ ես ամեն ինչ կիիշատակեմ այնպես, ինչպես դա եղել է, եւ նրանք, ովքեր կհավատան՝ թող հավատան, իսկ ովքեր ոչ՝ թո՛ղ:

Այն պահից ի վեր, երբ ամեն ինչ սկսվեց, նախ, Սլովենիայում, իսկ հետո Խորվաթիայում, ես անընդհատ ասում էի ամուսնուս. «Ստեֆան, արի հավաքենք մեր ճամպուրակներն ու զնանք այստեղից, սա լավ պարտ չի ունենալու»: Բայց նա համար էր.

-Բոսնիան տարբեր է,- պատասխանում էր նա,- մարդիկ այստեղ սովոր են համակեցությանը... մենք բոլորս մերվել ենք... ոչինչ չի լինի, կտեսնենք:

Իսկ ես պատասխանեցի.

-Ո՞նց ես կարողանում այսպես շարունակել: Ի՞նչ է, չե՞ս լսել, թե ինչ էր ասում այդ Ռադովանը, իսկ մարդիկ դյուրահավատ, զգայուն, շուտ փչացող ապրանք են... սրանից լավ հոտ չի գալիս:

Բայց նա դա չէր գնի, իմ Ստեֆանը: Նա միշտ անվերապահորեն էր հավատում մարդկանց: Ու երբ նրանք նրա հանդեպ որեւէ վատ բան էին անում, նա ասում էր. «Ամեն չարիքից ինչ-որ բարիք է գալիս»: Իսկ որոշ ժամանակ անց ես դադարեցի բողոքել ու փորձել համոզել նրան: Ես հասկացա, որ նա լսում է իմ բոլոր ասածները, սակայն ոչինչ չի անում: Եվ այսպես, ինքս ինձ ասացի. «Ի՞նչ օգուտ կա իմ անընդհատ նվաճողներից: Անշու՛շտ, նա գիտի, թե ինչ է անում»: Եվ երբ գործարանում դեկավար պաշտոններից ազատեցին բոլոր խորվաթներին ու մուսուլմաններին եւ փոխարինեցին իրենց մարդկանցով, երբ նրան փոխարինեցին այդ Սվետոզարով, անգամ այն ժամանակ նա ջանում էր նրանց համար, ովքեր դեռ միևնույն էրեն նրա գործընկերներն էին, այդ արարքների համար արդարացումներ գտնել: Նա ասում էր. «Ես կուսակցության անդամ չեմ, բայց Սվետոզարը անդամ է, այնպես որ, բնական է, որ նրանք այս

պատասխանատու պաշտոնին պետք է նշանակեն մեկին, ով կուսակցությունում է»: Ի՞նչ կուսակցություն, ինչի՞ մասին է խոսքը: Նրան նշանակել էին, որովհետև նա սերբ էր, հեշտությամբ էր գործարքների գնում, այլ ոչ այն պատճառով, որ նա կուսակցության անդամ էր: Սա բոլորը գիտեին, և միայն իմ Ստեֆանն էր ձեռագրում, թե չգիտի: «Դե, մենք իրար հետ լավ հարաբերությունների մեջ ենք, միասին ֆուտբոլ ենք խաղում, և երկուսս էլ գործարանի շախմատի ակումբի անդամ ենք»,- ասում էր նա: «Նա նույնիսկ ներկա էր մեր հարսանիքին: Այո՛, այնտեղ էր: Եւ առաջարկեց, որ նա լինի մեր չեռնոգորացի քավորը (սովորույթի համաձայն՝ քավորը առաջին ամուսնական գիշերը փոխարինում է ամուսնուն: Բանն այն է, որ եթե փեսան շատ հարբած լինի, քուն մտնի կամ ամուսնական առաջին գիշերը չկարողանա սպառվել, այդ դեպքում քավորը կփրկի փեսացուի դեմքը՝ հարսի ու նրա ընտանիքի համար)... Սակայն Ստեֆանի ներկայությամբ նա չէր համարձակվի դա ասել նրան, փոխարենը՝ նա կիսահարբած լորձուկքոտեց ականջս, երբ Ստեֆանն այդ կողմ չէր նայում: Եվ հետո, երբ սրահում ինչ-որ պարի կամ խնջույքի ժամանակ հանդիպում էինք, այս տականքը գոեհկանում էր և անպարկեշտ խոսքեր շնջում ինձ, իսկ ես նույնիսկ չէի համարձակվում այդ մասին ասել Ստեֆանին: Ես ու Ստեֆանը երեխաներ չունեինք, Ստանիշան՝ նույպես, այսպես, նրան կանչում էին ռաքիա խմելու... ամեն տեսակ գոեհկություններ էր դուրս տալիս... ասես ամուսինս ոչինչ չարժեր... որ ես գնայի իր տուն, ինքը որոշ բաներ ուներ ինձ ցույց տալու... Եվ այսպես շարունակ... շնջալով... հանգիստ... ու հպվելով ինձ իր կեղտոտ թաթերով, երբ ոչ ոք չէր նայում... այդ ամբողջ ժամանակ մնալով սիրալիր ու ընկերական Ստեֆանի հետ... ասելով նրան, որ իրենք վաղեմի ընկերներ են... հարցնելով նրան, թե ինչու մենք ավելի հաճախ չենք այցելում նման սոցիալական հավաքույթների... երբ նրանք հավաքվում էին ֆուտբոլային խաղերի ժամանակ... և այլև: Իսկ ես ուղղակի լուռ էի մնում: Ես չէի հանդգնում անգամ մի բառ արտասանել. գիտեի, որ եթե ամուսինս այդ մասին իմանար, նա կխեղազարվեր... դա կարող էր նույնիսկ արևահեղության հանգեցնել:

Իսկ հետո ամեն ինչ դժոխքի վերածվեց: Առաջին կրակոցները հնչելուց հետո անմիջապես պարզ դարձավ, թե ով ով է, և ում կողմից: Մարդիկ, որ մինչեւ երեկ ընկերներ ու հարեաններ էին, հանկարծ դավաճա-

ևաբար փոխեցին իրենց նվիրվածությունը, դարձան ուրացող եւ սկսեցին պարել այլ նվագի տակ: Մեր սերբերը մեկեն դարձան կազմակերպված, զենքեր ձեռք բերին: Ի՞նչ եմ ասում՝ միանգամից ակնհայտ էր, որ նրանք երկար էին դրան պատրաստվել... բոլորն արդեն զինված էին: Նրանք համաձայն չէին հանրաքվե անցկացնելու, նրանք իրենցն էին ուզում, երկրի ներսում սեփական երկիրն էին ուզում, նրանք ժողովրդին դուրս հանեցին իրենց տներից, խառնավնթոր վիճակ ստեղծեցին: Իսկ մենք բոլորս լուռ մնացինք, եւ երբ բարձրաձայնեցինք, այն ժամանակ տպավորություն էր, թե ներողություն էինք խնդրում: Եվ մենք փորձում էինք այդ իրավիճակում զուսպ լինել այնքան ժամանակ, մինչեւ որ ամեն ինչ շատ հեռուն զնաց: Սարդիկ, պետք չէ այդպես անել, չե՞ք տեսնում, որ մենք մերվել ենք, չե՞ք նկատում, որ մենք բոլորս մինչեւ հիմա ներդաշնակ էինք ապրում, չե՞ք ըմբռնում, որ մենք բողոքելու ոչ մի բան չունենք: Սակայն տաք գլուխը չի լսում: Նրանք պնդում էին, իրենցն էին ուզում եւ՝ վե՛րջ: Ու ոչ միայն այն, ինչն իրենցն էր, այլեւ այն, ինչն իրենցը չէր... Բոսնիան նրանց հարմար չէր, նրանք հատուկ իրենց առանձին հանրապետությունն էին ցանկանում: Եվ հենց առաջին արյունը թափվեց, եւ հասկացա, որ ամեն ինչ վերջացած է:

Միայն ամուսինս դեռ չէր հավատում, չէր ցանկանում հավատալ:

Երբ նրանք ի վերջո եկան, կիրակի օր էր, սա եւ շատ լավ եմ հիշում, ամբողջ գիշեր անձրեւ էր տեղացել, եւ առավոտը բացվեց մի տեսակ մոխրագույն, սառը, փշրված, ասես անկարող որոշելու, թե ուզածն ինչ է... ուզում էր ցերե՛կ դառնա, թե՞ վերածվի գիշերվա:

Դռան թակոցն ու աղմուկն արթնացրին ինձ: Մի պահ մտածեցի, թե երազ եմ տեսնում: Այնուհետ թմփթմփոցը շարունակվեց: Ստեֆանն արդեն արթնացել ու հագնվում էր: Ես նույնպես վեր կացա եւ գիշերաւոցի վրայից հագնելով վերնազգեստս, իջա առաջին հարկ: Դրսից իրարանցման ձայներ էին լսվում: Ես բացեցի դուռը եւ ի՞նչ տեսնեմ. տասնյակից ավել՝ մորթե գլխարկներով ու նշաններով շայկաչաները*

* *Շայկաչան սերբական ազգային գլխարկն է: Սերբիայում 20-րդ դարի սկզբներից հայտնի ազգային խորհրդանիշ է, հիմնականում այն սեւ կամ մոխրագույն է, եւ սովորաբար պատրաստվում է փափուկ, տնական կտորից: Այն լայն տարածում գտավ սերբ տղամարդկանց շրջանում Առաջին սերբական ապստամբության ժամանակ, եւ 19-րդ դարի սկզբից մինչեւ 20-րդ դարի վերջ սերբ զինվորա-*

գլխներին դրած, հրացանները ձեռքներին, փամփշտակալներով ու նուակներով զինված, եւ դրանից բացի՝ բոլորը հարբած էին: Իսկ նրանց ուղեկցում էր Ստանիշան: Հենց դուռը բացի, ևս պոռթկաց՝ հայիոյելով. «Մի կողմ քաշվիր, ուստաշի փչացած»;

Ռաքիայի գարշահոտությունը նրա ետեւից տարածվեց տան մեջ: Այդ պահին Ստեֆանն իջնում էր աստիճաններով: Նա անգամ չհասցրեց որեւէ բան ասել, երբ նրանցից մեկը հրացանի կոթով հարվածեց նրա գլխին: Ստեֆանի մոտ առատ արևահոտություն սկսեց: Ես ճչացի եւ ուզում էի օգնել նրան, բայց Ստանիշան բռնեց ինձ ու միջանցքով ցած իջեցրեց: «Հիմա նրա մասին մի՛ մտածիր... ևս կդիմանա, ուսուցչուհի, քո՛ մասին մտածիր», - ասաց ևս՝ արյունոտուշտ աչքերով: «Մեր ժամանակը եկել է: Պսակք խոհանոց եւ մեզ համար սուրճ պատրաստիր»:

Ես ուղղակի քարացա, իմ ներսում ինչ-որ բան էր այրում, չկարողացա բերանս բացել ու ինչ-որ բան ասել: Մյուսները, տեսա, մոտեցան Ստեֆանին, հատակից բարձրացրին նրան եւ ցեխի ու ցրտի միջով քարշ տալով տարան: Ես սուրճը դրի, մինչդեռ վախն ու հուսահատությունն իրար էին զարնվում իմ մեջ: Ինքնըստիևքյան աչքերիցս սկսեցին առատորեն արցունքներ գլորվել: Կատարվածին չէի կարողանում հավատալ: Իսկ մտքերս խենթորեն սլալում էին: Արցունքներիս միջից նայեցի վառարանին եւ, Աստված իմ, մտածում էի, թե ինչու նախորդ գիշեր չէի մաքրել վառարանը, ինչու չէի մաքրել նաեւ խոհանոցը... ինչու նրանք տեսնեին այս խառնաշփոթությունը: Ես շարունակում էի սպունգով կիսատ-պռատ մաքրել երեկվա ճաշի հետքերը, երբ Ստանիմիրովիչը թիկունքից ինձ վրա կռացավ՝ փնչացնելով պարանոցիս: Նրանից ռաքիայի հոտ էր գալիս եւ նրա թունավոր շնչառության գարշահոտը տարածվեց ինձ վրա: Ես խալաթս ավելի ամուր էի սեղմում՝ ասես այդ գարշահոտությունից ու թշվառ վիճակից պաշտպանվելու համար: Իսկ հետո դրսում կրակոցներ լսեցի: Հերթա-

կանների համազգեստի հիմնական բաղկացուցիչ մասն էր կազմում: Այժմ հիմնականում կրում են տարեց մարդիկ՝ Սերբիայի գյուղական վայրերում: Հարավսլավիայի փլուզման տարիներին շայկաչա կրում էին բոսնիացի սերբ պահեստազորայիներն ու կիսառազմական ջոկատայիները՝ 1990-ականների բոսնիական պատերազմի ժամանակ, իսկ ավելի ուշ բոսնիացի սերբ զինվորական ուժերի կողմից ընդունվեց որպես Սերբիայի Հանրապետության բանակի պաշտոնական զիխանոցը:

կան կրակոցը, հետո երկու առանձին կրակոց ատրճանակից: «Ահա եւ վե՛րջ: Այլեւ ոչ մի ուստաշի», - ասաց Ստանիմիրովիչն ու նստեց սեղանի մոտ, կարծես եկել էր... ամուսնու հետ կիրակի օրը կայանալիք շախմատի հաջորդ մրցաշարը կամ ֆուտբոլային հանդիպումը քննարկելու: «Քեզ ասում էի, չէ՛, ուսուցչուհի, որ դու սխալ մարդու ես ընտրել», - շարունակեց նա: «Այդքան երիտասարդ ու հպարտ, բայց արդեն՝ այրի»: Ես լռեցի ու հեկեկացի, իսկ գլխումս հնչում էր՝ «Ստեֆանն այլեւ չկա»: Ի՛նչ անեմ: Վա՛յ ինձ: «Հիմա ուրիշ մեկը քեզնով կգբաղվի», - մոնչաց քստմնելի խոզը: Երբ մյուսները տուն վերադարձան՝ գարշահոտ ու ցեխոտ, երբ սկսեցին ամեն ինչ ջարդել, քանդել ու հիմնահատակ անել, Սվետոզարն իր հրացանով հարվածեց ինձ ու հրամայեց բարձրանալ ննջասենյակ: «Հանգիստ թո՛ղ ինձ, ի՛նչ ես անում, ի՛նչ տեսակ մարդ ես դու, Ստանիմիրովիչ»: Եւ նա պատասխանեց. «Ձայնդ կտրի՛, փչացած ուստաշի, շորերդ հանի՛ր ու պառկիր»: Նա արդեն հուսկից դուրս էր եկել: Իսկ ես արցունքներն աչքերիս՝ անզորությունից աղաղակեցի. «Սի՛ արա, Ստանիմիրովիչ, աղաչում եմ, պետք չէ՛»: «Փակի՛ր բերանդ, ու երախտապարտ եղիր, որ թուկ չեմ տալիս, որ մյուսներն էլ գան: Եթե չլիներ այն փաստը, որ ես քեզ սիրում եմ, քեզ կհանձնեի ներքեի այդ ավազակներին ու կթողնեի, որ նրանք բոլորը հերթով զբաղվեին», - եւ նա ինձ ցած հրեց անկողնու վրա, որը դեռ տաք էր իմ Ստեֆանից: Եվ կեղտն ու խավարը մտան իմ մեջ, իսկ ճիչն ու հուսահատությունը դուրս հորդեցին:

Ինչ եղավ հետո՝ չգիտեմ: Այդ տողկալի, տխուր, սարսափելի ակնթարթում Նադա Սուլջիչն այլեւ չկար: Նա ոչնչացավ: Նա դադարեց գոյություն ունենալ: Այդ անչափելի ակնթարթից դարձա ուրիշ մարդ, ուրիշ բան, դարձա մի առարկա: Ասես ամբողջ էությունս շաղախվել էր ինչ-որ կեղտոտ ջրով, խեղդել ինձ, դուրս հանել մեջիցս այն ամենն, ինչ իմն էր, թողնելով լոկ մի կեղեւ՝ լցված կեղտով ու կարագույն խավարով:

Ինչպես հայտնվեցի այդ տանը, չեմ հիշում: Միայն գիտեմ, որ այնտեղ ուրիշ կանայք էլ կային: Երիտասարդ աղջիկներ ու ծեր կանայք: Մուգ գույնի մազերով, շիկահեր, թխահեր: Յաճրահասակ, գեր, բարձրահասակ, նիհար: Սակայն բոլորն էլ՝ խորվաթներ ու մահմեդականներ էին: Մեզ անասունի պես պահում էին այդ տանը: Անում էինք այն, ինչ ասում էին, իսկ ովքեր հանդգնում էին, կային նաեւ, որ ըմբոստանում

Էին, կրակում էին գլխին կամ կտրում էին կոկորդը: Նրանք մեզ ամեն օր բռնաբարում էին: Երբեմն մեկ կամ երկու անգամ, երբեմն՝ ավելի շատ: Սկզբում Սվետոզարը թույլ չէր տալիս, որ ինձ դիպչեն, միայն նա... իր այդ կեղտոտ ձեռքերով, բայց այդ ժամանակ դա ինձ համար արդեն մի-եւնույն էր: Համենայն դեպս, ես մեռած էի: Եվ հետո մի օր... նա հարբած էր, եւ այդպես էլ չսթափվելով, կանչեց եւս երկու հոգու: Նրանք երեքով... Նույնիսկ հիմա չեմ կարողանում ինձ ստիպել այդ մասին հիշել... Այդ ժամանակ ես ինքս ինձ երդվեցի, որ եթե ողջ մնամ, չեմ հանգստանա, մինչեւ նրան իր գերեզմանը չդնեն:

Յոթ օր անց նա ինձ տարավ Վիշեգրադ՝ «Վիլինա Վլաս» առողջաբուժանային համալիր եւ այնտեղ թողեց: Այդ համալիրը վերածվել էր կանանց ճամբարի: Նրանք ինձ մյուս կանանց հետ փակեցին սենյակում: Մեր ձեռքերը պարբերաբար մետաղալարով կապում էին մեր մեջքի վրա: Նրանք մեզ չէին արձակում նույնիսկ այն ժամանակ, երբ մեզ համար ուտելիք էին բերում... Եթե դա ուտելիք էր համարվում... այնպես որ, պիտի հացի կտորները կծեիք հատակից, ինչպես կարող էիք, եւ մեզ արձակում էին միայն այն ժամանակ, երբ գալիս էին մեզնից մեկին բռնաբարելու: Նրանք մեր միջից ընտրում էին մեկին, տանում մշտապես փակ սենյակներից մեկը: Այնտեղ բռնաբարում ու կտտանքների էին ենթարկում: Նրանք այրում էին մեր մաշկը վառած ծխախոտով ու դանակներով կտրում, ծակում էին մեզ: Ես նրանցից մեկին խնդրեցի սպանել ինձ, բայց նա ուղղակի ծիծաղեց ու ասաց. «Ո՛չ հիմա, մինչեւ մի փոքրիկ սերբ չծնես»: Ամեն անգամ, երբ մեզանից մեկը հղիանում էր, նրանք նրան փակի տակ էին պահում, որ չվիժի: Երիտասարդ աղջիկներից մեկը այլեւս չդիմացավ եւ իրեն ցած նետեց երկրորդ հարկի պատուհանից: Նա նույն վայրկյանին մահացավ: Նրանք ուղղակի նրան վերցրին ու գցին Դրինա գետը: Այն ժամանակներում Դրինայի կանաչ ջրերը կրկին անգամ գունափոխվեցին:

Եվ վերջապես օրերից մի օր ինձ մի կերպ հաջողվեց փախչել: Նրանք ինձ ստիպել էին լվացք անել եւ ինչ-որ կերպ ինձ հաջողվեց գաղտագողի դուրս սողոսկել համալիրից:

Բացօթյա ջրի պոմպի մոտ, որտեղ մենք լվացք էիք անում, խիտ անտառ կար: Մեզ հսկող պահակը նետվեց կանանցից մեկի վրա եւ նրան

Նիկոլա ԴՈՒՐԵՏԻՉ

տարավ թփերի մոտ: Ես նրա դժբախտությունն իմ օգտին օգտագործեցի եւ թաքնվեցի պատի ետեւում, իսկ հետո վազեցի անտառի կողմը: Ես գիտեի անգլիացի մի պրոֆեսորի, որը Վիշեգրադից էր: Ես նրա հետ ծանոթացել էի կրթության ոլորտի աշխատակիցների համար կազմակերպվող կոնֆերանսներից մեկի ժամանակ, եւ մտածեցի, որ եթե ինչ-որ կերպ հաջողվի հասնել նրան, այդ մարդը կօգնի ինձ ազատվել այս սարսափից: Եվ այդպես էլ եղավ: Ինչ-որ կերպ ես գտա նրա հասցեն, եւ, բարեբախտաբար, նա տանն էր եւ երկու-երեք օրով թաքցրեց ինձ իր տանը: Նա ինձ ասաց, որ չանհանգստանամ, եւ որ ինձ կտեղափոխի միևնչեւ Գորաժդե, որն այդ ժամանակ ՄԱԿ-ի վերահսկողության ներքո էր: Նա նաեւ նշեց, որ աշխատում է այնտեղ տեղակայված բրիտանական ուժերի համար՝ որպես թարգմանիչ: Ես չգիտեի, թե արդյո՞ք կարող էի նրան վստահել, բայց կորցնելու ոչինչ չունեի. ավելի վատ բան չէր կարող լինել: Սակայն պարզվեց, որ նա իր խոսքի տեր մարդ է:

Ինչչեւ, նա հենց այդպես էլ արեց: Նրան հաջողվեց ինձ տանել Գորաժդե, իսկ մեկ ամիս անց ես ստացա անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը եւ որպես փախստական՝ ինձ ուղարկեցին Մեծ Բրիտանիա: Ես խորապես պարտական եմ այդ մարդուն ու երբեք չեմ մոռանա այն, ինչ նա ինձ համար արեց: Ահա թե ինչու ես չեմ ցանկանում նշել նրա անունն ու ազգանունը, որպեսզի նրան անհարմարություններից զերծ պահեմ, բայց նրա պատվին պետք է հուշարձան կանգնեցնել:

Անցան տարիներ, եւ ես կարողացա բնակություն հաստատել Բրիտանիայում: Որպես փախստական՝ Լոնդոնի հյուսիսային թաղամասերից մեկում ինձ մի փոքրիկ բնակարան հատկացրին եւ որոշ ֆինանսական օգնություն, որին ավելացան մաթեմատիկայի իմ մասնավոր պարապմունքների եկամուտները, եւ կամաց-կամաց կյանքս քիչ թե շատ սկսեց կանոնավորվել: Ես շատ բան չունեի, սակայն եղածն էլ ինձ բավական էր: Տարօրինակ արարած է մարդը: Ընդունակ՝ ամեն բան տանելու: Կենդանու պես լիզելով իր վերքերը՝ շարժվում է առաջ: Եթե միայն հնարավոր լիներ մոռանալ անցյալը, այդժամ դա կլիներ կյանք, որն արժե՛ր ապրել: Բայց անիծված էր ճակատագիրս:

Ես ամենն ինչ այնքան լավ եմ հիշում, ասես դեռ երեկ էր: Գնացել էի մոտակա ինքնասպասարկման խանութ՝ որոշ մանր-մունր ապրանքներ գնելու: Ես հիում էի ձեռնասայլակը՝ այնտեղ դնելով հաց, աղ, այլուր, եւ

կաթի դարակին մոտենալիս՝ էլեկտրականացված կանգ առա, երբ հայացքս ընկավ մի տղամարդու վրա, ով ինչ-որ բան էր հանում իմ դիմացի դարակից ու դնում զամբյուղի մեջ: Սիրտս կանգ առավ, արյունս քարացավ, մտածեցի, որ կուշաթափվեմ: Ես չէի կարողանում շնչել, ձեռքերս դողում էին, ոտքերս՝ ցնցվում: Ճակատս պատվեց սառը քրտինքով: Նա կանգնած էր այնտեղ՝ իմ դիմաց... Երկու մետր հեռավորության վրա... Նա ոչ այլ ոք էր, քան ինքը՝ Սվետոզար Ստանիմիրովիչը: Աղիքներս իրար խառնվեցին, ճվացին, ասես ինչ-որ մեկը դանակով խոցեց ինձ: Ձեռնասայլակը որպես հենարան ամուր բռնելով՝ ես արագ շրջվեցի, որպեսզի նա ինձ չնկատեր եւ փորձեցի շուռչա պահել: Երբ մի քիչ ուշքի եկա, որոշեցի հետեւել նրան: Արագ վճարեցի կատարած գնումների համար եւ դուրս եկա խանութից՝ համոզվելով, որ նրան տեսադաշտից չեմ կորցնում: Այդժամ ես աղոթում էի Աստծուն, որ նա ավտոբուս չբարձրանա, քանի որ չգիտեի՝ ինչպես էի ներս սողոսկելու, որ նա ինձ չնկատեր: Բախտի բերմամբ՝ նա ոտքով գնաց: Պարզվեց, որ նա ապրում էր սուպերմարկետից ընդամենը մի քանի մետր հեռու: Այդ պահից ի վեր ես կյանքում միայն մի նպատակ ունեի, ինչը նաեւ դարձավ իրական մոլուցք: Ես ամեն օր հետեւում էի նրան իր տան մոտ. գրի էի առնում նրա ելումուտը: Պարզեցի անունը, որտեղ էր աշխատում ու ինչով էր զբաղվում, եւ թե միայնա՞կ է արդյոք ապրում: Այժմ նա Ստյուարդ Սթոուն անունն էր կրում եւ աշխատում էր ինչ-որ ընկերությունում՝ որպես պահակ:

Ապրում էր միայնակ: Օրվա ընթացքում աշխատում էի ծրագրի վրա, գիշերներն անցկացնում էի մոձավանջի մեջ՝ երագելով այն, ինչը վաղուց խոստացել էի ինքս ինձ. եթե ողջ մնամ, չեմ հանգստանա, մինչեւ որ նրան գերեզման չուղարկեմ: Ես գիտեի, որ աշակերտներիցս մեկը կապեր ուներ Իսթ-Էնդի սովերային անհատների հետ: Եվ նրա եղբայրը նույնպես տեղի բանդաներից մեկում էր: Ես նրան պատմեցի այս պատմությունը, պատճառաբանելով, որ վախենում եմ միայնակ ապրելուց, եւ որ, եթե միայն իմանալի, թե որտեղից ու ինչպես կարելի է ատրճանակ ձեռք բերել ապահովության համար՝ իմ անձնական պաշտպանության համար... Ես նրան պատմեցի նրա հարեանությամբ տեղի ունեցած կողպուտի մասին, այն մասին, թե ինչպես եմ օրերս փողոցում հարձակվել մի ծեր կնոջ վրա ու կողպատել նրա ամբողջ թռչակը, որը հենց այդ

պահին էր ստացել փոստային բաժանմունքից: Սկզբում նա չարձագանքեց, բայց հետո, երբ ես նույն բանը, գրեթե ամաչելով, երեք-չորս անգամ կրկնեցի, նա ասաց, որ վստահ է՝ ինչ-որ բան հնարավոր է անել: Նա կամաց-կամաց քաջություն հավաքեց ու ասաց, որ կարող է ինձ ծախթացնել մեկի հետ, ով կարող է ինձ համար ատրճանակ գտնել եւ կշեց արժեքը: Սկզբում ես վարանում էի, անվճռական ձեռնալով, միայն հետո վերջապես ասացի. «Լավ, ուրե՛մն այսպես, կարծում եմ, որ կվերցնեմ, բայց ինձ նաեւ փամփուռներ են պետք»: Հենց հաջորդ օրը նա ասաց, որ ինձ կկապի մի տղայի հետ, ով կարող է մեկ շաբաթվա ընթացքում ձեռք բերել այն, ինչն ինձ անհրաժեշտ էր: Եվ կատարեց իր խոստումը: Մեկ շաբաթ անց նա զանգեց ինձ եւ պայմանավորվեց, որ նույն օրը ցերեկը՝ ժամը երկուսին, հանդիպենք Վաթեռլո կայարանի մոտ գտնվող Մեֆամ փողոցի «Հողվ Ին Վոլ» պանդոկում:

Երբ տեղ հասա, նա արդեն այնտեղ էր՝ մութ արտաքինով, պարանոցն ու ձեռքը դաջվածքապատ: Այդ մարդը կասկածանքով զննում էր ինձ: Նա ինձ հարցրեց՝ իմ ինչի՞ն է պետք, կարծես ինձ փորձելու ու հարցաքննելու համար: Ես պատմեցի նույն հեքիաթը. ապրում եմ քաղաքի մի հատվածում, ուր գողությունն ու միայնակ կանանց վրա հարձակումները սովորական երեւոյթ են... Ինձ դա անհրաժեշտ էր անձնական պաշտպանության համար... Ես աշխատում էի գիշերային հերթափոխով եւ երեկոյան ուշ էի տուն վերադառնում... Եւ այլն: «Ի՞նչ նկատի ունեք գիշերային հերթափոխ ասելով: Դուք մաթեմատիկայի ուսուցչուհի չե՞ք»,- ընդհատեց նա: Բայց ես հանպատրաստից հորինեցի. «Ասեմ, թե ինչ ի նկատի ունեմ ասելով, որ մաթեմատիկայի ուսուցիչ եմ: Ես մաթեմատիկա էի դասավանդում Բոսնիայում... Այստեղ ես աշխատում եմ մի ընկերությունում՝ որպես մաքրուհի... Եւ ազատ ժամանակ եմ միայն մաթեմատիկա պարապում, որ գոյատևեմ»: Ի վերջո, նա համաձայնեց: Մենք վերցրինք մեր ըմպելիքներն ու գնացինք փաթի մութ անկյունում գտնվող մի առանձին սեղանի մոտ: Տղամարդը դուրս հանեց մի ծանրոց ու ասաց. «Կիսաավտոմատ Beretta»՝ ինը միլիմետրանոց, ութ փամփուռ, կանանց համար հարմար համակարգով. հինգ հարյուր ֆունտ արժե»: Ես շփոթված նայեցի նրա կողմը, մինչդեռ նա պարզապես գլխով արեց՝ ասես ցանկանալով ասել. հոգ չէ, ամեն ինչ կարգին է: Ես հանեցի ծրարը, որի մեջ դրված էր գումարը, եւ սեղանի տակով հանձ-

նեցի նրան: Մենք խմեցինք ու բաժանվեցինք: Հենց այդ նույն օրը երեկոյան ատրճանակն ու փամփուշտատուփն արդեն դրված էին իմ խոհանոցի սեղանի վրա: Այժմ ինձ մնում էր միայն մանրակրիտ պլան մշակել:

Տարօրինակ է: Երբ ատրճանակը ձեռքս առա, այդ մուգ, սառը մետաղը կարծես ինձ սփոփեց, ինչ-որ ապահով մի զգացում ինձ համակեց, որը դժվար է բացատրել: Նախկինում երբեք ձեռքս ատրճանակ չէի առել: Եվ այժմ այս կոշտ, կոպիտ մետաղի կտորն ինձ բոլորովին այլ մարդ է դարձնում: Իմ առջև կար հստակ նպատակ, վճռականության զգացում, եւ հանկարծ թվաց, որ կյանքս դարձավ տանելի, ավելի իմաստավորվեց: Այդ օրվանից ի վեր ես այն միշտ ինձ մոտ էի պահում: Ես այն կրում էի պայուսակիս մեջ... լիցքավորված ու անվտանգ ձգանով: Եվ օրերից մի օր, երբ նա աշխատանքի էր գնում, ես նրա դռան առաջ դարան մտած սպասեցի: Գիշերն արդեն վրա էր հասել: Փողոցում ծառերի խիտ շարքը քողարկել էր փողոցային լամպերը, եւ նա սկզբում ինձ չճանաչեց: Միայն հենց որ ես նրա հետ խոսեցի մեր լեզվով ու գործածեցի նրա մակառույթը, նա ցնցվեց եւ ավելի ուշադիր իմ կողմը նայեց: Նրա աչքերում տեսա զարմանքի առաջին նշույլը, հետո՝ արհամարհանք ու վերջապես՝ վախ: Ամեն ինչ վայրկյանների ընթացքում կատարվեց: «Ժամանակն է հատուցման», - ասացի ես ու ատրճանակը հանեցի պայուսակից:

Այդ պահին նրա աչքերում վախը մթազնեց ու վերածվեց խուճապի: Նա տեղում քարացավ: Աչքերը չէր կտրում ատրճանակից: Ես էլ չզիտեի ինչ ասել...բառերը կոկորդիս մեջ մխվեցին ու սարսռացին: Հետո նրա կզակը դողաց, բարձրացրեց աջ ձեռքը՝ ասես ցանկանալով իրեն պաշտպանել, շան ձագի պես վնասուց ու... կեղտոտեց իրեն: Մայրի վրայով մի առու հոսեց դեպի ինձ, եւ սեղմեցի ձգանը: Ես թիրախավորեցի նրա աճուկը...եւ մի քանի փամփուշտ կրակեցի: Հետո երկու փամփուշտ՝ կրծքին:

Երբ նա պառկած էր սեփական մեզի մեջ ու բլրբլրում էր, ես մոտեցա նրան եւ ես մի կրակոց արծակեցի նրա ճակատին: Այս վերջին փամփուշտով ինձ թվաց, թե մութ ջրերն իմ մեջից դուրս հոսեցին...այն ամբողջ նեխած, գարշահոտ հեղուկը, որ իմ մեջ նստվածք էր առաջացրել այս ամբողջ թշվառ տարիների ընթացքում: Եվ դրանով իմ բոլոր տվայտանքները դուրս մղվեցին: Եվ ունայնությունը, իմ գոյի պատյանը, որն

Նիկոլա ԴՈՒՐԵՏԻՉ

այդքան երկար ժամանակ զրկվել էր կյանքից, հանկարծ լցվեց համապարփակ հանգստությամբ: Ես վերջապես պատրաստ էի իմ վերջին հանգրվանին, իմ վերջնական անհետացմանը, ես պատրաստ էի դառնալ ես մի անանուն կին, ես մի վկայություն անհետացումների այն հսկայական, անեզր շարքից, որի կյանքն ապականվել էր այն հարյուր հազարավոր դժբախտների պես՝ այդ թշվառ, ավերված ու տխուր երկրից, որն այլևս չկար, ինչպես ես ու Ստեֆանն այլևս գոյություն չունեինք»:

Լուսանցանշում

Եվ այսպես, հենց այս խոսքերով էր Նադա Սուլջիչը՝ NS 15739 համարի դատապարտյալը, եզրափակում իր ինքնասպանության վերաբերյալ գրությունը, որը, ըստ իրադարձությունների պաշտոնական վարկածի, երբեք էլ գոյություն չի ունեցել: Որոշված էր անգամ հրաժեշտի վերջին խոսքերը դուրս կորզել մի կնոջից, ով ինքն էլ խոստովանեց, որ ճակատագիրը նրան նետել էր անհետացման ճանապարհին ու մոռացության մատնել, սակայն նույն ճակատագրի հեգնական շրջադարձը... սա թողնենք ընթերցողի դատին: Հետաքրքիրն այն է, որ իմ, միանգամայն բնագոյային որոշումը՝ պահպանել նրա վերջին վկայությունը անհետանալուց, բացահայտում է իրերի հաջորդականությունը, քանի որ մոռացության տալը նույնպես անհետացման ձևերից մեկն է սոսկ: Եվ այսպես, գուցե անուղղակիորեն, ես խաբում եմ ճակատագրին՝ փոխելով իրադարձությունների ընթացքը, որը մենք անվանում ենք պատմություն, կամ, ավելի ճիշտ, լոկ այն, ինչն արձանագրվում է որպես պատմություն, որը, ինչպես տեսանք, երբեմն միանգամայն տարբերվում է իրականությունից ու ճշմարտությունից, պատմություն, որն իրականում տեղի է ունեցել եւ որը հաճախ ապրում է միայն այս տեսակ արձանագրություններում ու պատմումներում, որ գրի են առնվել ապագա սերնդի որոշ ընթերցողների համար: Ընթերցողի այն տեսակի, որը, համարձակվում եմ ասել, միշտ պատրաստ կլինի կասկածի ենթարկել այս արձանագրված պատմության ազնվությունն ու ճշմարտացիությունը, ինչպես կասեր այս պատմության հերոսուհին՝ մահվան ու անհետացման ժամանակագրությունը:

Այս տխուր պատմությունը, ինչպես նաեւ բոլոր այն պատմվածքները,

ՄԱՀՎԱՆ ԵՎ ԱՆՀԵՏԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

որ ոմանց համար ժողովվել ու արձանագրվել են այստեղ, հենց նրանց համար են. հուսով եմ մնացածը կասվի ավելի խաղաղ ու ավելի լավ ժամանակներում: Որպես յուրօրինակ նախազգուշացում՝ ընդդեմ մոռացության: Քանի որ մոռացության մատնել այն ամենը, ինչը կատարվել է մեր կյանքում ու մեզնից առաջ ապրած մյուսների կյանքում, ինչպես նշեցի, մահվան ու անհետացման են մի ձեռք է:

Հեղինակի մասին

ՆԻԿՈԼԱ ԴՈՒՐԵՏԻՉ

Նիկոլա Դուրետիչի (ծնվ.1949թ. Օսյեկում) ստեղծագործությունները թարգմանվել են բազմաթիվ լեզուներով՝ անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն, իսպաներեն, ճապոներեն, լեհերեն, բուլղարերեն, ռումիներեն եւ այլ լեզուներով: Նա ավարտել է Ջագրեբի համալսարանի «Անգլերեն լեզու եւ գրականություն», ինչպես նաեւ «Համեմատական գրականության» բաժինները: Մինչ օրս Դուրետիչը հրատարակել է ավելի քան երեսուն գրական աշխատություն՝ պատմվածքներ, վիպակներ, բանաստեղծություններ, ֆելիետոններ ու հուշագրություններ, այդ թվում՝ հոջուների ութ ժողովածու:

Նրա ստեղծագործություններն ընդգրկվել են բազում անթոլոգիաներում ու արժանացել բազմաթիվ գրական մրցանակների: Ավելի քան երկու տասնամյակ նա ապրել է Լոնդոնում՝ աշխատելով որպես BBC-ի ավագ պրոդյուսեր: Խորվաթիայի մշակութային ոլորտում ունեցած նշանակալի ավանդի համար արժանացել է «Red Danice hrvatske s likom Marka Marulića» մրցանակին: BBC-ից թոշակի անցնելուց հետո վերադարձել է Խորվաթիա, որտեղ շարունակում է ապրել իր ստեղծագործական կյանքով:

«Վերջին կապիտուլյացիա» (2006թ.) վեպի համար նրան շնորհվել են մի շարք պարգևներ՝ «Յոսիպ եւ Իվան Կոզարաչ» մրցանակ՝ տարվա լավագույն գիրք անվանակարգում, «Visoka žuta žita» մրցանակ՝ խորվաթական գրականության մեջ ներդրած ավանդի համար, իսկ խորվաթական գրականության ասպարեզում ամենաբարձր նվաճման համար Խորվաթիայի գիտությունների եւ արվեստի ակադեմիայի կողմից արժանացել է հատուկ մրցանակի:

Նա թարգմանել է նաեւ ժամանակակից հայտնի անգլիացի եւ իռլանդացի գրողների ստեղծագործությունները՝ Սալման Ռուշդի, Պենելոպա Լայվի, Ջուլիան Բարնս, Կածուռ Իսիգուրո, Յան Մաք Յուան, Բերիլ Բայնբրիջ, Լուի դը Բերնիեր, Հյուգո Ուիլյամս, Էդվարդ Գորդոն Քրեյգ, Դեսմոնդ Իգան եւ ուրիշներ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԻՊԱՏԻԱ ԿԱՄ ԺԱՄԱՆԱԿԻ ՎՐԵԺԸ	6
Ծաղիկ գեղեցկության եւ պտուղ իմաստության	7
Դառը թշնամի	9
Հրեաների հալածանքը	13
Օրեստեսի քարկոծումն ու Ամմոնի մահապատիժը	17
Սպանություն մեծ պահքին	18
Վերջաբան կամ՝ ժամանակի վրեժխնդրություն	19
ԼՈՒԻԶԱ ՏՐՅՈՒՔՍՈ՝ ՆԵԳՐՈՒՔԻ	23
ԷՅԼԵԱՆ ՍՈՐ ՓԱՐՈՍԻ ԱՌԵԴԾՎԱԾԸ	25
ՆՆՋԵՅՅԱԼՆԵՐՆ ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐ ՉԵՆ ԿԱՐՈՂ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼ	32
ՃՈՒԼԻԱ ԲԱՍԲԵՐԻ ԱՆԲԱՅԱՏՐԵԼԻ ՍԱՀԸ	45
ՎԱԹԵՈՒՆ ԿԱՍՐՏԻ ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ	58
ՊԱՐՈՆ ԲՈԼԴՈՒԻՆԻ ՀԱՍԲԱՐՁՈՒՄԸ	73
ՍՈՒՐԲ ԾՆԵԴՅԱՆ ՀԵՔԻԱԹԸ	80
ԶՈՒԳԱԿԵՌ ՈՒԴԵՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	90
ՍԱՀՎԱՆ ՈՒ ԱՆՀԵՏԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ	110
<i>Հեղինակի մասին</i>	<i>128</i>

Նիկոլա ԳՈՒՐԵՏԻՉ

ՄԱՀՎԱՆ ԵՎ ԱՆՀԵՏԱՑՄԱՆ
ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Անգլերենից թարգմանությունը՝
Լիլիթ ՂԱԶԱՐՅԱՆԻ

English translation by
Tamara Budimir and the author

Ստեփանակերտ 2022

Հրատ. խմբագիր՝ Յ. Ալեքսանյան
Սրբագրիչ՝ Ա. Գրիգորյան
Էջադրումը՝ Թ. Հարությունյանի
Կազմի ձեւավորումը՝ Ա.Խաչատրյանի

Թուղթը՝ օֆսեթ, չափսը՝ 60x84 1/16: Ծավալը՝ 8.5 տպ. մամուլ
Տպաքանակը՝ 500:

Տպագրվել է «Դիզակ պլյուս» հրատարակչության տպարանում
ԼՂՀ, Ստեփանակերտ, Հ. Հակոբյան 25

«ԳԵՂarm» հանդեսի մատենաշարով լույս են տեսել

- «Թատերախաղեր Արեւմտյան գրականությունից» - 2010
Իոսիֆ Բրոդսկի. «Տեղատարափի շաչյունը» - 2011
Մ. Բախտին. «Դոստոևսկու պոետիկայի խնդիրները» - 2012
«Սիրիուսի սրնգահարները»/Վ.Խլերնիկով, Ն.Գումիլյով,
Վ.Խոդասեւիչ/ - 2012
Սերգեյ Դովլաթով. «Միայնակների երթը» - 2012
Յուրի Լոտման. «Միֆ.Անուն.Մշակույթ» - 2012
Վառլամ Շալամով. «Կոլիմյան պատմվածքներ»- 2012
Ժարկո Միլենիչ. «Լենոն՝ հրաշագործի աշակերտը»- 2013
Պավել Ֆլորենսկի. «Իկոնոստաս» - 2014
Ռուս կոնցեպտուալ պոեզիա/ Գ. Պրիգով, Վ. Նեկրասով,
Լ.Ռուբինշտեյն/ - 2014
Հենրիխ Սապգիր. «Չուգահեռ մարդը» - 2014
Վասիլի Գրոսման. «Կյանք եւ ճակատագիր» - 2014
«Կամուրջների խռովությունը.
մետամետաֆորիստներ» - 2015
Ալեքսանդր Սոլժենիցին. «Մատրյոնայի կավածքը»- 2015
Անդրեյ Պլատոնով. «Չեւենգուր. Գուրբ.
Պատմվածքներ» - 2015
Արդի ռուսական վերլիբո (անթոլոգիա) - 2015
Չինաստանի մշակույթի քրեստոմատիա - 2015
Ջիդի Մաջիա. «Հրեղեն խոսքեր» - 2015
Մա Քայ. «Սրտի արձագանքներ» - 2015
Եվգենի Վոդյազկին. «Լավր» - 2015

- Քայ Տյանսին. «Խաղաղ կյանքի երգը» - 2015
Ռուս ալլախոհական պոեզիա (անթոլոգիա) - 2015
Չինական մտքի եւ մշակույթի հիմնական
հասկացություններ (հատոր 1) - 2016
Յու Ջիան. «Անձրեւից պատսպարվող թռչունը» - 2016
Պավել Բասինսկի. «Լեւ Տոլստոյ.
Փախուստ դրախտից» - 2016
Չժան Յզի-յան. «Երազ ծովի մասին» - 2016
Վան Ջենչկի. «Երիտասարդ վանականի սիրո
պատմությունը» - 2016
Լյուդմիլա Պետրուշենսկայա. «Մեր. երջանկություն.
ռեքվիեմ» - 2016
Անդրեյ Բելի. «Պետերբուրգ» - 2016
«Դիկոռոսներ. Անհայտ պոետների ապաստան»
(անթոլոգիա) - 2016
Ռուս մինիմալիստներ (անթոլոգիա) - 2016
Իձյե Թան. «Կոնֆուցիականությունը, ուղղալականությունը,
դատսիզմը, քրիստոնեությունը եւ չինական
մշակույթը» - 2016
Սյուն Շի-ի. «Երկնային կամուրջը» - 2016
Չինական մտքի եւ մշակույթի հիմնական
հասկացություններ (հատոր 2 եւ 3) - 2016
Դոնգ Քիանգ. «Ամուսնություն» - 2017
Դոնգ Քիանգ. «Կացարաններ» - 2017
Ինգեբորգ Բախման. «30-րդ տարին» - 2017
Ջիդի Մաջիա. «Ընձառյուծից մինչեւ Մայակովսկի» - 2017
Չինական մտքի եւ մշակույթի հիմնական
հասկացություններ (հատոր 4) - 2017

Անդրեյ Վոլոս. «Վերադարձ Փանջիռուդ» - 2017

Դոնգ Քիանգ. «Թաղում» - 2017

Դոնգ Քիանգ. «Փառատոներ» - 2017

Դոնգ Քիանգ. «Ուտեստներ» - 2017

Սյաո Յյան. «Վիշապի մորուքներն ընդդեմ
նախագծերի» - 2017

Ուան Յուոլիան. «Մերձակցության աստիճաններ» - 2017

Ֆյոդոր Սոլոգուբ. «Չնչադելը» - 2018

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական

հասկացություններ (հատոր 5) - 2018

Ու Չուն. «Չինական մշակույթ. փիլիսոփայություն» -2018

Ուեյսի Սյուրն, Սյուն Շու. «Չինաստանի յուրահատկու-

թյունները: Չինաստանի համաշխարհային

ժառանգությունը»- 2018

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական

հասկացություններ (հատոր 6) - 2018

Ադի ձայնը (20-րդ դարի հետադարձական թվականների
սերնդի չին գրողների պատմվածքներ) -2019

20-րդ դարի ռուսական պատմվածք (անթոլոգիա) - 2019

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական

հասկացություններ (հատոր 7) - 2019

Գվինեթ Լյուիս. «Քառսի հրեշտակները» - 2020

Պավել Բասիմսկի. «Լեւ Տոլստոյ. Ազատ մարդը» - 2020

Յերինգ Նորբու. «Փրկված գառը» - 2020

Չժան Յավեն. «Դարերի կանչը» (Մտորումներ Հոնկոնգի

մասին. իրական պատմություն) - 2020

Կոնֆուցիոս. «Չրույցներ» - 2020

- Չինական մտքի եւ մշակույթի հիմնական
հասկացություններ (հատոր 8) - 2021
- Չինական մտքի եւ մշակույթի հիմնական
հասկացություններ (հատոր 9) - 2021
- Մարիա Գրեչ Գանադո. «Երիզվածք» - 2021
- Էլիզաբեթ Քրիստին Յոկուլսդոտիր. «Մեր, նյարդերի քայքայում.
ոչ մի պար ձուկ-քարի վրա» - 2021
- Ալեքսեյ Վառլամով. «Մտագայլը» - 2021
- Միխալ Այվագ. «Այլ քաղաք» - 2021
- Իմանուել Միֆսուդ. «Յուտա Հայմ» - 2021
- Խոսեֆա Սարիոնանդիա. «Բանտեր և աքսորներ» - 2022
- Չինական ավանդական բժշկության հիմնական
հասկացությունների հանրագիտարան (հատոր 1) - 2022



Ոգի-Նաիրի
Vogi-Nairi

www.vogi-nairi.am
Էլ. ասոցե՝ vogi.nairi@mail.ru
հեռ.՝ +374 97252323, +374 94259161